**Ազգ**
Azg
10 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2021 ՈՒՐԲԱԹ 33(5673)
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ISSN: 1829-1651

## Մեր երկրի անունից էլ հրաժարվեցինք

**Աստիճանաբար պարզվում է, թե ինչպես ենք պարտվում. Պաղթանակից հետո Ադրբեջանը չի հանգստանում՝ շինհրապարակ է հասկաաես այն վայրերում, որ նվաճել է 2020-ին, իսկ Հայաստանը, բարեբախտաբար դեռեւս ոչ գրավոր, կորցրած տարածքների բեռից ազատագրված ասես, պատրաստ է ավելացնել դրանց թիվը: Հանրությունն էլ համաձայն է: Իբր: «Հայաստանը խաղաղություն է ուզում», ձեւակերպում են այնպես, ասես պատերազմ հրահրողն ինքն է: Բռնակալ Ալիեւը Ֆիզուլիի «միջազգային» օդանավակայանը գործարկեց: Սեպտեմբերի 5-ին Բաքվից «Ղարաբաղ» խորհրդանշական օդանավով առաջին թռիչքը վերահաստատեց, որ հայկական Վարանդան նվաճել են: Իսկ մեր դեմոկրատ վարչապետը կարծես ադրբեջաներեն է սովորում՝ ամենայնդեպս տեղանուններից է սկսել: Երեւի նրան ունկնդրելով է հանրությունը վճռել, որ Fly Arna-ն ազգային մեր փոխադրողին տրվող ամենագունեղ ձեւն է՝ առաջարկված 500 տարբերակից, ինչպես սեպտեմբերի 6-ին ծանուցում է aerotelegraph-ը: Ո՞վ կասի, թե Armenian National-ի առաջին երկու տառերից կազմված այս անունը մե՛ր երկրի մասին է հուշում: Ալիեւը պինդ բռնել է խորհրդանիշներից, ազգ է կերտում: Փաշինյանը՝ հրաժարվում է: Դեմո՞ս, թե՞ օխլոս: Իր սելֆին են՝ երկուսն էլ:**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Կարսի նոր պայմանագի՞ր. Ի՞նչ ենք անում մենք

Գիտակից եւ զգայուն բոլոր հայերը զգում եւ գիտակցում են, որ երբ հայաստանյան ներքաղաքական կյանքում աղմկահարույց իրադարձությունների նոր կուտակումներ են պատահում– ձերբակալում, կալանավորում, դատական հետապնդումներ եւ այլ– ապա անպայման արտաքին կարգի զարգացումներ են պատահելու մեր երկրում եւ տարածաշրջանում: Քաղաքական յուրօրինակ կամուֆլաժ, որով փորձ է արվում հասարակության աչքի համար անթափանց դարձնել կատարվողն ու մանավանդ կատարվելիքը:

Արեւմուտքը, ի դեմս ԱՄՆ-ի, Ռուսաստանին հասկացնել է տալիս, որ նպատակ չունի նրան թողնել մենակ թիավարել այսպես կոչված Հարավային Կովկասում, եւ որ նոյեմբերինյան հայտարարությունն ու դեկտեմբերյան պայմանավորվածությունները չեն կարող կյանքի կոչվել առանց իրեն եւ իր պայմանների:

Եվրոպան, ի դեմս Ֆրանսիայի, խոստումնալից ներդրումների եւ Մինսկի խմբի ձեւաչափին վերադառնալու հեռանկարով եւ նոյեմբերինյան հայտարարության սուսկ զինադադար լինելու շեշտադրմամբ փաստորեն փրկօղակ է գցում խեղդվող Հայաստանի առջեւ, որին կառչելու ուժը պակասում է մեզ առանց (ո՞վ հեգնանք) ռուսական օգնության:

Ռուսաստանը, որը ձգտում է ամեն գնով ամրապնդել ու տեւականացնել իր ներկայությունը մեր տարածաշրջանում՝ նույնիսկ հանդուրժելով ադրբեջանական ոտնձգությունները, որոնք առ ոչինչ են դարձնում տարածաշրջանային խաղաղության ձգտող նախկին բոլոր պայմանավորվածությունները, իր արտգործնախարար Լավրովի բերանով խոսում է Հայաստան-Թուրքիա մերձեցման (rapprochement) մասին, չթաքցնելով, 100 տարի անց, տարածաշրջանում դարձյալ գլխավոր բրոքերը լինելու իր հավակնությունը՝ միշտ ի վնաս մեզ:

Իրանը, որ թոհուբոհային այս զարգացումների ֆոնին զգուշավոր վերապահի դերն է ստանձնել, իրականում, ինչպես մատնանշում է մեր իրանագետ աշխատակիցը կողքի սյունակում, խիստ մտահոգված է տարածաշրջանային կոմունիկացիաների վերագործարկման ու նորերի կառուցման ծրագրերում իրեն շրջանցելու միտումներից: Դրա ապացույցներից մեկը, ամենաթարմը, նախորդ շաբաթ Կապանի հատվածում ադրբեջանական խուլիգանությունն էր, որի հետեւանքով ոչ միայն ներհայկական, այլեւ Իրան-Կովկաս միջազգային մայրուղու քառօրյա փակումն էր՝ Թեհրանին ուղղված անխոս սպառնալիքով: Եվ այս առումով հասկանալի է, որ Իրանն Ադրբեջանին, արդեն 2-րդ անգամ, առաջարկում է իր տարածքով մայրուղի կառուցել դեպի Նախիջեւանի Ինքնավար հանրապետություն, որից, ի դեպ, վաղուց ոչինչ չի մնացել հանրապետությունից, այն էլ՝ ինքնավա՜ր հանրապետությունից, ոտնահարելով Կարսի տխրահռչակ պայմանագրի նաեւ այդ կետը:

Գալով Թուրքիային, որտեղից Նիկոլ Փաշինյանը, բացի շողոմ խոսքերից, միայն իրեն տեսանելի «դրական ազդակներ» է որսում, Անկարան «կայուն խաղաղության եւ առեւտրատնտեսական բարգավաճման» իր տարբերակն է առաջ քաշում, մեկ կողմից օգտագործելով Ադրբեջանը որպես պրոքսի (proxy), մյուս կողմից ոչինչ չանելով 28 տարի առաջ իր իսկ փակած ճանապարհային հանգույցներից որեւէ մեկը վերաբացելու ուղղությամբ, ներառյալ Կարս-Գյումրի երկաթուղին, որը կանոնավոր աշխատում էր նույնիսկ «երկաթյա վարագույրի» տարիներին... Անկարայի ուզածը, այժմ եւ միշտ, տարածքային ամբողջականության համաձայնագրի ստորագրումն է, դրա տակ հասկանալով ոչ միայն Ադրբեջանի (նկատի ունի Արցախը), այլեւ իր իսկ սահմանները: Այլ խոսքով՝ պահանջում է հրաժարում պահանջատիրությունից՝ թե՛ տարածքային եւ թե՛ Ցեղասպանության փաստի ընդունման հիմքով, թեեւ հաստատ գիտի, որ ներկա պահին Հայաստանը ի վիճակի չէ որեւէ նախապայման ներկայացնելու, ինչպես չէր՝ 2009-ին, երբ պատրաստվում էին Ցյուրիխյան պրոտոկոլները, որոնք Անկարան մերժեց ստորագրել՝ «մեղքը» գցելով, իբր, Բաքվի վրա:

Իրերի այս կացության մեջ ի՞նչ ենք անում մենք, ոչ թե ի՞նչ կարող ենք, այլ՝ ի՞նչ ենք անում՝ կառավարություն, ընդդիմություն եւ հանրություն: Շարունակել միմյանց մեղադրել գործած ու չգործած հանցանքների համա՞ր, որի ժամանակը հաստատ գալու է: Շարունակել հոխորտա՞լ, թե ժողովուրդը մեզ մանդատ է տվել, երբ նման մանդատ, համեմատաբար նվազ մեծությամբ, տրվել է նաեւ ընդդիմությանը: Բայց ի՞նչ մանդատ. ամեն ինչի համա՞ր, անօրինականությունների, տարածքներ զիջելու, կոռուպցիան շարունակելու համա՞ր: «Լայնամասշտաբ ու գունագեղ տոնակատարություններ» կազմակերպելու, քառօրյա արձակուրդային դժժոցով մեր զոհերին ու գերեվարվածներին «զվարճացնելու» համա՞ր: Հարազատ կորցրած մարդկանց անգամ զուռնադհոլ նվագել տալու համա՞ր:

Կարսի մի նոր պայմանագրի առաջ ենք կանգնած, Հայաստանը, Արցախն ու Սփյուռքը: Մինչդեռ Երրորդ հանրապետության հիմնադրման 30-ամյակի օրը պետք է լինի իսկապես լրջանալու պահ, պահ՝ ճշմարտախոսության, բացախոսության, սխալներն ընդունելու, նոր սխալներ թույլ չտալու, հանրությանը չխաբելու, վտանգները խորաչափելու, անթույլատրելիի սահմանները հստակեցնելու եւ դրանք պարտադիր դարձնելու: Պահը՝ մեր պետականությունը վերահաստատելու, ամրացնելու եւ հզորացնելու, լրջությամբ, խոհեմությամբ եւ արժանապատվությամբ:

Վերջին իրադարձությունները, ձերբակալություններն ու խժդժությունները հուշում են, որ, Վ. Թեքեյանի բառերով, «Ահավոր բան մը այնտեղ կը կատարուի մութին մէջ»...

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Նժդեհի ուրվականի հույսին

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանում քաղաքական կյանքի կառուցման մեխանիզմը արդեն տասնյակ տարիներով չի փոխվում եւ հենց հիմա աշխատում է այնպես, ինչպես քսան տարի առաջ: Մի փողատեր հայտարարում է, որ կուսակցություն է ստեղծում, ու սկսվում է գործընթաց, իշխանությունը փոխանցվում է մեկ կամ մի քանի օլիգարխի ֆինասավորած քաղաքական մեծամասնությանը, որի արդյունքը մենք մի քանի անգամ տեսել ենք՝ հիվանդ, օլիգարխիկ քաղաքական դաշտ, որը կարող է ստեղծել միայն օլիգարխիկ պետություն: Այդպես ժամանակին իշխանությունը փոխանցվել է ե՛ւ Ռոբերտ Քոչարյանին, ե՛ւ Սերժ Սարգսյանին՝ հարակից փողակառույց կուսակցությունների հենքով, եւ, մի փոքր միջնորդավորված եւ իբր ժողովրդային աջակցության քողով պատած՝ Նիկոլ Փաշինյանին, որն անշուշտ, ունի նեղ պահին վրա հասնող իր տրտի օլիգարխները, ասել է, թե այս իշխանությունը եւս օլիգարխներին չպատասարկել չի կարող, մանավանդ՝ ֆինանսական սուղ հնարավորությունները ավելի խոցելի են դարձնում նրան մեր ասած տեսանկյունից էլ:




Իշխանության փոխանցման եւ տնտեսական լծակների պահպանման առումով՝ այս մեխանիզմը գործել է անխափան արդեն երեսուն տարի, երբեմն որոշ դետալային փոփոխություններ կրել ըստ ժամանակի թելադրանքի, բայց խորքում մնացել քաղաքական իշխանություն ձեւավորելու միակ ու ամենաավտորիտար եղանակը, որքան էլ բոլոր նոր եկող իշխանությունները ծածկվեին ընտրություններ անունով միջոցառումներով ու նրանց արդյունքներով, որոնք այդ ավտորիտարիզմի կցորդ միջոցներով եւ գործիքներով էին (են) ստեղծվում, ընդհուպ հարմար (սեփական եւ վերահսկելի) ընդդիմության ձեւավորումը: Բացառություն չէին նաեւ վերջին ընտրությունները:

⇨2

## Հայաստանը եւ Իրանի տարանցիկ ճանապարհների առաջնահերթությունները

### *Պարսից ծոց-Սեւ ծով Հայաստանով անցնող տրանզիտային ճանապարհի ճակատագիրն անորոշ*

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

**Իրանագետ,**
**Իրանում ՀՀ նախկին դեսպան**

Իրանի Մեջլիսի հետազոտությունների կենտրոնը հայ-ադրբեջանական 44-օրյա պատերազմի եւ դրա հետեւանքների մասին վերջերս հրապարակած զեկույցում մասնավորապես նշում է, որ Իրանի տարածաշրջանային մրցակիցը համարվող Թուրքիայի, ինչպես նաեւ Իրանի ոխերիմ թշնամու՝ Իսրայելի դերակատարության աճն ակնհայտորեն բացասաբար է անդրադարձել Իրանի ազգային անվտանգային շահերի վրա:

Մանրամասն անդրադառնալով Արցախյան առճակատման ակունքներին ու դրա պատմությանը, զեկուցագրի հեղինակները նշում են, որ Ադրբեջանի Հանրապետությունն իր տարած ռազմական հաղթանակի շնորհիվ թեեւ կարողացել է «ազատագրել» գրավյալ տարածքներն ու հաղթահարել իր հոգեբանական բարդույթները, սակայն հաղթանակի հարցում Անկարայի աննախադեպ աջակցության պատճառով թուրքերն ազդեցության մեծ լծակներ են ձեռք բերել Բաքվի իշխանական համակարգում: Իսկ եթե Հայաստանի տարածքով Ադրբեջանից դեպի Նախիջեւան թուրքերի երազած միջանցքը իրականություն դառնա, նշված է զեկուցագրում, անկասկած այն Թուրքիայի համար կվերածվի էներգակիրների տարանցման գլխավոր մայրուղու, որի պատճառով էլ Իրան-Հայաստան սահմանը կկորցնի իր երբեմնի նշանակությունը: Բացի այդ, միջանցքի գործարկումը կարեւոր քայլ կհանդիսանա Թուրքիայի երազած «Մեծ Թուրքիստանի» ստեղծման ճանապարհին, ինչը կզրկի Իրանին Կենտրոնական Ասիայում եւ Կովկասյան տարածաշրջանում էներգակիրների տարանցման հարցերին մասնակից դառնալու հնարավորություններից, - եզրակացնում են զեկույցի հեղինակները:

⇨5

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Ան-սահման Հայաստան

Մեր երազներուն մէջ անսահման էր Հայաստանը: Ինչո՞ւ երազներուն մէջ, իսկապէ՛ս, ըստ մեր Հայոց պատմութեան դասագիրքերուն՝ մէկ ծայրը արեւելք, միւս ծայրը հարաւ- արեւմուտք, մինչեւ Պաղեստին, վկա՛յ Խորենացին: «Սահման քաջաց զէնն իւրեա՛նց», վկա՛յ Եղիշէն: Յետոյ կծկուեցաւ, կծկուեցաւ, դարձաւ ափ մը, «շնորհիւ» թուրքին, պարսիկին ու ռուսին: Մեծցանք, սորվեցանք, որ այլեւս Արարատը մերը չէ, մերը չեն նաեւ Սիփանն ու Վարագան, Վանայ լիճն ու Ուրմիան, Եփրատն ու Տիգրիսը, Անին, Կարսն ու Արտահանը... Մէկ խօսքով՝ ամբողջ Արեւմտեան Հայաստանն ու Պարսկահայաստանը: Եթէ թուել փորձենք «մերը չեն»-ները՝ օրը գիշեր կ՚ըլլայ:

Մենք մեզի համոզեցինք, որ Բագրատունեաց հարստութեան կորուստէն հազար տարի ետք ու Կիլիկեան թագաւորութեան անկումէն վեցհարիւր տարի ետք, լրիւ անէացած Հայաստան մը վերագտանք, նախկինին մէկ տասներորդը, սակայն մե՛րն էր եւ «հեչէն լաւ է» ըսինք ու սկսանք փայփայել մինի Հայաստանը, միշտ յուսալով, որ օր մը կը յաջողինք ընդարձակել զայն, այնքան ատեն, որ «Ազատ, անկախ եւ միացեալ» Հայաստանի կոչը միշտ կը հնչեցնենք: Ձեռքերնէս ուրիշ բան չի գար, միայն կը հնչեցնենք մե՛ր ականջներուն հաճոյք պարգեւելու համար:

Ու ահա՛ քեզի նորութի՛ւն՝ մեր այս փոքրիկ Հայաստանը, որ անսահման չէ, այլ՝ ան-սահման է եղեր, ան-սահման... այսինքն սահման չունի, կամ ունի՞ արդեօք, օրինաւոր, վաւերացուած քարտէսով ՄԱԿ-ի կողմէ, հաւա՛նաբար, սակայն, ինչո՞ւ հիմա ելեր են նոր «սահմանազատում եւ սահմանագծում » պիտի ընեն, ան ալ մեր սահմաններէն ներս թշնամին ոտք դնելէն ետք:

Այսպիսի վիճակներ, վստահ եմ, ուրիշ երկիրներ ալ ունին, օրինակ՝ Սուրիան Թուրքիոյ հետ, քանի պաշտօնապէս Ալեքսանտրէթի սանճաքը կցուեցաւ Թուրքիոյ, Սուրիան օրինական սահմանազատում չէ ըրած ցարդ, որպէս պահանջատէրը Թուրքիոյ բռնակցուածին, որուն պատճառով թրքական բանակայիններ ներթափանցումներ կը կատարեն: Ձգենք ուրիշները իրենց հարցերով եւ խօսինք մեր թարմ, կոտտացող վէրքին մասին, որ նոր մէջտեղ ելաւ ու ահաւոր ցաւ պատճառեց:

Եթէ Ատրպէյճանը իրաւունք ունի թրքական անուններ կրող գիւղերը իրը նկատելով պահանջել եւ զաւթել, ապա Հայաստանը ամբողջ Արեւմտեան հայաստանը պահանջելու է, մասնաւորաբար ռուսերուն կողմէ Թուրքիոյ նուիրուած Կարսը, Արտահանը, Իգտիրը... Սակայն պահանջողը ոչ միայն իրաւասու ըլլալու է, այլեւ՝ զօրաւոր: Մարդիկը մտեր են մեր հողերը, քշեր են հողատէրերը, կրակեր, վիրաւորեր ու սպաններ են, գողցեր տարեր են տաւարները ու իրենց «ետ դարձէք ձեր եկած տեղերը» ըսող չկայ: Մենք միայն կը բողոքենք, վարպետ ենք բողոքելու մէջ, ուրիշ բան ըրած չունինք: Սահմանապահ կարծուած ռուսական բանակայիններն ալ լուրջ ու գործնական բան մը ըրած չունին, այնպէս որ երկրի աջէն, ձախէն, վերէն, վարէն այդ ոտնակոխուած տարածքները կուլ պիտի երթան թշնամիին, յատկապէս երբ մեր իշխանութիւնը հաշտուողական-բարեկամական համաձայնագիր ստորագրէ թշնամիներուն հետ:

Ան-սահման մեր երկիրը պաշտպանելու համար որպէս «զէնք» ունինք անսահման տարակարծութիւններ, անսահման իրաւամերժութիւններ, անսահման քէներ, ոխեր, հայհոյալից լեզուներ, դեռ անսահման ինչե՜ր ու ինչե՜ր: Շա՜տ անսահման բաներ ունինք, սակայն միակ անսահման բանը, որ այլեւս սկսած է վնասել մեզի, այդ ալ մեր անսահման համբերութիւնն է:

# Նժդեհի ուրվականի հույսին



⇨1 Իսկ այժմ ծավալված մի գործընթաց վերը մեր ասածի լավագույն ապացույցն է: Ահա՝ **Մանե Թանդիլյանը** եւ **Մեսրոպ Առաքելյանը** (նախկին սոցապ նախարարներ) «Ապրելու երկիր» անունով կուսակցությունն են ձեւավորում նույն սկզբունքով. մի մեծահարուստ՝ **Ռուբեն Վարդանյանը** հայտարարել է Հայաստանում քաղաքականություն մտնելու մասին, տալիս է փողը, ու, այ քեզ հրաշք, ձեւավորվելու է Հայաստանը փրկող հերթական հրաշք կուսակցությունը: Բնականաբար՝ այդ կուսակցություն կգնան ոչ թե իրոք Հայաստանի ապագայով մտահոգ, նախկին ու ներկա իշխանությունների ճանապարհով չգնացող, իրոք կարողունակ ուժերը, որոնց համախմբմանն ու օրակարգ թելադրելուն տողերիս հեղինակն իրոք սպասում է, այլ տարբեր պատեհապաշտներ, որոնք միշտ փողի հոտն առած՝ վխտում են նոր ստեղծվող հերթական փողակուսակցության շուրջը, երկրի հերն էլ անիծած:

Իհարկե, Ռուբեն Վարդանյանի եւ նրա՝ Հայաստանում իրագործվող ծրագրերի դեմ ոչինչ չունենք, հարցը քաղաքական դաշտ ձեւավորելու այդ սկզբունքի մասին է, որը չի տանում ոչ մի տեղ: Մանավանդ՝ տարածաշրջանային մեծ խաղացող պետություններում բիզնեսներ ունեցող Վարդանյանի պարագայում եւս ոչ ոք վստահ չէ, իսկ ավելի ստույգ՝ համոզմունք կա, որ նա ազատ չէ այդ պետությունների թելադրանքներից (թող ների մեզ Ռուբեն Վարդանյանը, Հայաստանն այն վիճակում է, որ մեզնից ամեն ոք պետք է զգուշանա, զգուշացնի ու առանց ֆինանսական ուղղորդման գտնի ճշմարիտ ուղին, ու մեր դիրքորոշումն ամենեւին անշնորհակալություն չէ):

Դե հիմա Մանե Թանդիլյանն էլ այլեւս վստահություն չի ներշնչում, քանի որ պատգամավորական մանդատի վայր դնելն առողջական խնդիրներով պատճառաբանող Թանդիլյանն այդ պահին դեռ վստահություն էր ներշնչում (իհարկե ոչ մեզ, քանի որ գիտենք ամեն մեկի ծագումնաբանությունն ու քաղաքական դաշտ իջեցնողին), սակայն այն պահից, երբ նա Արցախում նախարար դարձավ՝ պատերազմից հետո Արցախին օգտակար լինելու պատճառաբանությամբ, ու առողջությունն էլ կարծես դրան չէր խանգարում, միանգամից բոլորին տեսանելի եղավ, որ ով Մանե Թանդիլյանին գործուղել է քաղաքական դաշտ, դեռ այդ ֆիգուրից չի քամել այն բոլորը, ինչ կարող էր քամել:

Սակայն այս եղանակով քաղաքական դաշտի իմիտացիան, հին մեթոդների նորովի կիրառումը ոչ թե կարող է լուծել հետպատերազմյան Հայաստանի խնդիրները գոնե քաղաքական դաշտի վերբեռնման առումով, այլ, ընդհակառակը, խորացնել հիվանդությունն ու անբուժելի դարձնել՝ լուրջ վնասելով երկրին: Մենք շարունակում ենք զարմանալ, որ կարող նոր սերունդը, երկրին իրոք նվիրված միջին տարիքի մարդիկ համախմբման, անցյալ ու ներկա իշխանություններին երեք մասի կոմբինացիա ցույց տալու որեւէ լուրջ փորձ չեն անում, ոտքի չեն կանգնում պոպուլիզմից հեռու այն ազգային ուժերը, որոնք հարցադրում կանեն իշխանությանը, թե այդ ի՞նչ գնով ենք Թուրքիայի հետ հարաբերություն ուզում լավացնել, ինչից եք ուզում հրաժարվել, ուզո՞ւմ եք մոռանալ ցեղասպանված միլիոնուկես հայերի վրեժը եւ զիջե՞լ նրանց դատը, ուզում եք հրաժարվել հայերի հողային ու նյութական հատուցումների պահանջների՞ց, Թուրքիայի տարածքային ամբողջականություն ճանաչել այն դեպքում, երբ Թուրքիան ուրիշի, այդ թվում հայերի հողերի վրա կառուցված պետություն է: Ուզում եք Արցախի խնդիրն ամենավատթարագույն ձեւով փակե՞լ՝ առեւտուր անելով դարավոր թշնամու հետ, մի՞թե կասկածում եք, որ դարավոր երկգլուխ թշնամին զիջումներից հետո անվերջ նոր զիջումներ է պարտադրելու՝ ժպտալով դեմքից եւ հոշոտելով վարագույրի հետեւից, այլապես Հայաստանի քթի տակ, Լաչինի բերանին թուրք-ադրբեջանական զորավարժություններ չեն կազմակերպի: Ախր դուք նման եք էն մարդուն, որի ընտանիքին մորթել են, իսկ նա վրեժ լուծելու փոխարեն՝ սակարկում է, թե մորթված ընտանիքի ամեն անդամի դիմաց որքան է վճարելու մորթողը:

Ահա եւ մեզ հարկավոր է նոր մարդկանց այն դասը, որը ազդեցությունների ենթակա չէ եւ անսակարկ կբարձրացնի հայրենիքի խնդիրները, կկանգնեցնի արատավոր շրջանի պտույտը, որի անունը իշխանությունը դրել է խաղաղության դարաշրջանի սկիզբ, բայց իրականում՝ մեր բոլոր իրավունքներից, պատմական հիշողությունից, միջազգային դատերով մեր դարավոր թշնամուն մեր պահանջները ներկայացնելուց: Իսկ ո՞վ դա թույլ կտա՝ սփյուռքի հայերը դա թո՞ւյլ են տալու, Կարսում իմ պապի մորն այրած թուրքին ես ներելո՞ւ եմ հանուն առեւտրի: Ունեցե՞լ ենք, չէ՞ , Ազգային միացյալ կուսակցություն բռնապետական կարգերում, ինչո՞ւ դա հնարավոր չէ այսօր:

Շարունակում եմ պնդել, որ Հայաստանի խորհրդարանական ընդդիմությունը պետք է վայր դնի մանդատներն ու ապալեգիտիմացնի իշխանությանը՝ նրան զրկելով պողպատե մանդատի անվան տակ խաղաղության դարաշրջան անվանյալ ոչ հայանպաստ որոշումներից առաջ, եթե ինքն էլ ընդհանուր խաղի մասնակից չէ, գոնե այդպես կկարողանա ինչ-որ կերպ կասեցնել դեպի անդունդը գլորվող գնացքը:Այլապես կարելի է մտածել, որ խորհրդարանում բղավոց-ճղավոցը, տաք կրքերն ինչ-որ սցենարի մաս են, ինչ բովանդակություն էլ նրանք ունենան, որը զբաղեցնում է մարդկանց, մինչեւ մեկ կենտրոնում գցված վատթարագույն սցենարն իրականանա:

Թուրքերի հետ հարաբերությունների՝ Հայաստանի համար կորուստ-կորստի հետեւից բերող նախագծումը կարող է ճաք տալ, եթե պատասխանատվությունն ընկնի միայն իշխանական մեծամասնության վրա, այնտեղ էլ կան ի վերջո մարդիկ, որոնք հասկանում են, որ սերունդների անեծքի տակ ընկնել չեն կարող: Ընդհանրապես էլ՝ իշխանությունն ու նրա ղեկավարն այս դեպքում գուցեեւ սթափվեն, քանի որ ծանր է ու համարյա անտանելի միայնակ պատասխանատվության բեռը: Եթե Հայաստանում ծավալվող աղմկոտ բոլոր իրադարձություններին նայես այս տեսակետից, միգուցե գտնվեն շատ մարդիկ, որոնք համարեն, որ պետք է կանգնեցնեն ոչ ճիշտ ուղով գլորվող անիվը:

Այս ֆոնին անհասկանալի է, թե ինչ տոն է ուզում նշել իշխանությունը սեպտեմբերի քսանմեկին, ինչ անկախության ու պետականության տոն, երբ սահմաններդ այլ երկրի զորք է պաշտպանում, գերիներիդ Բաքվի բանտերում տանջում են, ու դու չես կարող մի նոտա հղել տանջողին կամ իբր անվտանգություն ապահովող գործընկերոջդ՝ անվերապահ ու առանց նախապայմանի պահանջելով վերադարձնել բոլոր գերիներին անխտիր, այլապես...

Հա, այլապեսի համար կամք է պետք, այլապեսի համար քաջություն է պետք, իսկ դրանցից ավելի կարեւորը երկիրդ կեղծ խաղաղասիրությունից բարձր դասելն է: Ի՞նչ անկախություն ու պետականություն է, երբ բոլոր որոշումներդ կայացվում են այլ երկրի (երկրների) իշխանական կուլիսներում, երբ տասնհինգ հազար զոհ ու վիրավոր ունես, երբ զոհերի տարին չի լրացել, իսկ դու առաջարկում ես փուչիկ ու պարբռնոցի: Եթե հարազատիդ տարելիցը մեկ շաբաթից է, դու մեկ շաբաթ առաջ հարսանիք կանե՞ս ու կպարե՞ս, էս ի՞նչ խելք է, մեկը չկա իշխանական կոհորտայում, որ ճիշտ որոշումներ հուշի, լավ, էս աստիճանի պատանեկան մոտեցումնե՞ր: Թե ասա՝ ինչներիդ վրա ե՞ք ուզում ուրախանալ՝ դեռ վերջնական թիվ չպարզած պատերազմի զոհերի՞, քովիդից մահացած վեց հազար մարդու հարազատների դժբախտությա՞ն, թե Բաքվում կտտանքների ենթարկվող հայ երիտասարդների տանջանքների ջգրու: Ավելի լավ չէ՞ր այդ օրը նոր սպառազինությունների շքերթ կազմակերպեիք՝ ցուցադրելով պետականության ու սուվերենության պաշտպանին, եթե ունեք, իհարկե, նոր սպառազինություններ: Այդպես կհասկացնեիք թշնամուն էլ, բարեկամին էլ, որ մենք դույզն-ինչ չենք զիջելու մեր սուվերենությունից, մեր անկախությունից, մեր ինքնիշխանությունից: Բայց ի՞նչ եմ ասում՝ պարտադրված եռակողմ թուղթն ինքնին խոսում է այն մասին, թե որքան սուվերեն ենք, որքան անկախ ենք, եւ որքան ամուր է մեր պետականությունը: Կամ ո՞վ կպատասխանի մեր ներքին տրոյական ձիերին, որոնք սպրդում են այս ու այն ծակից ու թաքցված-բացահայտ խոսում, չեմ չափազանցնում, Ռուսաստանի, Բելառուսի հետ ընդհանուր պետությունից (այ, Նժդեհի ուրվականը երազում ձեր հերն անիծի)...

**ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ**

# Ադրբեջանը թաքցնում է զոհերի ու զինտեխնիկայի կորստի իրական թիվը

44-օրյա պատերազմի ընթացքում ու դրանից հետո Ադրբեջանը մեկ անգամ չէ, որ հայտարարել է՝ օգտագործել է իր զինանոցի 100 տոկոսը, ինչի մեջ մտնում են Իսրայելից, Բելառուսից, Ռուսաստանից ու Թուրքիայից ձեռք բերված զենքերը: Ադրբեջանը, կարճ ասած, պատերազմում էր հնարավոր ամեն ինչով՝ սկսած վարձկաններից, ավարտած անօդաչու թռչող սարքերով ու հեռահար հրթիռներով: Պատերազմից գերթե մեկ տարի անց սակայն հստակ չէ, թե մարդկային ու զինտեխնիկայի ինչ կորուստներն է ունեցել Ադրբեջանը: Ներկայացվող թվերն ուղղակի հակասում են ռազմարվեստի կանոններին մի պարզ տրամաբանությամբ. ի տարբերություն պաշտպանվող կողմի՝ հարձակվող կողմի զոհերն ու կորուստները գերազանցելի են լինում մի քանի անգամ:

Ադրբեջանական պաշտոնական աղբյուրների հայտարարությունը, թե պատերազմի ժամանակ 2500-3000 զոհ են ունեցել, ադրբեջանագետ **Գառնիկ Դավթյանն** է կասկածի տակ դնում: Հայաստանից այդքան տարածքներ օկուպացնելը, բացատրում է, շատ ավելի թանկ պետք է նստեր հակառակորդի վրա: «Պատերազմի ավարտից անմիջապես հետո ադրբեջանական կողմը հրապարակում էր տարածել, որ 44-օրյա պատերազմի ժամանակ 9-11 հազար զոհ են տվել, ժամերի ընթացքում սակայն այդ հրապարակումը հանվեց բոլոր տեղերից ու նախարարությունը շտապեց հերքում տարածել՝ պատճառաբանելով, թե տեխնիկական վրիպակ է եղել: Միջազգային վերլուծական տարբեր կենտրոններ զոհերի ավելի մեծ թվի՝ 20-25 հազարի մասին են խոսում: Բացի այդ՝ վերլուծելով մեր տղաների պատմած դրվագները, թե ռազմի դաշտում ադրբեջանական բանակի մահացած քանի-քանի զինվորականների դի են տեսել՝ կարելի է եզրակացնել՝ հակառակորդն ուղղակի թաքցնում է զոհերի իրական քանակը: Ոչ թե 3, այլ 9-11 հազար զոհերի մասին վկայող եւս մեկ փաստ կա: Ադրբեջանցիները զոհվածներին հիմնականում խուլ, քիչ բնակեցված ու հետամնաց գյուղերում են հուղարկավորում՝ մամուլի ներկայացուցիչներին կամ առանձին անհատներին հնարավորինս զերծ պահելով դրանք լուսաբանելուց»,- մանրամասնում է ադրբեջանագետը:



Ըստ մեր զրուցակցի, հակառակորդի զոհերի իրական թվի մասին որեւէ տեսակի տեղեկատվություն նույնիսկ ոչ իշխանական, ընդդիմադիր լրատվամիջոցները չեն հաղորդում: Ավելին՝ Ադրբեջանի հատուկ ծառայությունները հատուկ մշակած ալգորիթմի միջոցով արագ հայտնաբերում ու չեզոքացնում են անգամ սոցիալական ցանցերի առանձին օգտատերերի այն հրապարակումները, որոնք կարող են հակասել պաշտոնական տեղեկատվությանը:

Մահացած զինծառայողների քիչ թիվ հայտարարելով, շարունակում է Դավթյանը, Ադրբեջանի իշխանությունները թե՛ սեփական հասարակությանը, թե՛ միջազգային հանրությանն ուզում են ապացուցել, թե ընդամենը 3000 զոհ տալով՝ ինչպիսի մեծ նվաճումների են կարողացել հասնել :

«Հենակետ» վերլուծական կենտրոնի փորձագետ **Վիտալի Մանգասարյանը** նկատում է՝ ոչ միայն 44-օրյա պատերազմի, այլեւ վերջին 30 տարիների ընթացքում Ադրբեջանը մի քանի անգամ է ապացուցել, որ մարդկային կորուստների վերաբերյալ ճիշտ տեղեկատվությունը միշտ էլ թաքցրել է: Ալիեւի կողմից օրերս ստորագրված որոշումը սակայն, ասում է ռազմական փորձագետը, մատնում է նրանց: Պետությունը 1 տարվա ընթացքում պարտավորվում է զոհվածների ընտանիքների ու վիրավոր զինվորականների համար ընդհանուր թվով 11 հազար բնակարան հատկացնել: Եթե զոհերի իրական թիվն իսկապես 2500 լիներ, բացատրում է, ապա ոչ թե 11 հազար, այլ մի քանի անգամով պակաս պետք է լիներ բնակարանի կարիք ունեցողների թիվը:

Ադրբեջանագետի պնդումը նաեւ ռազմական փորձագետն է առաջ մղում՝ կռվի դաշտում մեր տղաների կողմից արված տեսանյութերը հակառակորդի կորուստների մասին լավագույն ցուցիչն ու կողմնորոշիչն է:

Ինչ վերաբերում է ռազմական տեխնիկայի կորուստներին, ապա Մանգասարյանը հիշում է՝ դեռեւս պատերազմի առաջին օրերին մեր բանակը կարողացել էր ոչնչացնել ադրբեջանական զրահատեխնիկայի՝ տանկեր, զրահապատ մեքենաներ, «ՏՈՍ», «Սմերչ» համակարգեր, մոտ քառասուն տոկոսը:

«Պատերզամից հետո ադրբեջանցինական բանակն, այսպես ասած, վերականգնողական փուլ է անցնում: Դա է վկայում Իսրայելի հետ կնքված նոր պայմանագիրը, ինչի շրջանակներում Ադրբեջանը շուրջ մեկ միլիարդ դոլարի հարձակողական բնույթի սպառազինություն ձեռք կբերի: Զինտեխնիկայից զատ՝ հակառակորդը «կազդուրվում» է նաեւ մարտունակությամբ, մեկ անգամ չէ, որ թե՛ առանձին, թե՛ իր ավագ եղբոր՝ Թուրքիայի հետ զորավարժություններ է իրականացրել: Օրերս էլ տեղեկություն տարածվեց, որ երկու երկրների հատուկ նշանակության ստորաբաժանումները Լաչինում զորավարժություն են անկացնում»,- ներկայացնում է «Հենակետ» վերլուծականի փորձագետը:

# Ադրբեջանը հայ ռազմագերիներին ստիպել է աղաչել բժշկական օգնության ու սննդի համար

Ադրբեջանում հայ ռազմագերիներին խոշտանգելու ու անմարդկային վերաբերմունքի ենթարկելու զեկույցը ՀՀ մարդու իրավունքների պաշտպան **Արման Թաթոյանը** սկսում է՝ ցավոտ տվյալներ ներկայացնելով: Բազմաթիվ են դեպքերը, ասում է, երբ հայ ռազմագերիներին զրկել են ջրից ու սննդից, եւ այն տրամադրել են դաժան ծեծից, նվաստացումից հետո: Պատասխանատվության են ենթարկվել բանտերի այն աշխատակիցներն ու զինծառայողները, որոնք փորձել են փոքր-ինչ լավ վերաբերվել հայ ռազմագերիներին: «Սնունդը գցել են հատակին, ստիպել այնտեղից ուտել: Գետնին պահել են սոված, սնունդը նրա աչքի առաջ աղբարկղն են նետել: Եղել են դեպքեր, որ ուտելու համար տասը վայրկյան են տվել: Թքել են սննդի մեջ, խփել վերքին, մատով սեղմել այն: Ստիպել են, որ խնդրեն, աղաչեն բժշկական օգնության ու սննդի համար: Ձմռանը ստիպել են պառկել ու քնել գետնին, պատուհանը բաց են թողել, որ ավելի ցուրտ լինի, ու սառը ջուր են լցրել նրանց վրա: Հատուկ դաժան են վերաբերվել՝ պարտադրել ադրբեջաներեն փաստաթղթեր ստորագրել: Ծաղրել են, թքել մարդու վրա, որպեսզի Ադրբեջանի նախագահին գովերգող եւ ՀՀ կառավարությանը նվաստացնող խոսքեր լսեն»,- նշվում է զեկույցում:

Թաթոյանի վստահեցմամբ, իմանալուն պես, որ Կարմիր խաչը կամ ռուս խաղաղապահներն են այցելելու ռազմագերիներին, ադրբեջանցիները պատրաստվել են դրան: Տեսակցությունների ժամանակ նախապես գերիներին տեղափոխել են նկուղային հարկեր, որպեսզի տեսանելի չլինեն: Բայց կոնկրետ փաստեր կան, որոնք մարդկային երեւակայության մեջ չեն տեղավորվում: Ադրբեջանում հայ գերիների ծեծի համար գործել են հատուկ ծեծող բրիգադներ. Թաթոյանի խոսքը իրավապաշտպան **Սիրանույշ Սահակյանն** է լրացնում: Ադրբեջանը չի պահպանել պահանջը, որ ռազմագերիները պետք է պահվեն հատուկ ճամբարներում: Նրանց զրկել են ազատությունից եւ աշխարհի հետ կապը պահելու հնարավորությունից, ինչն ավելացնում է խոշտանգման հետքերը թաքցնելու հնարավորությունը:

Սահակյանի տեղեկացմամբ, հայ ռազմագերիները Ադրբեջանի ռազմական ոստիկանության, քննչական մարմնի ու արդարադատության նախարարության մեկուսարանում են պարբերական ու պատժիչ ծեծի ենթարկվել: «Երեք գերատեսչությունների ղեկավարությունն ու աշխատակիցները ներգրավված են եղել այս ամենում: Կան իրավական մեխանիզմներ, որոնց միջոցով անմիջական կատարողները կարող են ենթարկվել քրեական պատասխանատվության: Եթե լինի հետեւողականություն, ապա պատժամիջոցները կարող են կիրառվել Ադրբեջանի հանդեպ,-նշում է Սիրանույշ Սահակյանը՝ մանրամասնելով,- 2020-ին ընդունված ակտերից մեկով, որը գործում է ԵՄ-ում, սահմանված են այն արարքները, որոնց առնչությամբ ԵՄ-ն կարող է պատժամիջոցներ կիրառել: Փաստաթղթի համաձայն՝ պատժամիջոցների հասցեատեր են անձինք, կազմակերպություններն ու պետական մարմինները: Իսկ ԱՄՆ-ի ընդունած Մագնիտսկիի ակտի համաձայն՝ մարդու իրավունքների խախտումների դեպքում սանկցիաներ են կիրառվում: Նման կերպով կարող են սառեցվել անձի դրամական միջոցները, սահմանափակվել տեղաշարժի հնարավորությունները: Այս ակտի հիման վրա մի քանի հարյուր տարբեր պաշտոնյաներ սահմանափակումների են ենթարկվել»:

Արցախի օմբուդսմեն **Գեղամ Ստեփանյանը** կոնկրետ օրինակով՝ Արցախի Մարտունու շրջանի Մաճկալաշեն համայնքի բնակչի մասին է խոսում, որին հուլիսի 26-ին գերեվարել էին Ադրբեջանի զինված ուժերը: Նա ընդամենը 4 ժամ է մնացել գերության մեջ, այնուհետ ռուս խաղաղապահների օգնությամբ նրան հայկական կողմին էին հանձնել: Բայց այդ կարճ ժամանակահատվածում անգամ անմարդկային վերաբերմունքի է արժանացել:

«Ադրբեջանցի զինծառայողները նման անմարդկային վերաբերմունք նաեւ զոհված զինծառայողների, գերիների ու անհետ կորած զինծառայողների հարազատների նկատմամբ են ցուցաբերել: Մեր զոհված տղաներից մեկի՝ հակառակորդի ձեռքին հայտնված հեռախոսից հերոսի մորը հաղորդագրություններ են ուղարկել: Օգտագործել են նրա օգտահաշիվը, հավանել մոր լուսանկարները եւ այլն»,- ընդգծում է Ստեփանյանը:

**Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ**

# Օրենքի գործելու մասին «ցավոք» ասող նախարարը սահմանադրական բարեփոխումներ է ցանկանում նախաձեռնել

Արդարադատության նախարար **Կարեն Անդրեասյանը** դատական համակարգում վեթինգ իրականացնելու հարցում բավական վստահ է սեփական ուժերի նկատմամբ: Նիկոլ Փաշինյանի կաբինետում աշխատանքի անցնելուց անմիջապես հետո լրագրողների հետ զրույցում համոզմունք էր հայտնել՝ իշխանությունների կողմից անընդհատ օրակարգ բերվող վեթինգն օդ ու ջրի պես է անհրաժեշտ: «Դատական համակարգը մաքրելու եւ զտելու միակ իրական մեխանիզմը կարգապահական պատասխանատվության ենթարկելն է: Կարգապահական վարույթները, կարծում եմ, անգամ քիչ են»,- նշել էր նա:

Նախկին իշխանություններին անդադար քննադատող, բայց նրանց ժամանակ մասնագիտական հմտություններ ու համբավ ձեռք բերած նախարարն օրերս հարցազրույցներից մեկի ժամանակ կրկին վեթինգին էր անդրադարձել: «Իմ ձեռքը լիներ՝ ընդամենը կես ժամում վեթինգն արել-վերջացրել էի, բայց, ցավոք սրտի, էս երկրում կա օրենք»,- ասել էր նա:

Օրենքի մասին ցավով արտահայտվող Անդրեասյանը, պարզվում է, այժմ էլ սահմանադրական բարեփոխումների մասին է մտածում: Նախագահ Սերժ Սարգսյանի հագով կարված Սահմանադրությունից, հիշեցնենք, Փաշինյանը խոստանում էր ընտրվելուց հետո ամենակարճ ժամկետներում ազատվել, բայց, ըստ երեւույթին, կոստյումը նաեւ նրան է «զարդարում»: Թե ինչ բարեփոխումների մասին է մտածում Անդրեասյանը, դեռեւս հայտնի չէ: Հստակ է միայն, որ նա աշխատանքային խմբերի հետ ինչ-ինչ հանդիպում-քննարկումներ է ունենում:

Հուսով ենք՝ պարոն նախարարի՝ Սահմանադրությունը փոխելու մղումները միմիայն բարի նպատակներ են հետապնդում, ու նա չի ցանկանում այդ բարեփոխումների մեջ նաեւ օրենքից հրաժարվելու հոդված ավելացնել:

**Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ**

# Հայ-թուրքական հարաբերությունների մերձեցման վտանգները

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ
Դետրոյթ, ԱՄՆ

Կովկասյան տարածաշրջանում անսպասելիորեն հարաբերությունների նոր աշխուժացում է նկատվում: Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը հայտարարել է, որ ժամանակն է, որ Հայաստանն ու Թուրքիան աշխատեն իրենց հարաբերությունները բարելավելու ուղղությամբ: Միեւնույն ժամանակ, Թուրքիայի նախագահ **Ռեջեփ Թայիփ Էրդողանը** Հայաստանի հետ բանակցություններ սկսելու հեռանկարներից է խոսում, իսկ Հայաստանի վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** որոշ դրական միտումներ է նկատել Հայաստանի նկատմամբ Թուրքիայի վերաբերմունքում եւ արտահայտել է իր պատրաստակամությունը այդ երկրի հետ առանց նախապայմանների բանակցություններ սկսելու մասին:

Կողմերը կարեւորել են տրանսպորտային հաղորդակցությունների եւ ճանապարհների ապաշրջափակումը` շահագիգիռ բոլոր երկրների տնտեսական շահի եւ բարեկեցության հեռանկարով:

Որպես բարի կամքի դրսեւորման նշան, Հայաստանը միակողմանիորեն բացել է իր օդային տարածքը Թուրքական ավիաուղիների` Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ իրականացվող չվերթների համար, մինչդեռ Թուրքիայի օդային տարածքը դեռեւս փակ է մնում հայկական ավիաուղիների չվերթների համար:

Այնուամենայնիվ, կարճաժամկետ տնտեսական օգուտների կարեւորումը չպետք է տեղի ունենա քաղաքական ռիսկերի եւ պատմական հետեւանքների հաշվին, որոնք կարող են հայկական կողմի վրա շատ թանկ նստել:

Այս բոլոր զարգացումները պետք է դիտարկել նախագահ Էրդողանի կայսերապաշտական ծրագրերի հեռանկարների շրջանակում: 2023 թվականը բեկումնային է լինելու Թուրքիայի համար, քանի որ այդ թվականին Թուրքիան նշում է 1923 թվականի Լոզանի պայմանագրով Թուրքիայի Հանրապետության հիմնադրման հարյուրամյակը: Ծրագրվում է ավարտել Աթաթուրքի դարաշրջանը եւ սկիզբ դնել Էրդողանի դարաշրջանին: Դրա հետ կապված կազմվել է նոր սահմանադրության նախագիծը, որը պետք է փոխարինի 1982 թվականին ընդունված սահմանադրությանը, որով քննարկվում է դաշնային պետության հարցը:

Վերջերս ստորագրված Շուշիի հռչակագրով Թուրքիան եւ Ադրբեջանը պաշտոնապես հիմք են դրել ապագա դաշնային պետության համար` ակնկալելով նաեւ Կենտրոնական Ասիայի թուրքական պետությունների միավորումը: Նախագահ Էրդողանը հավատում է, որ այդ դաշնային պետությունում տեղ կգտնվի նաեւ նվաճված այլ երկրների համար, այդ թվում` Հայաստանի: Արտաքին գործերի նախկին նախարար Ահմեդ Դավուդօղլուն, որը հայտնի է Օսմանյան կայսրությունը վերականգնելու իր փառասիրական նկրտումներով, քննարկել է քրդերի հետ հարաբերությունները` թերեւս հուսալով, որ Թուրքիան կկարողանա այդ փոքրամասնությանը ընդգրկել կայսրության ժամանակակից տարբերակի մեջ:

Այս ծրագրերը կյանքի կոչելու համար նախագահ Էրդողանը մեջբերել է պատմության ընթացքում Թուրքիայի նվաճումների պատմական շղթան` ասելով. «Թե՛ հաղթանակը Մանազկերտում, թե՛ Ստամբուլի գրավումը մերն են: Թե՛ խաղաղության գործողությունը Կիպրոսում, եւ թե՛ ռազմական գործողությունները Սիրիայում, ինչպես նաեւ հաղթանակները Լիբիայում եւ Ղարաբաղում մեզ են պատկանում»:

1045 թվականին բյուզանդացիները թուլացրին Բագրատունիների հայկական թագավորությունը եւ գրավեցին դրա մայրաքաղաք Անին: Այնուամենայնիվ, 1071 թվականին սելջուկյան զորքերը Ալփ Ասլանի գլխավորությամբ պարտության մատնեցին բյուզանդական զորքին Մանազկերտի մոտ տեղի ունեցած ճակատամարտում` այդպիսով ճանապարհ բացելով Փոքր Ասիայում սելջուկների նվաճումների համար, որոնց բարձրակետը Կոնստանդնուպոլսի գրավումն էր 1453 թվականին սուլթան Մուհամեդ Ֆաթիհի գլխավորած օսմանյան ուժերի կողմից:

Որպես վերը նշված «ձեռքբերումների» տրամաբանական շարունակություն հարկ ենք համարում ավելացնել անցյալ տարի Բաքվում հաղթական շքերթի ժամանակ Էրդողանի հայտարարությունն




այն մասին, որ «նա եկել է իրագործելու իր նախնիների երազանքները»` մեջբերելով Էնվեր Փաշային:

Երբ խոսք է գնում Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների կարգավորման մասին պետք է ավելի հեռուն նայել` խնդիրը դիտարկելով այդ հարաբերությունների անմիջական ազդեցությունից դուրս, քանի որ տնտեսական խթանները թակարդներ են, որոնք հետագայում կարող են հղի լինել պատմական անցանկալի հետեւանքներով: Սա չպետք է դիտարկել ընդամենը որպես վախեցնելու մարտավարություն, քանի որ Էրդողանի փառասիրական նկրտումները իրական են եւ նա մասամբ իրագործել է իր ծրագրերը վերը մեջբերած իր եւ նախորդների նվաճումներով:

Մենք նաեւ պետք է փորձենք վերլուծել Ռուսաստանի շահագրգռվածությունը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը խթանելու հարցում, պարզելու` թե արդյոք դա թելադրված է միայն սեփակա՞ն շահով:

«Այժմ, երբ հիմք է դրվել քաղաքական գործընթացի համար եւ պատերազմի ավարտից հետո ապաշրջափակվել են [Հայաստան-Ադրբեջան] բոլոր տրանսպորտային եւ տնտեսական ուղիները, կարծում եմ տրամաբանական կլինի, որ Թուրքիայի եւ Հայաստանի մեր գործընկերները շարունակեն ջանքեր գործադրել հարաբերությունների կարգավորման ուղղությամբ», ասել է **Լավրովը** Մոսկվայում տեղի ունեցած երիտասարդական ֆորումի ժամանակ:

«Մենք պատրաստ ենք ակտիվորեն աջակցել դրան», արձագանքել է Արտաքին գործերի նախարարի խոսնակ **Մարիա Զախարովան**:

Բանակցություններ սկսելու այս հանկարծակի շտապողականությունը ձեռնտու է Թուրքիային, Ադրբեջանին ու Ռուսաստանին եւ նպատակ է հետապնդում ամրապնդելու նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարագրի արդյունքում իրենց ձեռքբերած` քաղաքական եւ տարածքային առավելությունները:

Ռուսաստանը հեշտությամբ աչք է փակում Հայաստանի համար աղետալի չլուծված խնդիրների վրա, այն է` ռազմագերիների վերադարձը եւ Ղարաբաղի վերջնական կարգավիճակի որոշումը: Այս ամենը արվում է Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Մինսկի խմբի համանախագահներ Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի կողմից ԵԱՀԿ-ի շրջանակներում բանակցային գործընթացը խափանելու համար, որով վերջապես կբարձրացվեր Ղարաբաղի կարգավիճակի հարցը եւ որը կասկածի տակ կդներ Ադրբեջանի հողի վրա ռուսական խաղաղապահ ուժերի տեղակայման օրինականությունը:

Որպես հարցը ձգձգելու մարտավարություն` Ռուսաստանը դիտավորյալ գործընթացի թեժ պահին փոխեց Մինսկի խմբի իր ներկայացուցչին` փորձառու **Իգոր Պոպովի** փոխարեն որպես համանախագահ նշանակելով **Իգոր Խովաեւին**, որ այցեր է կատարում Հայաստան եւ Ադրբեջան իրավիճակին ծանոթանալու նպատակով: Ուշագրավ է, որ այդ երկրներում իր հանդիպումների ժամանակ նա նույնիսկ չի հիշատակել Մինսկի խմբի բանակցությունների վերսկսումը:

Իր հերթին, Հայաստանի նոր արտաքին գործերի նախարար **Արարատ Միրզոյանի** հետ համատեղ մամլո ասուլիսի ընթացքում պարոն Լավրովը կրկնել է Ադրբեջանի նախագահ **Իլհամ Ալիեւի** փաստարկները Հայաստանի ռազմագերիներին ազատ արձակելու դեմ` նշելով, որ նրանց գերեվարել են նոյեմբերի 9-ի զինադադարի հաստատումից հետո: Արարատ Միրզոյանը իր անփորձության պատճառով չի հիշեցրել Լավրովին Ռուսաստանի` հայտարարագրով ստանձնած պարտավորությունների եւ անձանց` իրենց կամքին հակառակ գերության մեջ պահելու վերաբերյալ միջազգային մարդասիրական նորմերի մասին:

Հայաստանը առաջին քայլն է արել` իր օդային տարածքը բացելով Թուրքիայի համար, սակայն դեռեւս վաղ էր հայտարարելը, որ Երեւանը պատրաստ է առանց նախապայմանների բանակցություններ սկսելուն, քանի որ Ադրբեջանը եւ Թուրքիան պարզորոշ հասկացրել են, որ բանակցային սեղանին չեն մոտենա, եթե չկատարվեն իրենց նախապայմանները: Ադրբեջանը Հայաստանից պահանջում է խաղաղության պայմանագրի ստորագրում, որով վերջինս կհրաժարվի Ղարաբաղի տարածքի նկատմամբ իր բոլոր պահանջներից, իսկ Ռուսաստանը արդեն իսկ հայտարարել է, որ Ղարաբաղի կարգավիճակը քննարկելու ժամանակը չէ:

Մինչ Թուրքիան ի սկզբանե առաջ էր քաշել մի շարք ծանրակշիռ պատմական պահանջներ. Անկարան փորձում էր Ղարաբաղյան հարցը կարգավորել Ադրբեջանի օգտին: Մոսկվայի պնդմամբ` այժմ, երբ խոչընդոտը հաղթահարված է, այլեւս չպետք է լինեն նախապայմաններ: Սակայն Անկարան հենց սկզբից միացել է Բաքվի դիրքորոշմանը եւ ավելացրել իր սեփական նախապայմանը. «Հայաստանը պետք է հրաժարվի ցեղասպանության ճանաչման գործընթացից, հատուցման պահանջներից եւ ճանաչի Թուրքիայի տարածքային ամբողջականությունն ու 1921 թվականի Կարսի պայմանագրով ամրագրված սահմանները»:

Այդ ամենը հաշվի առնելով պետք է փաստել, որ Հայաստանը բանակցությունների սեղանի շուրջ նստելու է դատարկաձեռն: Երեւանը պետք է ունենա իր սեփական նախապայմանները ի պատասխան Թուրքիայի պահանջների: Այն որպես հաղթաթուղթ առնվազն պետք է բանակցությունների սեղանին դնի Ցեղասպանության ճանաչման հարցը, եթե ոչ հատուցումների փաթեթը, եւ բանակցությունները սկսի զրոյական կետից` հերթով ներկայացնելով բոլոր փոխադարձ պահանջները:

Վերջին 106 տարում Թուրքիան իրեն ապահով էր զգում, քանի որ միայն ինքնիշխան պետությունը կարող է իրավական հատուցում պահանջել: Անկարան «թեթեւ» էր տանում սփյուռքահայության պատճառած անախորժությունները եւ շարունակում էր անպատժելի կերպով վայելել Ցեղասպանության պտուղները: Բայց երբ Հայաստանը դարձավ ինքնիշխան պետություն, այն թուրքական կողմի համար փուշ դարձավ:

Ուստի, Թուրքիայի վերջնական նպատակն է այդ ինքնիշխան պետության վերացումը աշխարհի քարտեզից` որպեսզի ոչինչ չխանգարի նրան մարսել Հանցագործության պտուղները:

Ռուսաստանի կողմից Հայաստանին որոշակի գործողությունների դրդելը հետապնդում է հետեւյալ պարզ նպատակները. հեռու պահել Արեւմուտքը Կովկասից եւ ավարտին հասցնել Անկարայի հետ իր գործարքը:

Հայաստանը չպետք է հասարակ խաղազինվորի դեր ստանձնի այս վտանգավոր խաղում:

Անգլ. թարգմանեց`
ԼՈՒՍԻՆԵ ՂԱԼՈՒՄՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

# Անհատները պատերազմի համար ձեռք բերված ջերմադիտակներով բիզնես են անում

44-օրյա պատերազմը ցույց տվեց, որ տարրական կենցաղային իրերի հարցում անգամ մեր բանակի զինանոցը թերանում է: Մեկ անգամ չէ, որ խոսվել է զրահաբաճկոնների ու սաղավարտների սակավության մասին: Տաք ծածկոցների, վերարկուների, սննդի մատակարարումը հիմնականում թիկունքի վրա էր, որն օրական տասնյակ բեռնատար մեքենաներով սնունդ ու անհրաժեշտ իրեր էր ճակաս ուղարկում: Վրաններից մինչեւ ամենագնաց ավտոմեքենաներ է այդ օրերին բանակը ստացել, որոնց մի մասը կորել-գնացել է, մի մասը, որքան էլ տարօրինակ է, այսօր վաճառքի է հանվել: List.am կայքէջում, օրինակ, ջերմադիտակների վաճառքի մասին բազմաթիվ հայտարարություններ կան, ու դա այն դեպքում, երբ նախքան պատերազմը հասարակության ճնշող մեծամասնությունը չգիտեր էլ, թե ինչ է դա ու ինչի համար է անհրաժեշտ բանակին: Անհատները, որոնք վաճառում են ջերմադիտակները, պարզաբանում են, թե դրանք Ռուսաստանից են ներմուծել: Եղելությունը, սակայն, բոլորիս էլ պարզ է պատերազմի օրերին Ստեփանակերտում հայտնված անհատները, որոնց ձեռքի տակով են անցել արտերկրից եկող ուղեբեռները, պահը չկորցնելով, որոշ ապրանքներ իրենցով են արել ու պատերազմից հետո, թեւի տակ դրած, տուն տարել: Պատերազմի օրերին, երբ նմանատիպ սարքերի առակայությունը խիստ կարեւոր էր ու կարող էր ռազմավարական նշանակության հարց լուծել, զինվորականներն արտերկրում բնակվող հարազատներից նմանատիպ իրեր էին խնդրում առաջնահերթ: Այսօր, սակայն, խիղճն ու մարդկայնությունը կորցրած, բանակը թալանողներին պատեհ-անպատեհ առիթներով քննադատող մարդիկ ուղղակի բիզնես են անում:

**ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ**

# Հայաստանը եւ Իրանի տարանցիկ ճանապարհների առաջնահերթությունները

⇨1 Մեջլիսի հետազոտությունների կենտրոնի զեկույցը նաեւ նշում է, որ Իրանն անխուսափելիորեն պետք է բարձրացնի իր դերակատարությունը տարածաշրջանային գործընթացներում՝ միջոցներ ձեռնարկելով Հայաստանի ու Ադրբեջանի շահերն իր շահերի հետ համատեղելու ուղղությամբ:

Ներկայացված խնդիրների հաշվառմամբ, Մեջլիսի հետազոտությունների կենտրոնը գործադիր իշխանությանը ներկայացնում է մի շարք գործնական առաջարկություններ, համոզված լինելով, որ երկրի օրենսդիր մարմինն օժտված է կենսական նշանակություն ունեցող խնդիրների կարգավորմանն ուղղված հարցերում գործադիր իշխանությանն ուղղորդելու լիազորություններով:



Հետազոտական կենտրոնի առաջնահերթային առաջարկությունը վերաբերում է Հյուսիս-Հարավ եւ Արեւելք-Արեւմուտք միջանցքների գործարկմանը միտված աշխատանքների ակտիվացմանը: (Ի դեպ, Իրանի ու Կասպից ծովի միջոցով Եվրոպայի հյուսիսային հատվածի երկրներն ու Ռուսաստանը Հնդկական օվկիանոսին ու Պարսից ծոցին, ինչպես նաեւ Ասիական մայր ցամաքի հարավային շրջաններին կապակցող «Հյուսիս-Հարավ» միջանցքը որեւէ առնչություն չունի Հայաստանի հարավը վրացական Փոթի եւ Բաթումի նավահանգիստներին կապող «Հյուսիս-Հարավ» մայրուղու հետ):

Հետպատերազմյան իրողությունները հաշվի առնելով, Կենտրոնը նաեւ առաջարկում է հատկապես Խուդաֆերինում եւ Ադրբեջանի «ազատագրված» այլ տարածքներում նոր հաղորդակցական ուղիների գործարկման ուղղությամբ աշխատանքներ ծավալել, ու, ինչպես առաջարկության մեջ է նշված, բավարարել Ադրբեջանի կարիքների որոշ մասը:

Առաջարկությունների հերթական բաժնում նաեւ նշված է Իրանի տարածքում Ադրբեջանի ու Նախիջեւանի ինքնավար հանրապետությունների միջեւ հաղորդակցության համար նպաստավոր ու արտոնյալ պայմաններ ստեղծելու, ինչպես նաեւ խնդիրը համակարգելու նպատակով համապատասխան կարգ հաստատելու հրամայականի մասին:

Զեկույցն իր եզրափակիչ բաժինը հատկացնում է Իրանի ու Հայաստանի սահմանային ճանապարհի շինարարական եւ նորոգման աշխատանքներն ավարտին հասցնելու առաջարկին, հիշեցնելով, որ տվյալ ճանապարհի փոքր հատվածն է միայն գտնվում Իրանի տարածքում: Ըստ զեկուցագրի հեղինակների, այդ ճանապարհի հայաստանյան հատվածի շինարարության հարցում Իրանի աջակցությունը հնարավորություն կտա զարգացնելու Իրանի արտաքին առեւտուրը:

Ծանոթանալով Իրանի մեջլիսի հետազոտությունների կենտրոնի՝ հետպատերազմյան իրողություններից բխող զեկուցագրի առաջարկություններին, որտեղ շեշտադրումները հիմնականում արված են Իրանը աշխարհի տարբեր հատվածների հետ տարանցիկ կապի ապահովման վրա, նկատելի է, որ եզրափակիչ մասում անտեսվել է տարիներ շարունակ քննարկման փուլում գտնվող Պարսից ծոցը Սեւ ծովին կապող տրանզիտային ճանապարհի վերաբերյալ Համաձայնագրի ճակատագիրը, որի գործարկման հրատապության օգտին այս տարվա ապրիլին Երեւան այցելած ԻԻՀ ճանապարհների եւ քաղաքաշինության նախարարության գլխավոր վարչության պետ **Ամին Թառաֆոն** եւ նույն թվականի մայիսին պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Իրանի ճանապարհների եւ քաղաքաշինության նախարար **Մոհամմադ Էսլամին** հանդես էին եկել հայտարարություններով:

Հավելենք նաեւ, որ 2019 թվականի հոկտեմբերի 1-ին Եվրասիական բարձրագույն տնտեսական խորհրդի Երեւանյան նիստին դիտորդի կարգավիճակով մասնակցած Իրանի նախկին նախագահ Հասան Ռոհանիի հետ հայկական կողմի հանդիպման գլխավոր քննարկման առարկան, իրանական կողմի նախաձեռնությամբ «Պարսից ծոց-Սեւ ծով» մայրուղու թեման էր, որը Հարավային Ասիայից ու Պարսից ծոցի նավահանգիստներից դեպի Սեւ ծով եւ այնուհետեւ դեպի Եվրոպա տանող ամենակարճ ճանապարհն է:

# Սիրիացիների տներն ու խանութները հարձակման են ենթարկվել Անկարայում

«Միլիոնավոր սիրիացիներ, որոնք փախչելով իրենց երկրի պատերազմական իրադրությունից, ապաստան էին գտել Թուրքիայում, այժմ ստիպված են դիմագրավել թշնամանքի հետզհետե աճող տրամադրությունները, որոնց գումարվում են երկրի տնտեսության վատթարացումն ու թագավարակի համաճարակը», գրում է **Ամբերին Զաման**ը «Ալ-Մոնիտորում»: Մոտավորապես 3,7 միլիոն սիրիացի փախստականների դեմ թշնամանքն իր գագաթնակետին հասավ, շարունակում է նա, օգոստոսի 11-ին, երբ գազազած ամբոխն արհամարհական բացականչություններով ներխուժեց մայրաքաղաքի Ալթընդաղ կոչված բանվորական շրջանը եւ սկսեց ավտոմեքենաներ կողաշրջել, եւ ապակիներ ջարդելով թալանել սիրիացիներին պատկանող խանութները: Առնվազն 76 մարդ ձերբակալվեց վանդալիզմի այդ դրսեւորման կապակցությամբ, որն առաջացել էր, ըստ ոմանց, 18-ամյա թուրք մի երիտասարդի՝ Էմիրհան Յալչինի դանակահարության պատճառով: Երիտասարդը սպանվել էր սիրիացիների միջեւ ծագած վեճի ընթացքում:




Փախստականները կազմում են մոտ 83 միլիոն բնակչության հինգ տոկոսը: Գործազրկությունն ու փողի արժեզրկումը խթանում են փախստականների հոսքի հանդեպ թուրքերի ատելությունը: Նրանց կարծիքով փախստականները, որոնց երկրում առկա թվին ավելացել են վերջերս Իրանի ճամբով Թուրքիա տեղափոխված աֆղանները, «գրավել են» Թուրքիան, 500-ից 1,500 աֆղանցիներ օրական մուտք են գործում Թուրքիա: Իրականում Թուրքիան ինքն է տարածքներ գրավել Սիրիայում եւ չնայած կառավարական հաշվարկներով 50 միլիարդ դոլար է ծախսվել փախստականների վրա, պետք է նշել, որ եվրոպական երկրներից միլիարդավոր դոլարների հոսքը Թուրքիա չի դադարում:

Թալիբների ճիրաններից փախչողների մուտքը Թուրքիա արգելելու նպատակով Անկարան 295 կիլոմետր երկարությամբ պատ է կառուցում Իրանի հետ սահմանին:

Ընդդիմադիր «Ժողովրդահանրապետական» (CHP) կուսակցության առաջնորդ **Քեմալ Կիլիչդարօղլուն** խոստացել է իշխանության ղեկն ստանձնելու դեպքում փախստականներին, հատկապես սիրիացիներին, երկու տարվա ընթացքում ետ իրենց երկրները ուղարկել: Պատասխանելով նրան՝ նախագահական խոսնակ **Օմեր Չելիկն** ասել է, որ մրցակցությունը, ճիշտ է, անհրաժեշտ է քաղաքականության մեջ, բայց անջատողական եւ բեւեռականացման կամ ատելության հռետորաբանությունները երբեք էլ որպես մրցակցության գործելաոճի բաղադրիչ մաս չեն մեկնաբանվել: Իսկ Անկարայի ոստիկանությունը հայտնել է, որ ձերբակալվածների մեջ են այն անձինք, որոնք հրահրել են վայրագությունները սիրիացիների դեմ:

Ժողովրդից ոմանք ամոթանք են տվել հրահրողներին, բայց նշել են, որ իրենք ոչ թե դեմ են ընդհանրապես փախստականներին, այլ «անվերահսկելի միգրացիային», որ վախ է սփռում ինչպես ժողովրդի, այնպես էլ սիրիացիների շրջանում, գրում է Ամբերին Զամանը:

Հ.Ծ.

(Arminien Mirror-Spectator)

ՆԱԻՐ ՅԱՆ

# Մասշտաբային եւ գունագեղ տոնակատարություն՝ 5000 տղաների, Արցախի 75 տոկոսն ու Հայաստանի սուվերեն սահմանները կորցրած երկրում

«Օգոստոսի 24-ին կառավարության գործունեության 5-ամյա ծրագիրը ներկայացնելիս ես արձանագրեցի, որ սահմանակից երկրների հետ հարաբերությունների խորացումը կամ կարգավորումը կառավարության արտաքին քաղաքականության կարեւոր ուղղություններից է լինելու եւ սա արձանագրված է ԱԺ կողմից ընդունված ծրագրում»,- սեպտեմբերի 8-ին, կառավարության նիստում հայտարարել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Նույն հարցի վերաբերյալ կառավարության ղեկավարը շարունակել է. «Թե՛ Իրանի, թե՛ Վրաստանի մեր քննարկումների օրակարգում էական դեր է խաղում տարածաշրջանային կոմունիկացիաների զարգացման թեման, եւ այս համատեքստում կարեւորում եմ Հյուսիս-Հարավ նախագիծը, որը Իրանի հետ մեր սահմանը կապում է Վրաստանի հետ մեր սահմանին:



Մեզ համար շատ կարեւոր է նաեւ երկաթուղային կապի հաստատումը ՌԴ-ի եւ Իրանի հետ: Այս խնդիրը լուծելու համար Հայաստան-Ռուսաստան-Ադրբեջան եռակողմ ձեւաչափով քննարկում ենք կոմունիկացիաների վերաբացման հարցը: Մենք վճռական ենք ջանքեր գործադրել կոնկրետ արդյունքների հասնելու համար՝ գիտակցելով, իհարկե, որ Ադրբեջանն էլ իր հերթին ակնկալում է հաղորդակցություն ստանալ Նախիջեւանի հետ:

Ավելորդ չեմ համարում հիշեցնել, որ մենք տրամադրված ենք վերականգնել խաղաղ գործընթացը Ադրբեջանի հետ՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակում»,- ասել է Փաշինյանը:

Կառավարության նիստի ժամանակ Փաշինյանը հերթական հայտարարությամբ ինքն իրեն գերազանցել է՝ հարուցելով 44-օրյա պատերազմում զոհված հերոսների հարազատների զայրույթն ու ցասումը:

Վարչապետը հայտարարել է. «Մեզ հայտնի հանգամանքների բերումով մեր տրամադրությունը տոնական համարել չի կարելի, բայց մենք որոշում ենք կայացրել, որ Հայաստանի Հանրապետության անկախության 30-րդ տարեդարձը պետք է պատշաճ ձեւով նշվի, եւ սեպտեմբերի 21-ին Հանրապետության հրապարակում տեղի է ունենալու մասշտաբային եւ գունագեղ տոնակատարություն:

Այդ տոնակատարությունը առաջին հերթին նվիրված է լինելու ՀՀ անկախության, ինքնիշխանության, անվտանգության եւ Արցախի համար իրենց կյանքը զոհած մեր նահատակների հիշատակին»:

Նշենք, որ կառավարությունը որոշել է 2021 թվականի սեպտեմբերի 20-ի աշխատանքային օրը տեղափոխել 2021 թվականի սեպտեմբերի 25-ին՝ շաբաթ օրը, որպեսզի 4 օր անընդմեջ ոչ աշխատանքային օրեր լինեն:

# Վերքը տիրոջն է ցավ տալիս

**Մեր շենքի հարեւանությամբ գտնվող ռեստորաններից լսվող բարձր երաժշտության ձայնը չէր խլանում անգամ սեպտեմբերի 27, 28, 29-ին: Երբ հոկտեմբերի առաջին օրերին Ստեփանակերտից հետ եկա, երաժշտության ձայնն այլեւս չէր լսվում: Սուլոցներն ու «ուռաների» ձայները կրկին լսելի եղան միայն մայիսին: Զարմանում էի, ինքս ինձ մտածում, թե դիմացինի վիշտը հարգելով է երեւի, որ մարդիկ ուրախ առիթներ չեն կազմակերպում բավական մեծ պահանջարկ ունեցող այդ ռեստորանում: Ցանկալի միֆը սակայն ընկերս կոտրեց. «Այ միամիտ, երաժշտության ձայնը չես լսել, որովհետեւ ռեստորանի ամառային՝ բացօթյա, հատվածը հոկտեմբերին փակվում, մայիսին նոր բացվում է»:**

**Վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ սեպտեմբերի 21-ին «գունագեղ տոնախմբություն» անելու հայտարարությունը շատերին է բորբոքել: Պատերազմում ընկած զինծառայողների հիշատակի համար կազմակերպվելիք երթնավառ միջոցառումը հատկապես որդեկորույս մայրերին է հունից հանել: Սոցիալական ցանցերի ակտիվ օգտատերերն էլ Փաշինյանի մտահղացումը մերժող «ֆլեշ-մոբ» են նախաձեռնել:**

**Վարչապետի կամ կառավարության գաղափարը, անխոս, ինձ համար էլ մերժելի է: Ողբերգական պատերազմն ինձնից երեք մտերիմ ընկեր ու 18-ամյա, դեռ կյանք չմտած, եւ, գուցե աղջկա ձեռք էլ չբռնած ազգականի տարավ: Ընկերներիցս երկուսը ապագա բժիշկներ էին, մյուսը՝ սարկավագ: Գոնե ես, որ պատերազմից հետո մինչեւ օրս մերժում եմ թեկուզ ամենամտերիմ մարդու հարսանիքի, քեֆուրախության մասնակցելու հրավերը, բարոյական իրավունք ունեմ դատափետել շուրջ 5 հազար անմեղ զոհերի հիշատակը գույնզգույն շոուներով հարգող իշխանությանը: Պատերազմի օրերին ակումբներից տուն չգնացող, ռեստորաններում ծնունդներ նշող, կորոնավիրուսով հիվանդ լինելու մասին կեղծ տեղեկանք ստացողը կամ այն տրամադրողը սակայն բարոյականության ո՞ր նորմի համաձայն են մեծախոսում ու գրառումներ կատարում զոհվածների հիշատակը պղծելու մասին: Լուսահոգի տատիկս խոսքն էր՝ յարեն տիրոջն է ցավ տալիս: Պատերազմից հետո միայն ընկալեցի ժողովրդի ծոցից դուրս եկած ասացվածքի փիլիսոփայությունը: Ինչքան էլ քննադատենք Փաշինյանին, անգամ կարողանանք հասնել նրան, որ երփներանգ տոնախմբությամբ տղաների հիշատակը չհարգեն, միեւնույնն է, հաջորդ իսկ վայրկյանին հասարակության ճնշող մեծամասնությունը շարունակելու է ապրել այնպես, ինչպես մինչեւ Փաշինյանի հայտարարությունն էր ապրում:**

**Մահաբեր ու սահմռկեցուցիչ պատերազմից հետո, ցավոք, հասարակությունը չապրեց ու շարունակում է չապրել բոլորս մեկն ենք սկզբունքով: Ողբն ու սուգը, այո, հավերժ լինել չի կարող, բայց ինքս այն համոզմանն եմ, որ համընդհանուր արհավիրքից հետո որոշակի դադար էր պետք առնել, հասկանալ՝ ինչ կորցրեցինք ու զուտ, անբռնազբոս առօրյայով ապրեինք: Ուրախությունն ու ծիծաղը, երգն ու պարը մեր վշտին համահունչ պետք է լինեին:**

**Հայաստանի Հանրապետության 30-ամյակն, անխոս, պետք է արժեւորել, ու դա կարող է լինել համեստ միջոցառումների, դասական համերգների կամ ռազմական շքերթների միջոցով: Բայց անտեսելով 5 հազարի հասնող ընտանիքների վիշտը՝ ուրախ սրտով ուռա գոռալը, կներեք, բայց հիշողություն չունենալու ու անասունից չջոկվելու մասին է խոսում:**

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

# Աղվան Հովսեփյանը ձերբակալվել եւ կալանավորվել է

ՀՀ քննչական կոմիտեի նախկին նախագահ, նախկին Գլխավոր դատախազ **Աղվան Հովսեփյանը** կալանավորվել է: Այս մասին հայտնել է Հովսեփյանի պաշտպան **Սասուն Ռաֆայելյանը**:

Աղվան Հովսեփյանը ձերբակալվել է սեպտեմբերի 7-ի առավոտյան՝ 1,5 տարի առաջ հարուցված քրեական գործի շրջանակում:

Ըստ Հատուկ Քննչական ծառայության՝ 68-ամյա Աղվան Հովսեփյանը, որը 2004-ից մինչեւ 2018 թվականը զբաղեցրել է նախ՝ գլխավոր դատախազի, ապա՝ Քննչական կոմիտեի նախագահի պաշտոնները, օրինականացրել է ավելի քան 1 միլիարդ 300 միլիոն դրամ, մասնակցել է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մի շարք ընկերությունների կառավարմանը, ստացել է առանձնապես խոշոր չափերի՝ 190 միլիոն դրամ կաշառք եւ խարդախությամբ հափշտակել 800 միլիոն դրամի գույք:



Հովսեփյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ ՔՕ 310-րդ հոդվածով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով եւ 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (3 դրվագ):

Երեւանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր **Մնացական Մարտիրոսյանը** բավարարել է ՀՔԾ քննիչի միջնորդությունը եւ Աղվան Հովսեփյանին կալանավորելու որոշում կայացրել:

Փաստաբան Սասուն Ռաֆայելյանը հայտարարել է, որ դատարանի որոշումն ստանալուց հետո դրա դեմ կներկայացվի վերաքննիչ բողոք:

«Մենք անպայման բողոք ենք ներկայացնելու Վերաքննիչ դատարան, ուղղակի որոշումը դեռ չենք ստացել: Երեկ հրապարակվել է դատարանի որոշման եզրափակիչ մասը: Որոշումը ստանալուն պես կծանոթանանք դրան, ինչից հետո բողոք կներկայացնենք»,- հայտարարել է Ռաֆայելյանը:

Նշենք, որ Աղվան Հովսեփյանին մեղադրանք է առաջադրվել նաեւ հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 1.299.404.414 ՀՀ դրամ գույքը (փողերի լվացում) օրինականացնելու համար:

ՆԱԻՐ ՅԱՆ

# Սերժ Սարգսյանը հերքում է պահանջում

ՀՀ երրորդ նախագահ **Սերժ Սարգսյանը** հայց է ներկայացրել ընդդեմ իշխանական պատգամավոր **Խաչատուր Սուքիասյանի**: Երրորդ նախագահը Սուքիասյանից պահանջում է հերքել իր պատիվն ու բարի համբավն արատավորող տեղեկությունները:



Հիշեցնենք, որ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Խաչատուր Սուքիասյանը երկու շաբաթ առաջ Ազգային ժողովի ամբիոնից հայտարարել էր, որ Սերժ Սարգսյանն արտասահմանյան խաղատներում 100 միլիոն դոլարից ավելի տանուլ է տվել:

Սուքիասյանն իր հայտարարությունը լրագրողների հետ ճեպազրույցում կրկնեց նաեւ հաջորդ օրը՝ նշելով, որ իր խոսքերը հիմնավոր են, ինքը դեռ ավելի քիչ գումար է նշել, որպեսզի իր ասածն ավելի ապացուցելի լինի:

«ՀՀ-ն ոչ մեկի սեփականությունը չի, մի հատ էլ իրեն կհարցնեք՝ «Որոտանն» ով է ձեռք բերել: Մեր պետական օդանավը եկել է համապատասխան տեղից, որտեղ կազինո կա, էստեղից գումարները մեշոկներով տարել են, որ վճարեն»,-նախորդ օրվա ասածը վերահաստատել է Խաչատուր Սուքիասյանը:

Սերժ Սարգսյանի փաստաբան **Ամրամ Մակինյանը** պնդում է՝ իմքայլական պատգամավորն իր հայտարարությունը հաստատող որեւէ փաստ չի կարող ներկայացնել:

«Մենք համոզված ենք, որ դատարանը մեր հայցը բավարարելու է, որովհետեւ չեն կարող լինել այնպիսի փաստեր, որոնք կապացուցեն Խաչատուր Սուքիասյանի հնչեցրած արտահայտությունը, չեն կարող, որովհետեւ այդպիսի իրողություն գոյություն ունենալ մեր օբյեկտիվ իրականության մեջ չի կարող», - նշել է Մակինյանը:

Սեպտեմբերի 6-ին, դատարանի դիմաց նա հիշեցրել է, որ Սերժ Սարգսյանը դեռ նախընտրական քարոզարշավի ժամանակ է հերքել արտասահմանյան խաղատներում միլիոնավոր դոլարներ տանուլ տալու վերաբերյալ տեղեկությունները՝ դրանք որակելով կեղծ:

«Սերժ Սարգսյանը Փաշինյանին 24 ժամ էր տվել՝ փաստեր ներկայացնելու համար, սպառնացել էր, որ հակառակ դեպքում ինքն է փաստեր հրապարակելու Փաշինյանի ու նրա ընտանիքի վերաբերյալ:

Հիշեցնենք, որ Սերժ Սարգսյանն այդ կապակցությամբ ասել էր. «Թող մի փաստ ներկայացնի, չներկայացրեց, մորթելու եմ»:

«Երբ պարոն նախագահը 24 ժամ տվեց Նիկոլ Փաշինյանին այս նույն արտահայտության հետ կապված, որ փաստեր ներկայացնի, գիտեք՝ դրանից հետո ինչ եղավ. խոսքը հայտնի ձայնագրության մասին է»,- հայտարարել է Սերժ Սարգսյանի փաստաբանը:

Նշենք, որ հաջորդ օրը Սերժ Սարգսյանը հրապարակեց 3 րոպե տեւողությամբ ձայնագրություն՝ 2018 թվականի մայիսի 12-ին Սոչիում Ռուսաստանի, Ղազախստանի եւ Բելառուսի նախագահների հետ ունեցած զրույցից:

Սերժ Սարգսյանը Խաչատուր Սուքիասյանից պահանջում է նաեւ 1 միլիոն դրամ վճարել իրեն: Այդ գումարն, ինչպես հայտարարել է փաստաբան Ամրամ Մակինյանը, երրորդ նախագահն ուղղելու է Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին:

Ինչպես տեղեկացրել է Խաչատուր Սուքիասյանի մամուլի քարտուղար **Աննա Մկրտչյանը**, պատգամավորի փաստաբանները հայցադիմումին դեռ չեն ծանոթացել, այն ուսումնասիրելուց հետո «անհրաժեշտության դեպքում» կարձագանքեն:

ՆԱԻՐ ՅԱՆ

Ազգ
ՀԱՎԵԼՎԱԾ
ՄՇԱԿՈՒՅԹ
Թիվ 33(5673)
10 ՍԵՊՏԵՄԲԵՐ
2021

ԼԻԼԻԹ ՂԱԶԱՐՅԱՆ
ԲԳԹ

# Անցյալի ու ներկայի զուգադրումները

## *Ֆելիքս Բախչինյանի «Վերջին մանկություն» վեպում*

Ֆելիքս Բախչինյանի «Վերջին մանկություն» վեպը լույս է տեսել 2021 թվականին: Վեպն աչքի է ընկնում գեղարվեստական հյուսվածքի ինքնատիպությամբ, բարոյահոգեբանական եւ փիլիսոփայական խորքային հղացքներով, պատմական փաստի եւ ժամանակաշրջանի գեղարվեստականացման համար հնարքամիջոցային լուծումներով: Ինչն էլ թույլ է տալիս հավասարաչափ գնահատելու վեպը ձեւակառուցվածքային եւ բովանդակային արժեքայնության տեսանկյունից:

Վեպի հարցադրումների շրջանակը ամբողջանում է մարդ-անհատականություն-ընտանիք-գոյ-հասարակություն-ազգություն-ինքնություն-մարդ շրջապտուտային կենսատարածքում: Նման ընդհանրացման գրողը կարող է հասնել երեւակայության ու վերացարկման միջոցով, սակայն շատ դեպքերում ոչ բնականը, արհեստականը, պատվաստը բացորոշ կլինեն, իսկ Ֆ. Բախչինյանի վեպի արժանավոր կողմերից մեկն էլ հենց շատ իրական, իրատեսական լինելն է: Ընթերցման մեջ չկա հնարանքի ճիգ, արհեստականություն: Եվ զրույցի ոճավորմամբ սկսված այս վեպն առաջին տողից մինչեւ վերջ զգալ է տալիս հեղինակ-պատմողի ու ընթերցող-հասցեատիրոջ միջեւ ծավալվող պատմության իսկությունը:

Անցյալն ու ներկան անհատի ճակատագրում բեկված, գոյութենական խաղարկումով այս վեպն ուղղակիորեն անդրադարձնում է ժամանակի արատավոր բարքերը, արժեհամակարգի անկումային փոփոխությունը:

Հարյուր եւ մի քիչ ավելի տարիների ընդգրկումով պատմություն, փաստական նյութ, ժամանակագրություն, եղեռն, տեղահանություն, վտարանդի հայի ճակատագիր, հայրենադարձություն, ստալինյան ռեժիմ, աքսոր, ընտանիք, լեզու, մշակույթ, ծես, ժամանակակից քաղաքակրթություն: Սա է այն թեմատիկ բովանդակային համընդգրկունությունը, որը բազմաձայնություն է տալիս վեպին: Այս միավորյալ հատույթում գրողը վեր է հանել անձի հոգեկառույցի ամենակարեւոր բաղադրիչները, փորձել է հասկանալ հոգեկանի ու վարքագծի վրա հասարակական տեղաշարժերի անմիջական ազդեցությունը: Եղեռնի ողբերգությունը դիտարկվում է ոչ միայն ազգային ճակատագրում, այլեւ մարդ- անհատի հոգեկառույցում բեկման հնարավոր տարածականությամբ ու խորքով: Գրողը կարեւորում է ազգային ինքնության ամուր հենքին խարսխվող անհատական ինքնության գաղափարը:

Հոգեբանին կամ հոգեվերլուծաբանին բնորոշ հմտությամբ Բախչինյանը թափանցել է մարդկային հոգու խորխորատները, նրա բնազդական, ենթագիտակցական զգացողության եւ բանական մտածողության հիմքերում որոնել է մարդկային վախերի, շեղումների, կանխազգացումների պատճառականությունը: Ավելին, փորձել է հասկանալ գենետիկ շեղումների, պաթոլոգիաների, ախտածին դրսեւորումների վրա արտաքին աշխարհի ազդեցությունը:

Ամեն մի գրականություն իրականության հեղինակային չափում է, ռեալականության ընկալման ձեւ: Ֆ. Բախչինյանի համար իրականությունը լոկ ներկան չէ, այլ այն բաղադրող անցյալը, որը նրա գրականության մեջ առարկայանում է վերհուշի, դեժավյուի, հիշողության տեսաերիզի վերականգնման միջոցով: Եղեռնի թեման հայ գրականության, առհասարակ, հայ մարդու համար ամենացավոտն ու ամենաբացն է: Գրողներից յուրաքանչյուրն իր իմացության, փորձի, պատկերացման հնարավորությունների սահմանում է անդրադառնում այս խնդրին, կարեւորում հարցին մոտենալու այս կամ այն ռակուրսը: Բախչինյանի գրականության մեջ այն հիմնարար երակ է, թեեւ նա չի գրում Եղեռնի մասին վեպ կամ վիպակ, բայց այն անպայմանորեն ունի ներկայություն նրա պատումի մեջ՝ իբրեւ հայի ճակատագրից ոչ մի պարագայում «չմոնտաժվող իրողություն»: Շատ դեպքերում ոչ առաջնային պատումով այս թեմատիկան դառնում է հիմնարար ասելիք նրա գրականության մեջ:

«Վերջին մանկություն»-ն սկսվում է հոգեբանական բարդ, անգամ կարելի է ասել ծանր խորհրդածությունով զրույցի ոճավորմամբ, եւ նախադրության մեջ պատումը սահուն վերաձեւվում է փիլիսոփայական խոր ընդհանրացումներով հարուստ տեքստի. *«...այս ծեր տիեզերքում վերանում է ծերությունը...* Գիտե՞ք՝ *դա կյանքի վերացող ժամանակն է.* Կարմիր գրքում, Կարմիր գրքում, Գինեսի, չգիտեմ է՛լ որ գրքում գրվելիք իրողություն, բացառիկություն... *Աչքի լույսի պես պահպանեք այն: Կգա ժամանակ, որ դուք բախտ չեք ունենա ծերանալու ու չեք* իմանա՝ ինչ հանճարեղ բան է ծերությունը: *Ձեզ պես վայրի բնազդով ապրող սերունդը չի կարող ծերանալ... Ես վախենում եմ ձեզ համար...* Ծերությունը կյանքն է՝ մեկանգամյա այդ հրաշքը, որը, ավաղ, դուք չեք տեսնի ու չեք զգա...» [101]: (Ընդգծումները մերն են):

Հեղինակը համարձակ իրատեսությամբ, կանխադրույթի խաղարկմամբ զերծ է մնում ցանկալին տեսնելու սին մտայնությունից. նա բացորոշում է մարդկությանը վերահասու չարագույն աղետը: Այդ ամենը ճշտապատիր է, որովհետեւ պատճառահետեւանքայնության մեջ է դիտարկում [տե՛ս էջ 10]:

«Ավանդականից ու օրինաչափից» հեռանալու վտանգը կա, եւ այն ախտածին է: «Կյանքը կարճացնելու, երջանկությունը սպանելու, գեղեցիկից, ավանդականից, մարդկայինից, օրինաչափից» հեռանալու մտավախությունը հեղինակը նյութականացնում է նախ բառի տարածքում, այնուհետեւ այդ բառ-կոնցեպտները համակարգելու են ողջ պատումը՝ դառնալով բովանդակային կոդեր:

Սյուժեի վերաշարադրման փոխարեն, ինչը պարզունակ կլինի այս վեպի պարագայում, մենք կփորձենք պատումի փոխաձեւվող տեխնիկայի, կերպավորման, բառային խաղարկումների, ինչպես նաեւ տեքստի առանձնահատուկ ռիթմական միավորների, բացթողումների օգնությամբ թափանցել ներտեքստային տարածություն եւ հասկանալ այս մեսիջ-վեպի թաքնախոս խորքը, ինչը գրողի պատգամն է՝ ձգտում համամարդկային բարձր արժեհամակարգի:

Պատումը փոխանցումային մեխանիզմով մե՛կ հոսում է դեպի ներս, մե՛կ՝ դեպի դուրս: Ժամանակային անցումները ռեժիսորական հմտությամբ են իրացվում, եւ մոնտաժված դրվագային պատումը այնպիսի զուգամիտվող գծերով է զարգանում, որ դժվար եւ արհեստական է դառնում առաջնային-երկրորդայինի փնտրտուքը: Կինոպատում հիշեցնող վիպական կառույցը բազմաձայն հատույթ է, որտեղ ձայնակարգային տրամաբանվածությունը իմաստաբովանդակային դաշտի կարգավորիչ է, ինչը, իհարկե, բարդացնում է վեպի ընկալումը: Սակայն ընթերցողին ավելի հասանելի լինելու դիտավորությամբ գրողը վեպի ընկալման բանալիներ է տալիս. «Իմ պատմությունը լսելու համար համբերություն պիտի ունենաք գնալ հետ՝ դեպի սկիզբների սկիզբ՝ դեպի մանկություն, ու գալ այնտեղից՝ ոտքով» [12]:




Մարդու ճանապարհի, ընթացքի կարեւորագույն կայանատեղին մանկությունն է, այնտեղից ենք գալիս բոլորս: Մարդն իր «հիշողության էկրանից» չի կարող եւ չի ուզում ջնջել իր մանկությունը, որի անմիջական խորհրդաբանությունը մայրն է: Սա կարմիր գծի պես անցնում է վեպի ողջ հյուսվածքում, ինչին կանդրադառնանք մի քիչ ավելի ուշ:

Ժամանակային անախրոնիաներից բացի՝ վեպում նկատելի են տեղավայրային անցումները: Պատումն սկսվում եւ ավարտվում է Երեւանում, սակայն հիշողության մեջ արտապատկերվող Արեւմտյան Հայաստան, Բուլղարիա, Երեւան, Սիբիր տրանզիտը մի գաղթական հայ ընտանիքի կենսագրության վերապատումով վավերացվում է՝ իբրեւ արեւմտահայության ճակատագրական սիմվոլ:

Այս կառուցվածքային ձեւածքը վեր է հանում մի ամբողջ դարաշրջանի համապատկեր: Այստեղ խաչաձեւվում են տարաձեւ տեքստեր՝ պատմական, փաստական, մշակութային, կենցաղագրական, գեղարվեստական, գիտական, բանահյուսական, ժողովրդական, ինչն էլ ենթադրելի է դարձնում վեպի՝ համադրական ժանրատեսակ լինելը:

Վեպը կազմված է նախադրությունից եւ տասներեք մասերից, որոնք կարող են դիտվել նաեւ առանձին պատմություններ (ինչը պարզեցնում է վեպի ծավալային ընկալությունը), սակայն այս պատմությունները վիպական կառույցի մեջ կապակցված են սյուժետային ներքին գծով, ինչն էլ թույլ է տալիս դիտարկել հենց որպես վեպ: Եթե առաջին երեք մասերում պատումը խոհափիլիսոփայական է, ապա «Մեր դժար ճամփան», «Կորսված ու գտնված հայրենիքում», «Նոր տուն, նորոգվող կյանք», «Ջնհալ», «Տանն ապրելու երջանկությունը», «Քույրս», «Միրան» մասերում ամբողջանում է 20-րդ դարի պատմաքաղաքական դիմանկարը:

Այս մասերում ընդգծված վերաբերմունք է դրսեւորված արեւմտահայ մշակույթի, կենցաղավարության, լեզվամտածողության նկատմամբ, ինչը նկատելի է նաեւ գրողի «DEJA VU» վիպակում: Ցեղասպանության մասին ուղղակիորեն չգրված այս վեպում գրականագետ-գրողը վեր է մնում պատկերագրության ձեւից՝ նախապատվություն տալով «տեքստի մեջ տեքստի» հնարքին: Վտարանդի ծնողների ճակատագիրն ուղղակի վերապատմելու փոխարեն՝ Բախչինյանը մեջբերում է բուլղար բանաստեղծ Յավորովի «Հայեր» բանաստեղծությունը եւ միեւնույն ժամանակ գրականագիտական վերլուծություն է կատարում: Նաեւ՝ Մոր եւ Հոր (գրողի նախապատվությունն է մեծատառ գրությունը, ինչը, բնականաբար, վերաբերմունքային ցուցիչ է) հարաբերությունները ներկայացնում է Թեքեյանի, իսկ «տնապաշտության» փիլիսոփայությանն անդրադառնալիս՝ Մ. Իշխանի ստեղծագործությունների միջոցով:

Բացի այս՝ վեպի ողջ բնագիրը, սկսած ենթավերնագրերից, միջտեքստային հարաբերության մեջ է աստվածաշնչյան, բանահյուսական, հայ եւ համաշխարհային գրականության հետ: Անգամ գլխավոր հարցադրումների շրջանակը մշակութային երկխոսության մեջ է տարբեր տեքստերի հետ: Դա ապահովում է վեպի բովանդակային խորությունը, մարդու ներանձնային տիրույթից սկսած պատումը հարթ փոխանցմամբ տեղակայում է առավել ընդգրկուն տարածություններում:

Նախադրության մեջ, խոսելով Հեմինգուեյի ընդամենը վեցբառանոց պատմության մասին («Վաճառվում է մանկական կոշիկ, երբեք չհագած») [5], իր վեպը բնորոշում է դարձվածք-պատմություն, որպիսին նորություն է գրականության համար («Տանը ապրելու երջանկություն»):

Այնուհետեւ տալիս է եւս մեկ բանալի, որ իր վեպը տարբեր մեթոդների եւ ուղղությունների հետաքրքրական համադրում է. «...ու ամեն մեկը թող հասկանար՝ ինչպես ինքն է ուզում՝ ուղիղ, փոխաբերական, փիլիսոփայական, ռեալիստական, սիմվոլիստական... եւ հազար ու մի «ական» իմաստներով» [5]:

(«Տանը ապրելու երջանկություն» այս կոդը առանցքային ուղենիշ է վեպի համար, որն ամբողջանում է «Մահանալը ոչինչ, սարսափելին չապրելն է» վերջին գլխում՝ ստեղծելով ասելիքի ուրույն շրջանակում:

Խոսելով ուղենիշերի մասին՝ նշենք դարձվածքների համահունչ խաղարկումը, ինչպես նաեւ թեւավոր խոսքերի գրական եւ աստվածաշնչյան տեքստերի, եկեղեցական տոների անունների եւ իմաստների մեկնությունը, որոնք ապահովում են մետաֆորիկ դաշտը: Այդ աֆորիստիկ հարթության վրա երեւակվող ամենատարողունակ եւ հիմնավոր փոխաբերությունները Սիմոն ծերունու - այլուրի, մոր - տան հարացուցային խորհրդապատկերներն են, որոնք վերաճում են արքետիպային կոդերի:

Սրանք է՛լ ավելի են խորացնում վեպի փիլիսոփայական-հոգեբանական շաղախը՝ ենթադրելով վեպի մեկնաբանական շերտերը:

Վեպի փոփոխվող պատումն աստիճանաբար անցնում է անկատար ներկա ժամանակի: Հայի՝ սարսափ ֆիլմ հիշեցնող կենսակերպը, որը բեմադրվել է այլոց ձեռքով, ինչպես գրում է հեղինակը, փոփոխվում է: Աբսուրդն էլ այն է, որ թվացյալ բարելավումը, կյանքի որակի փոփոխությունը ֆոն է դառնում, որպեսզի երեւան գա խարխլված ինքնությամբ, հոգեւոր արժեքներից շեշտակի գահավիժող մարդու տեսակը: Այստեղ նորից ես գնալով՝ հանգում ենք հեղինակի այն մտքին, որ «մարդու ճակատագրական նշանները ավելին չեն, քան ազգային ճակատագիրը՝ «մազապուրծ հայ գաղթական»: Ահա հիմնարար պատճառը, որ թողել է անջնջելի հետեւանք՝ պատճառելով հոգեւոր մեծ վնասվածք հայ մարդու հոգեկառույցին: Անկախ նրանից, թե ինչպես է սպիացել կամ սպիացե՞լ է արդյոք, այն միշտ զգալի եւ դրսեւորվող է հայի վարքագծում, մտասեւեռումներում, քաղաքական ու պատմական դիրքորոշումներում:

⇨ Դ

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ

# Հայկ Աւագեան. «Այսօր Սփիւռքը տարուած է մեծ պատումներով՝ մոռնալով ինքն իրեն»

*Եգիպտահայ երաժշտագէտ, երաժիշտ եւ հրատարակախօս Հայկ Աւագեանը սփիւռքահայ այն եզակի մտաւորականներից է, որոնք տասնամեակներ շարունակ լռելեայն եւ տքնաջան կատարում են իրենց աշխատանքը՝ դիտմամբ հեռու մնալով լուսարձակներից: Մինչդեռ նրա գործունէութիւնը եւ վաստակը միանգամայն արժանի են ըստ արժանւոյն գնահատման:*

*Հայկ Աւագեանը (ծն. 1964) ուսանել է Կահիրէի Պետական երաժշտանոցի դաշնամուրի բաժնում եւ Երեւանի Կոմիտասի անուան կոնսերվատորիայի դաշնամուրի եւ երաժշտագիտութեան բաժիններում: Վերադառնալով Եգիպտոս՝ հանդէս է եկել որպէս համերգային դաշնակահար, 1992-2001 թթ. որպէս կոնցերտմէյստէր պաշտօնավարել է Կահիրէի օպերայի թատրոնում, նաեւ մինչեւ 2007 թուականը եղել է նոյն թատրոնի երգչախմբի գլխաւոր խմբավարը: 2006-2010 թթ. եղել է Ալեքսանդրիայի Մատենադարանի մեծահասակների եւ երեխաների զոյգ երգչախմբերի խմբավարն ու գեղարուեստական ղեկավարը: Կահիրէի ՀԲԸՄ-ի հովանաւորութեամբ քննական խմբագրութեամբ հրատարակել է 23 երաժշտական հատորներ՝ մեծ մասամբ հիմնուած հայ երաժշտահանների անտիպ ինքնագրերի վրայ (Չուխաճեան, Եկմալեան, Կարա-Մուրզա, Սպենդիարեան, Գոհարիկ Ղազարոսեան): 2001-2008 թթ. Կահիրէում լոյս է ընծայել «Ծիծեռնակ» եռամսեայ երաժշտական հանդէսը՝ նուիրուած բացառապէս հայ երաժշտութեանը (լոյս է տեսել 29 համար): 2016 թուականից հրատարակում է «Ձահակիր» շաբաթաթերթի յաւելուածների մատենաշարը՝ մեծ մասամբ իր հեղինակութեամբ, ինչպէս նաեւ հրատարակախօսական յօդուածներով աշխատակցում է նոյն թերթին:*

**-Սիրելի՛ Հայկ, շնորհակալ եմ, որ համաձայնուեցիր հարցազրոյց տալ. գիտեմ, որ դա քո նախասիրութիւններից դուրս է (ինչպէս նաեւ մասնակցութիւնը գիտաժողովներին): Եգիպտահայութեան երբեմնի աշխոյժ մշակութային գործունէութիւնը տեւական նահանջի մէջ է, սակայն քեզ նման մէկ անհատը, թէկուզեւ իր, թոյլ տուր ասել, կղզիացած գործունէութեամբ, շարունակում է գործել անդուլ եւ անշահ, չունենալով ամուր աջակցութիւն: Ի՞նչ է սա՝ կեանքի կոչո՞ւմ: Իսկ գուցէ այլընտրանքի բացակայութի՞ւն: Իսկ եթէ աւելի խիստ լինենք՝ պատի՞ժ...**

-Շնորհակալութիւն, սիրելի Արծուի, գնահատական ու քաջալերական խօսքերուդ համար:

Կրնամ ըսել, որ կղզիացումը իր շերտերը ունի: Եթէ նկատի առնենք, որ բոլոր հին ու նոր հրատարակութիւններս տեղադրուած են առցանց՝ ազատ բեռնումի եւ ընթերցումի համար, պէտք է ընդունիլ, որ դիտորդներու քանակը (քանակէն անդին չեմ կրնար բան մը ըսել) բնաւ ալ կղզիացում չի նախատեսեր:

Բայց, միւս կողմէ, կենդանի շրջապատի առումով, գաղափարներու իրական քննարկութեան կարելիութիւն չկայ, եւ այս առումով կղզիացումը կը հնչէ տեղին: Վերջերս քանի մը անգամ փորձեցի Հայկական Ընթերցասրահի կազմակերպութեամբ նախաձեռնել ազատ խօսքի եւ վիճաբանութեան երեկոներ, ուր ներկաները առիթ ունէին առանց կաշկանդումներու խօսիլ նախապէս ընտրուած խնդրական նիւթի մը շուրջ: Արդիւնքը եղաւ կատարեալ ձախողութիւն՝ երեւոյթին նկատմամբ եղած անվստահութեան եւ ներկաներու գրեթէ չգոյութեան պատճառով (շնորհակալութիւն, անշուշտ, քանի մը նուիրեալ ներկաներուն). նոյնիսկ որոշ բացականեր ականջիս հասցուցին հեգնական նկատողութիւններ: Սփիւռքի ուժային հիմնահոսանքը՝ բեմ/հանդիսատես, դասախօսութիւն/ունկնդիր, գրող/ընթերցող, ուսուցիչ-վերապատրաստող-վերահսկիչ/աշակերտ, ղեկավար/(ոչ-)հասարակութիւն կտրուկ երկուութիւններէն անդին անցնիլ, այնքան ալ չէ համոզուած տակաւին, որմէ՝ մասնաւոր ծրագրուած նիւթերու կանխամտածուած ընտրութիւն եւ այլախոհ գաղափարներու պարտադիր կղզիացում (այլախոհութիւնը չշփոթել դպրոցի, հայեցի դաստիարակութեան, հայապահպանութեան, հայերէն լեզուի նիւթերուն շուրջ գոյութիւն ունեցող քննադատութիւններուն հետ, քանզի այլախոհութիւնն ու քննադատութիւնը տարբեր բաներ են):

Վերջապէս, կղզիացումն ալ ունի իր մեծ առաւելութիւնը՝ զոր կը համարեմ խնդիրի ամենէն կարեւոր կողմը: Representations of the Intellectual դասախօսութիւն-հատորին մէջ, մտաւորականի մասին արտայայտած բազմաթիւ ուշագրաւ գաղափարներուն կողքին, **Էտուարտ Սայիտ** առաջ կը քաշէ այն կարծիքը, որ նախընտրելի է մնալ լուսարձակէ դուրս եւ սեփական կարծիքը արտայայտել ազատօրէն՝ ազատագրուած միտքով, քան ըլլալ լուսարձակութեան կեդրոնը եւ արտայայտուիլ թելադրուած գաղափարախօսութեան սահմաններուն մէջ: Եւ այս առումով «կղզիացած» մտաւորականը համարած է բախտաւոր: Ես ինքզինքս այդ բախտաւորներէն մէկը կը նկատեմ: «Ձահակիր»-ի մէջ կը գրեմ այն, ինչ կ՚ուզեմ գրել՝ առանց մտածելու վերադիր արձագանգներու մասին, առանց հասցէագրելու յատուկ կողմնորոշում ունեցող խմբաւորումներու՝ անոնց հաւանութիւնը (շքանշան, մրցանակ, գովաբանութիւն) ստանալու հմայքէն տարուած: Բացի այդ, բոլոր գրութիւններս մատչելի են առցանց:

**-Քեզ հետ կարելի է զրուցել ամէն ինչից՝ նկատի ունենալով քո լայն հետաքրքրութիւններն ու քաջատեղեակութիւնը հայաշխարհի ու մշակոյթի վերաբերեալ: Սկսենք երաժշտութիւնից: Դու իրականացրել ես հայ եւ եգիպտացի երաժշտահանների ստեղծագործութիւնների համաշխարհային առաջնախաղեր: Ինչպիսի՞ն է դասական երաժշտութեան ներկայ վիճակը Եգիպտոսի նման երկրում:**

-Եգիպտոսի մէջ դասական երաժշտութիւնը անհամերաշխ գոյակցութիւն ունի աւանդականին (Օմմ Քուլսում, Ապտէլ Ուահապ, եւ այլն) հետ: Կամ ուրիշ, աւելի մեղմ բառերով կարելի է ըսել, որ դասականը միշտ ձգտած է աւանդականին: Վերջինիս գոյութիւնը տիրական է: Պզտիկ օրինակ մը: 1990-ականներու առաջին կիսուն, Գահիրէի Օփերայի թատրոնը կարեւոր փորձեր կատարեց առաջին անգամ բեմադրելու հին ու նոր երաժշտահաններու օփերաներ (որ, դժբախտաբար, չունեցաւ իր շարունակութիւնը): Նկատի ունենալով, որ այնտեղ պաշտօնավարող միակ կոնցերտմէյստէրն էի, որ գիտէ արաբերէն լեզուն (բոլոր կոնցերտմէյստէրները եղած են, եւ մինչեւ այսօր կը մնան, օտարերկրացիներ) ինծի յանձնուեցաւ մենակատարներուն եւ երգչախումբին պատրաստութիւնը: Մեներգիչներուն մօտ ի սկզբանէ դիմադրութիւն կար օգտագործելու օփերայի գլխային ձայնի դիրքաւորումը՝ պատճառաբանելով, որ անիկա կը խանգարէ բառերու յստակ առոգանութիւնը: Բայց այդպէս է օփերան ընդհանրապէս: Առոգանութեան բացառիկ յստակութիւնը, որ առկայ է աւանդական մեներգիչներուն մօտ, անկարելի է վերարտադրել օփերայի մէջ: Բայց եւ այնպէս, օփերայի եգիպտացի երգիչներուն համար



բառը կու գար ձայնային դիրքէն առաջ: Ձգտում դէպի աւանդական երաժշտութիւն: Եկէք մենք՝ հայերս, խոստովանինք, որ անկարող ենք «Անոյշ»-ի լաւագոյն կատարումի մը բառերը ամբողջապէս հասկնալու, եթէ նախապէս ծանօթ չըլլանք անոնց: Ասիկա տակաւին չի հերքեր բառին կարեւորութիւնը նոյն «Անոյշ»-ին մէջ:

Անկասկած, Գահիրէի երաժշտանոցը (կոնսերվատորիա) եւ երաժշտական-մանկավարժական հիմնարկը, որոնք կը պատրաստեն մինչեւ տոքթորականի աստիճան, ինչպէս նաեւ Օփերայի թատրոնը, կրթութեան եւ մշակոյթի կարեւոր կեդրոններ են: Բայց անոնց տարողութիւնը 100 միլիոն ժողովուրդի ընկալումի տարածութեան մէջ բաւական սահմանափակ է:

Այստեղ ուրիշ հարց մը զիս հետաքրքրած է. այն է՝ եգիպտացի դասական երաժշտահաններու (կոմպոզիտոր) գործերու տպագրութեան հարցը: 1997 թուականին էր, երբ յաջողեցայ ձեռք ձգել եգիպտացի առաջին դասական երաժշտահան Եուսէֆ Կրէյսի (1899-1961) ձեռագիրներուն պատճէնները եւ խմբագրել ու կազմել անոր ամբողջական գործերը 12 հատորով՝ արաբերէն մանրամասն ծանօթագրութիւններով: Ասիկա առաջին եւ ցարդ միակ փորձն է խմբագրելու արաբական աշխարհի դասական երաժշտահանի մը ամբողջական գործերը: Աշխատանքը չհրատարակուեցաւ, մինչեւ որ անոր թուային տարբերակը (12 հատորները՝ ծանօթագրութիւններով) վերջերս հրապարակեցի առցանց (Internet Archive): Երաժշտական տպագրութիւնը Եգիպտոսի մէջ, դժբախտաբար, կը մնայ չգործադրուած անհրաժեշտութիւն մը:

Քովս կը գտնուին եգիպտական սինեմայի հռչակաւոր երաժշտահան **Ֆուատ Ալ-Զահերիի (Կարապետ Փանոսեան)** համերգային (ոչ-սինեմայի) գործերու ձեռագիրներուն պատճէնները, որոնց խմբագրութիւնը եւ հրատարակութիւնը (հայկական միջոցներով) երազ մըն է տակաւին:

**-Մաղթեմ, որ այդ երազը նոյնպէս կիրականացնես, թէեւ կասկածում եմ, որ հայկական միջոցներով... Հայկ, մեր իրականութեան մէջ աննախադէպ է «Ձահակիր» շաբաթաթերթի յաւելուածների մատենաշարը: Ցարդ սահմանափակ տպաքանակով լոյս է տեսել 48 հատոր, որը ցրւում է անվճար: Դրանք մեծ մասամբ վերաբերում են եգիպտահայութեան պատմութեանն ու մշակոյթին՝ նոր կեանք տալով անտիպ ձեռագրերում եւ մամուլում անթեղուած նիւթերին: Ո՞ւմ նախաձեռնութիւնն էր սա, եւ որքանո՞վ է այն հասնում ընթերցողին:**

-Նախաձեռնութիւնը իմս էր: Պատճառ՝ կուտակուած նիւթերու եւ միտքերու հրատարակութեան ներքին պահանջ: Ֆինանսաւորումը կու գայ «Ձահակիր»-էն, շնորհիւ անոր խմբագիր-տնօրէն Մարտիրոս Պալաեանի հաւանութեան եւ արտօնութեան, այլեւ քաջալերութեան:

Ընթերցողին հասնելու յաւերժական հարցին մասին այլեւս չեմ մտածեր: Գիրքերը կան առցանց, տպագիր եւ թուային, օրինակներ կը ղրկենք Հայաստանի գրադարանները (որոնք միշտ խանդավառութեամբ ընդունած են զանոնք, այլեւ ուրիշ օրինակներ եւս խնդրած): Եւրոպական հայկական գրադարան մը չուզեց զանոնք ունենալ. ըսաւ որ «Ձահակիր»-ները կը նետէ. մնացածը մեր համեստ վարչական տնօրինութենէն անդին է:

**-Տասնհինգ տարի առաջ հիւրընկալուեցի եգիպտահայ համայնքում: Ի՞նչ տեղաշարժեր են եղել համայնքում այս ժամանակահատուածում:**

-Սփիւռքի մէջ տեղաշարժներ տեղի չեն ունենար: Ներքին մղումէ բխած տեղաշարժեր պէտք չէ տեղի ունենան: Տեղի կ՚ունենան արտաքին արհաւիրքներէ եկած տեղաշարժեր՝ բացասական իմաստով: Հալէպը վերջին օրինակ մը կրնայ ներկայանալ բացասական տեղաշարժի:

Եթէ նկատի ունիս քու այցելութենէդ ի վեր կատարուած փոփոխութիւնները, կրնամ ըսել որ հնազանդութեան (Հայաստանի մէջ կ՚ըսեն՝ լոյալութեան) աստիճանը քիչ մը աւելի բարձրացաւ: Հնազանդութեան հակառակը անպայմանօրէն ըմբոստութիւնը չէ: Քննադատութիւն, քննադատութենէն առաջ եւ աւելի կարեւոր՝ քննականութիւն եւ խնդրականացում, որոնք հնազանդութեան փոխարինողները կրնան ըլլալ: Կրնա՞ս հաւատալ հասարակութիւն մը, ուր ամէն բան չափէն աւելի լաւ է: Ի՞նչ է լաւի չափանիշը, որ ամէն բան լաւ ըլլայ:

**-Դու Սփիւռքի այն սակաւաթիւ հրապարակախօսներից ես, որ քաջատեղեակ է հայ կեանքի զարգացումներին՝ Հայաստանում թէ արտերկրում եւ մշտապէս արծարծում են ցաւոտ խնդիրներ: Ինչպէ՞ս կատարուեց երաժշտագիտութեան համատեղումը հրապարակախօսութեան, աւելին՝ քաղաքագիտութեան հետ:**

-Սկիզբը երաժշտութիւնն ու երաժշտագիտութիւնն էր: Միայն երաժշտութիւնը: Յարմարաւէտ կը զգայի «փրոֆեսիոնալ»-ի տարազին մէջ: Յետոյ մասնագիտական կեթթոյացումը չբաւարարեց զիս: Դարձեալ հետեւեցայ Սայիտի վերոյիշեալ հատորին, ուր կը քննարկուի մտաւորականի ներգրաւուածութեան անհրաժեշտութեան հարցը, ներգրաւուածութիւն՝ կենդանի կեանքի եւ ապրուած փորձառութեան հետ, ներգրաւուածութիւն՝ բնագաւառներու փոխներթափանցումի եւ անոնց միջեւ օտարացումի վերացումի առումով: Սիրեցի ֆրանսացի հրաշալի փիլիսոփաներ Ալէն Պատիուն եւ Միշէլ Օնֆրէն, որոնք անընդհատ կ՚արտայայտուին առօրեայ իրադարձութիւններուն մասին, իրականութեան համապատասխան լեզուով՝ առանց քօղարկումներու: 2014-ին «Ձահակիր»-ի մէջ գրեցի յօդուածաշար մը՝ «Փրոֆեսիոնալը» խորագիրով, ուր քննադատեցի «փրոֆեսիոնալ» մակարդակի վրայ մնացած մտաւորականները եւ առաջարկեցի ոչ թէ ջնջել փրոֆեսիոնալիզմը եւ յետքայլ կատարել, այլ անցնիլ անկէ անդին՝ դէպի մտաւոր ազատագրութիւն, զոր անուանեցի յետփրոֆեսիոնալիզմ, որուն հիմքերէն մէկն է ներգրաւուածութիւնը: Քաղաքականութիւնը մաս կազմեց այս ներգրաւուածութեան: Բայց նաեւ ուրիշ շատ բաներ:

⇨ Թ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Իրանագետ

# ...Քանի որ ես մարդ՝ մարդուն եմ սիրում, Եվ նրա հոգու ստեղծած վեհը

Խորհիմաստ այս խոսքերը պատկանում են հայ գրական շրջանակներին լավագույնս հայտնի իրանցի բանաստեղծ եւ թարգմանիչ, հայագետ **Ահմադ Նուրիզադեին**: Իսկ մարդու ստեղծած վեհը, ըստ անվանի մտածողի՝ հայ ժողովրդի մշակույթն է:

Օգոստոսի 20-ին 70 տարեկանում Թեհրանում մահացել է իրանցի ճանաչված հայագետ Ահմադ Նուրիզադեն: Նա լիովին տիրապետում էր հայերեն լեզվին եւ գրում էր հայերեն ու պարսկերեն լեզուներով: Նուրիզադեն 15 գրքի հեղինակ է, թարգմանել է հայերեն արձակ եւ չափածո գործեր: Հիրավի, Նուրիզադեի գլուխգործոցը նրա «Հարյուր տարվա հայ բանաստեղծություն» անտալոգիան է, որը հրատարակվել է 1990 թ.:

Նուրիզադեի եւ նրա արժեքավոր գրքի վերաբերյալ հիշարժան տեղեկություններ են պահպանվել «Կարծիք» հաղորդաշարի արխիվում: 1993 թ. հրապարակված հարցազրույցում հայախոս Նուրիզադեն վկայում է, որ գրքում ի մի է բերել թվով 71 հայ հեղինակների լավագույն գործերն ու նրանց կենսագրականը: Ժամանակագրական առումով գրքում ներառված են, սկսած 1880 թվականից՝ Պետրոս Դուրյանից մինչեւ Արմեն Մարտիրոսյան: Այդուհանդերձ, Նուրիզադեին առավել հոգեհարազատ են Պարույր Սեւակի ստեղծագործությունները: Նշելի է, որ գրքի շապիկի ձեւավորումը կատարել է նրա կինը՝ **Մանդանա Փարնիան**: Ծառերի խորհրդանիշով նկարում ցույց է տրված հայ ժողովրդի հավերժությունը, իսկ կտրված ծառերը խորհրդանշում են Եղեռնը:

Հիշարժան է նաեւ Նուրիզադեի հեղինակած «Հայաստանի պատմությունն ու մշակույթը» ծավալուն աշխատությունը, որի 7 բաժիններում ներառված է հայոց պատմությունը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչեւ 20-րդ դարավերջ:




Նուրիզադեն սկսել է գրել հայերենով բանաստեղծություններ 1988-ից: Առաջին անգամ նրա ստեղծագործությունները հրատարակվել են Թեքեյան մշակութային միության Լիբանանի «Շիրակ» գրական ամսագրում, որից հետո հայկական այլ ամսագրերում: Նուրիզադեն օտարազգի հայագիր այն բացառիկ բանաստեղծն էր, որն իր իսկ հայրենիքում՝ Իրանում, քարոզում էր հայ մշակույթն ու գրականությունը:

Նուրիզադեն ծնվել էր երբեմնի հայաշատ Անզալի քաղաքում, հայերեն էր սովորել բանաստեղծուհի Արշալույս Բաբայանի մոտ, իսկ գրաբարում հմտացել էր Սպահանի համալսարանի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնի վարիչ Խաժակ Տեր-Գրիգորյանի մոտ: Նա՝ որպես հայերենով գրող բանաստեղծ, մեծ ճանաչում ուներ Հայաստանում եւ Սփյուռքում: Արժանացել էր «Մովսես Խորենացի» շքանշանին (2001 թ.), Հայաստանի Գրողների Միության «Կանթեղ» մրցանակին (2005 թ.) եւ այլ մրցանակների ու կոչումների: Ներկայացնենք Նուրիզադեի հայերեն մտքերից մի քանիսը.

«Երբ սկսեցի ձեր գրականությամբ եւ մշակույթով զբաղվել՝ մեկ սպիտակ մազ չունեի գլխիս, հիմա մեկ սեւ մազ չի ճարվում՝ ձեր մշակույթին ծառայելով սպիտակեցի, բայց եւ ուրախ եմ, որ կյանքս նվիրել եմ աշխարհի ամենահին ազգերից մեկի հարուստ եւ շատ մարդկային գրականությանն ու մշակույթին»:

«Եթե հայկական որեւէ կազմակերպություն ուզենա գնել այն ժամերը, որոնց ընթացքում ես միայն հեռատեսիլով հայ մշակույթի մասին եմ խոսել՝ հավաստացեք, հարյուր հազարներ է ծախսելու»:

Այսօր դժվար է ասել, արդյոք Նուրիզադեի գրական աշխատանքները նույնքան ջանասիրությամբ շարունակող կլինի՞ պարսկական գրական ասպարեզում, սակայն մի հարց միանշանակ է. նոր թարգմանիչը իր առջեւ խնդիր պետք է դնի առավել զարգացնելու Նուրիզադե գրողի եւ թարգմանչի, պարզապես մտածողի սկսած գործը, որը նպատակ ունի ծանոթացնելու հայկական մշակույթի լավագույն կոթողները հարեւան եւ բարեկամ պարսիկ ընթերցասեր հանրությանը:

Ներկայացնենք հայությանն ուղղված Նուրիզադեի «Պատասխան» բանաստեղծությունից հատվածներ.

*... - Այո՛, բարեկամ, ընկեր, հարազատ*
*Պարզ է, հայ չեմ ես,*
*Եվ ոչ էլ պարսիկ:*
*Թող այսպես ասեմ.*
*Ես մի գիլանցի եւ իրանցի եմ,*
*Կյանքը վիճակեց հայերեն գիտնալ,*
*Գրել ու կարդալ...*

*... Այո՛, իմ ծանոթ,*
*Բարեկամ իմոյ,*
*Սիրում եմ ես քո ազգն ու մշակույթ*
*Ես մի իրանցի, ոչ հայ բանաստեղծ,*
*Սիրում եմ այնքան, որքան դու սիրես*
*Քանի որ ես մարդ՝ մարդուն եմ սիրում,*
*Եվ նրա հոգու ստեղծած վեհը:*

# Հայկ Աւագեան...

⇨ Բ

Օրինակ, «Ջահակիր»-ի մէջ փորձած եմ ուշադրութիւն դարձնել Հայաստանի աքթիւիզմին իբրեւ հասարակութեան ներքին շերտերը բացայայտող առողջ գործընթացք՝ 2014-ին հրատարակելով երկար յօդուածաշար մը այնտեղի աքթիւիզմի մասին 2007 թուականէն մինչեւ 2012-ի առաջին կէսը (ի դէպ, յօդուածին մէջ կան ֆէյսպուքէն քաղուած տեղեկութիւններ, որոնք այսօր ոչ մէկ տեղ արձանագրուած են), 2018-էն սկսեալ հետեւողականօրէն մեկնաբանելով Ամուլսարի հարցը՝ այնտեղ պահակ կանգնած աքթիւիսթներու տեսանկիւնէն (առանց երբեք անձնական յարաբերութիւն ունենալու անոնց հետ), 2020-ին մանրամասնօրէն ներկայացնելով Ֆիրդուսի պաշտպանութեան աքթիւիզմը: Այս բոլորը թապուներ են Սփիւռքի համար, եւ եթէ յիշատակուին՝ լուրէն անդին չեն անցնիր:



2016-ին էջեր լեցուցած եմ Սասնայ Ծռերու ապստամբութեան մասին՝ զայն դիտելով ընդդիմութեան եւ մանաւանդ Հայաստանի այլընտրանքային մտաւորականութեան աչքով: Դարձեալ սփիւռքեան թապու մը:

Սայիտեան Արեւելապաշտութիւնը նպաստեց նորովի մեկնաբանելու Արմենակ Շահ-Մուրատեանի փարիզեան ուսանողական շրջանը, երբ ֆրանսական մամուլի գրութիւններուն ամբողջականութիւնը զայն կը դիտէր արեւելապաշտ տեսանկիւնէն, բան մը, որ տարբեր է Չօպանեանի նոյն շրջանին համար ներկայացուցած պատկերէն («Ջահակիր», 2021, թիւ 1884-1890):

Նոյն այդ Արեւելականութիւնը, այլեւ Հայաստանի Սոցիոսկոպի երեք հասարակագիտուհիներուն եւ Աղասի Թադէոսեանի հրատարակութիւնները արգիլուած սեռականութեան մասին, ինծի համար հիմք դարձան ապաարեւելականացնելու եւ ապասեռականացնելու արեւելեան պարուհիի տիպարը՝ բացասական պորտապարուհիէն անցնելով չէզոք արեւելեան պարուհիի հասկացողութեան, որ իր կարգին ճամբայ բացաւ մշակութապէս ներկայացնելու եգիպտական սինեմայի մէջ աստղային դրութեան հասած երեք հայ արեւելեան պարուհիներու կեանքն ու գործունէութիւնը («Ջահակիր», Յաւելուածներ ԽԳ.-ԽԴ., 2021):

Ուալթըր Օնկի բանաւորութիւնը օգնեց նորովի դիտելու Կոմիտաս վարդապետի ստեղծագործական հենքը՝ զայն ընդունելով իբրեւ անցում բանաւորութենէն դէպի գրաւորութիւն, փոխանակ միաձայնէն դէպի բազմաձայնութիւն («Ջահակիր», Յաւելուած ԻԸ., 2019):

Մինչ Սփիւռքը զբաղած է մեծահարուստներուն դէմքը ոչ միայն պայծառեցնելով, այլեւ արհեստականօրէն դարձնելով մշակութասէր, «Ջահակիր» կը հրատարակէր երկու ծաւալուն յօդուածաշարեր՝ փորձելով ներկայացնել բարեգործ հարուստներու իրական մղուածութիւնը եւ չխնայելով կուռք դարձած անուններու քննադատութիւնը («Ջահակիր», 2015, թիւ 1738-1741. 2017, թիւ 1785-1791):



Մարքսի «Դրամագլուխ»-ի ընթերցումը փափաք յառաջացուց, որ քորոնաժահրը մեկնաբանեմ դրամատիրական տնտեսութեան պարբերական ճգնաժամի ծիրին մէջ՝ ճգնաժամը դնելով ժահրէն առաջ, ճգնաժամը՝ իբրեւ ժահրի սկզբնաղբիւր եւ ոչ թէ հակառակը, ինչպէս նաեւ ժահրը ներկայացնեմ 20-րդ դարու հիւանդութիւններու զանգուածայնացումի հասկացողութեան մէջ («Ջահակիր», 2020, թիւ 1863-1872):

Դասական մարքսիզմի (բայց ոչ երբեք խորհրդային Համայնավարութեան, որոնք տարբեր բաներ են) եւ անարշիզմի ընթերցումով փորձեցի դիտարկել Հայոց Ցեղասպանութիւնը: Կը վախնանք, որ մարքսիզմով կը վերացուի ցեղասպանային հասկացողութիւնը, բայց իրականութեան մէջ, մարքսեան գրութիւններու հարազատ ընթերցումի պարագային, ճիշդ հակառակն է, որ տեղի կ՚ունենայ («Ջահակիր», Յաւելուած Դ., 2016): Առ նուազն, մարքսիզմը (ո՛չ անպայմանօրէն ինքնին Մարքսը) հրազէկ է այն մեքանիզմներուն, որոնք կրնան արգիլել ցեղասպանութիւնները ընդհանրապէս: Իսկ այսօր կ՚ուզենք արգիլել ցեղասպանութիւնները՝ գործածելով դրամատիրական աշխարհի այն նոյն գործիքները, որոնք պատճառ հանդիսացած են ու պիտի հանդիսանան ցեղասպանութիւններու: Բացատրութիւնը՝ գիրքին մէջ:

Հաւաքելով բաւարար տեղեկութիւններ Արցախի տարածքը եւ յատկապէս Ազրպէյճանի կողմը կուտակուած ահռելի քանակութեամբ ու որակով զէնքերուն մասին, 2015-ին կը գրէի. «Ղարաբաղի հարցը, կրնամ ըսել, նոր կը սկսի, կամ կ՚ընդունի նոր ու վտանգաւոր տեսք մը» («Ջահակիր», թիւ 1754): 2020-ի 44-օրեան չփաստե՞ց արդեօք ասոր ճշդութիւնը:

Եւ նման բաներ, զորս կ՚անուանեմ ներգրաւուածութիւն, բայց ներգրաւուածութիւն՝ ընդհանուր համոզումի կամարին տակ, այլ ոչ իբրեւ անկապ միաւորներու հաւաքածոյ:

Յետ-փրոֆեսիոնալ ներգրաւուածութիւնը նաեւ կը մերժէ տիրող պատումները, ուր կը բացառուին մեկնաբանութեան կարելիութիւնները, չ՚ընդունիր ազգային դէմքերու գերազգայնացումը ֆեթիշական հենքի վրայ, կը բացասէ կուսակցական եւ ազգային պատմութիւններու գերյղկումը, որուն միջոցով մտաւորականները հաճոյ կը դառնան տիրող հիմնարկներուն եւ կազմակերպութիւններուն, այլեւ հասարակութեան ամբոխավարուած հատուածին: Յետ-փրոֆեսիոնալիզմի լեզուն համընթաց է իրականութեան: Ներգրաւուածութիւնը ազգային բացառապաշտութենէն (այսօր բաւական տարածուած եւ պարտադիր) կը տանի դէպի ազգային փորձառութիւն՝ կապուած ապրուած կեանքի հետ:

*(Շարունակելի)*

# Քրիս Բոհջալյան. «Բանջարանոցով զբաղվելը հոգեկան բերկրանք է»



Բնության հետ ներդաշնակ ապրելու, հողը մշակելու ու բանջարանոցային բարիքներ ձեռք բերելու նվիրվածությունը հոգեկան բավարարվածություն, նույնիսկ բերկրանք համարող ամերիկահայ ճանաչված վիպասան **Քրիս Բոհջալյանն** իր կայքում զետեղել է հետաքրքրական ու ինքնատիպ մի նկարագրություն, որ բացահայտում է գրողի կենսագրության մինչ այժմ մեզ անհայտ էջերը:

Հիշեցնենք, Բոհջալյանը «Նյու Յորք Թայմսի» բնութագրմամբ հեղինակ է ամենալավ վաճառվող (bestselling) 22 գրքերի, որոնք թարգմանվել են 35 լեզուների եւ որոնցից երեքը ֆիլմի են վերածվել: Նրա վերջին հատորը վերնագրված է «Hour of the Witch» (Վհուկների ժամանակը), որի պատմական իրադարձությունները կապված են Հյուսիսային Ամերիկայում ընտանեկան բռնության պատճառով իրականացված ամուսնալուծության հետ, տեղի են ունենում 1662-ին Բոստոնում: Իր նախորդ գործերից են «Ինքնաթիռի ուղեկցորդուհին», «Մանկաբարձուհիները», «Հյուրասենյակ», «Ավազե դղյակի աղջիկները» եւայլն:

Բոհջալյանն իր կնոջ եւ դստեր հետ ապրում է Լինկոլնի (Վերմոնտ) կենտրոնական հատվածում: Բուսակեր է եւ շատ է սիրում ճաշակել խաչապուրի (կամ պանրով բյորեկ), հատկապես եթե պատրաստված է մորաքույր (հորաքույր) Ռոզ Մարի Մուենչի բաղադրատոմսով, կադիֆ եւ խմել՝ թան: Նախնիները համիդյան ջարդերից վերապրածներ են եղել:



Իր կայքում «Ինչո՞ւ զբաղվել բանջարանոցով» հարցին պատասխանում է գրելով, որ «զբաղվել» բայը բազում գործողություններ է ներառում իր մեջ, եռանդուն ջանքեր՝ սկսած կռանալ, բարձրանալուց մինչեւ հողը մշակել, վարել, տնկել, ցանել, ջրել, մոլախոտերը հեռացնել, հնձել, քաղել, լվանալ եւ ի վերջո ըմբոշխնել: Այսինքն «զբաղվելը» բավական աշխատատար է, եւ եթե ավելացնենք, շարունակում է նա, որ բավական էլ ծախսատար է այդ «զբաղմունքը», ապա արդարացված կլինի իմ հարցը՝ «ինչո՞ւ, ուրեմն, զբաղվել բանջարանոց պահելով»: Պատասխանը պարզ է: Որովհետեւ դա մեզ կապում է մեր այն աշխարհի հետ, որի մի մասնիկն ենք: Որովհետեւ ստամոքսի քաղցը հագեցնելուց բացի, մեզ նաեւ հոգեկան բերկրանք է պատճառում: Որովհետեւ այդ «զբաղմունքը» մեզ երջանկացնում է, եւ կինս ու ես ամառը չենք պատկերացնում առանց դրան: Ես շատ լուրջ եմ վերաբերում այդ զբաղմունքին եւ ծնողական հոգատարություն եմ ցուցաբերում բույսերին, տնկիներին, պտղատու ծառերին: Այդ «աշխատանքը» ինձ մեծապես հանգստացնում է, վերացնում լարվածությունը: Ինձ համար դա նման է հեծանիվ քշելուն: «Կարծում եմ մեր հարեւաններն էլ են նույն հաճույքը զգում բանջարանոց պահելով», եզրակացնում է Բոհջալյանը, որ որոշ ժամանակ որպես սյունակագիր աշխատակցել է «Բրլինգտոն ֆրի պրես» պարբերականում:

Պատրաստեց՝
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

# Անցյալի ու ներկայի զուգադրումները

Ա Պատումի լեզվական նյութի մեջ անգամ գրողը սկսում է խաղարկել անկումայնությունը: Հասարակության ախտածին դրսեւորույթը կերպավորում է ընտանիքի վրա. որպիսին ընտանիքն է, այնպիսին է պետությունը՝ անկումային: Սկսում է խաղարկել ծածկալեզվային բառամթերքը, հարսները «եփող-թափողից» դառնում են «նայող հարսներ», որդիները կորցնում են արժանապատվությունը: Հանակած ի՜ր տան, ի՜ր հարկի տակ մարդը դառնում է օտար, ավելորդ, անպետք: Պատումը նորից սկսում է հոսել դեպի ներս: Այս անգամ արդեն լռության խորհուրդն է շոշափում՝ իբրեւ ծերության՝ իմաստնության նշան, իբրեւ տարածություն դեպի ներս: Ըստ հեղինակի՝ լռելու ժամանակը վերահասում է ծերության շրջանում: Ինչից բխում է, որ լռում են իմաստունները՝ «Սիմոն ծերունիները»: Ահա եւ վեպի կարեւոր ընդհանրացումներից եւս մեկը՝ կյանքը մանկություն-ծերություն (կամ «վերջին մանկություն») տեղապտույտ է:

«Ծերության օրերին մենք միշտ մտքով վերադառնում ենք մանկություն կամ պատանեկություն: Այն տունը, որտեղ մենք գնում ենք մտովի, եւ որտեղ կատարվում են մանկության կինոնկարի գործողությունները, հենց դա է մեր տունը: Ու երբ ես հիշողության այդպիսի ճամփորդություն եմ ապրում, ինձ բռնում եմ Կոմիտասի մեր տանը: Հիմա էլ մտքով այնտեղ եմ... Կոմիտասի մեր տանը...» [58]:

Ավանդական մտակառույցում Կոմիտասն է ամենաորբն ու անտունին. այստեղ նույնականանում են անհատի եւ ազգի ճակատագրերը, որի անփոփոխ սիմվոլիկան Կոմիտասն է:

Որպես ինքնության հանգրվան՝ մայրն ու տունն են ընկալվում արքետիպային իմաստավորմամբ:

Մոր կամ Լուիզի(ս), ինչպես ինքն է արտահայտվում, կերպարը համակ գոհաբանություն եւ վերաբերմունք է: Լուիզի կերպարը մեզ բացահայտվում է ոչ միայն իր գործողությունների, շարժուձեւի, վարքագծի, այլեւ դրանք գնահատող եւ պաշտող հեղինակ-պատմողի որդիական դիտանկյան տեսանկյունից:

Լուիզը գեղագետ է, արվեստագետ, քմահաճ, կոկիկ, ճաշակով, չափավոր, սիրված ու սիրող, նա հաճելի կին է, մայր, տատիկ, իր տղամարդու աչքին միշտ աղջիկ թվացող ու մնացող էություն, որպիսին մեզ երեւում է կերպարի որդիական ընկալումների դաշտից: Մայրը որդու կյանքում ամենաորոշիչ դերակատարությունն ունեցել է «անմեղ» մի որոշմամբ՝ ունենալ որդի մահացած որդու փոխարեն, այնուհետ որդու բոլոր ներունակությունները կապվելու են հենց մոր կերպարին, որն ավելի կարեւորվում է, երբ զուգամիտվում է պատումի ողջ ընթացքում շոշափվող տան առանցքային մետաֆորին: Նրանք դառնում են ինքնափնտրտուքի, սեփական եսի վերադարձի նախապայմանները:

«Ապրելը կյանքի համը զգալն ու վայելելն է» [5],- գրում է հեղինակը: Հիշողության մեջ մայրը վերադառնում է տեսողական, լսողական, զգայական, անգամ համուհոտային ցուցիչներով: Եվ գրողը չհամբերելով, որ ընթերցողն ինքը հասկանա թաքնագիրը, որ ողջ կյանքում իր մանկության ուղենշումով է մարդն ապրում, գրում է. «Ծերերը հենց այդ մանկանն են հիշում, կարոտում ու փնտրում, իսկ այդ մանկան կողքին Մայրն է՝ հզոր, արքետիպիկ, քնքուշ ու անվախ միաժամանակ: Մենք փնտրում ենք մեր մեջ ապրող երեխային... Մայրն է՝ «տիրույթի» տերն ու անբաժան հրեշտակը, եւ եթե ուզես էլ, չես կարող նրան հանել այդտեղից. բնության մեջ գոյություն ունի «սեփական տարածքի օրենք»[158]:

Վեպում փիլիսոփայական հարցադրումների շրջանակը զարգանում է հակասող, բայց փոխլրացնող դրույթներով, որոնք «լինե՞լ, թե՞ չլինել» կամ «մեռնելու ժամանակը», կամ էլ «մահանալ լիներ, ծերանալ չլիներ» այս դիլեմաների միշտ բաց մնացող համատեքստում են ընկալելի:

Ամբողջացնելով վեպի մասին մեր դիտարկումները՝ կարող ենք փաստել, որ ընթերցողի դատին դրված է բազմաշերտ մի վեպ, որն աչքի է ընկնում տեքստային տարաբնույթ խաչաձեւումներով, կառուցակազմի եւ կերպակերտման ինքնատիպ որոշումներով: Միջտեքստային առնչությունները եւ դարձվածաբանական կաղապարները մեկնաբանական բաց դաշտ են ապահովում: Ժամանակակից արձակի, հատկապես վեպի ժանրային զարգացման համածիրում այն հնարավորություններ բացող վեպ է: Աչքի է ընկնում թեմայի բարդ հոգեբանափիլիսոփայական ուղղվածությամբ, իրականության (ներկա + անցյալ) ընկալման վերլուծական սթափությամբ: Գտնում է, որ մարդու ինքնորոշումն է կարեւորվում՝ բնածին ու գենետիկ փոխանցումներից զատ: Ազգային եւ համամարդկային ընդհանրացումների ֆոնին այս վեպը կենտրոնացած է ինքնաորոնման, ինքն իրեն վերադառնալու փնտրտուքին:

Վեպն աչքի ընկնող եւս մի հատկանիշ ունի՝ կախման կետերի առատությունը. այն հաղորդում է յուրահատուկ ռիթմ եւ չափականություն, որը բնորոշ չէ արձակին, բայց թույլ է տալիս որոշակի հատվածներ ընկալել իբրեւ բանաստեղծական արձակ կամ արձակ ձեւացող բանաստեղծություն: Ինչը, անշուշտ, սեղմության մեջ տեղավորվող գրողական նախատրամադրվածություն է, չբառայնացվող հուզազգացմունքային ընկալումների բաց դաշտ ապահովող պահեստային ելք:

# Հայկական թեման բյուզանդագիտական հատորում




Շվեդիայում լույս է տեսել «Ուփսալայի բյուզանդագիտական մատենաշարի» հերթական հատորը՝ «Աստվածաշնչի ազդեցությունը Բյուզանդիայում. բնագրեր, ձեռագրեր եւ դրանց ընթերցողները» վերնագրով: Անգլերեն եւ ֆրանսերեն հոդվածների շարքում տեղ է գտել նաեւ բելգիացի երիտասարդ հայագետ **Էմանուել վան Էլվերդինգեի** «Երանի՜ որ ունիցի զաւակ ի Սիոն. աստվածաշնչյան նյութեր հայերեն հիշատակարաններում» ուսումնասիրությունը:

Հայկական ձեռագրերի հիշատակարաններում Սուրբ Գրքի օգտագործումը հեղինակի թեզի թեման է: Հայտնի է, որ հայերեն հիշատակարաններում առկա է հարուստ պատմական տեղեկատվություն, սակայն վան Էլվերդինգեն դրանք ուսումնասիրել է գրական տեսանկյունից: Նա ցույց է տվել, թե հիշատակարաններ գրողները որքան խորաթափանց են եղել աստվածաշնչյան մշակույթում. անգամ կրթությամբ աչքի չընկնող գրիչները հիշատակարաններում դիմել են աստվածաշնչյան ակնարկների եւ հղումների՝ իրենց ոճը բարձրացնելու համար: Վան Էլվերդինգենը ներկայացրել է այս միահյուսված մտքի բազմաթիվ հետաքրքրաշարժ օրինակներ: Նա ոչ միայն ենթադրում է այդ միաձուլման կիսով չափ գիտակցված գործընթացը, այլեւ հուշում, որ հայ գրիչները գիտակցաբար նմանակել են աստվածաշնչյան հարացույցը: Հեղինակը ներկայացրել է այդ, իր խոսքերով, «քրիստոնեական կրթության ենթագիտակցական արձագանքների» օրինակներ, ավելի խորը խորհրդածելով այդ պարատեքստերում հիշված այն ուղերձների շուրջ, որոնք երբեմն հասել են բանաստեղծության մակարդակի:

Էմանուել Վան Էլվերդինգեն Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլիան համալսարանի բողոքական աստվածաբանության բաժնի պոստդոկտորանտ է: Որպես բելգիական Գիտական ուսումնասիրությունների հիմնադրամի եւ Լուվենի Կաթոլիկ համալսարանի գիտաշխատող, իր թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է հայերեն ձեռագրագիտության ոլորտում, 2017 թվականին: Զբաղվում է հունարեն եւ հայերեն ձեռագրերի պարատեքստերի, ինչպես նաեւ ձեռագիր գրքերի պատմամշակութային նշանակության ուսումնասիրությամբ:

Ավելացնենք, որ «Աստվածաշնչի ազդեցությունը Բյուզանդիայում» հատորը կարելի է անվճար ներբեռնել հետեւյալ հասցեից՝ http://urn.kb.se/resolve?urn=urn:nbn:se:uu:diva-420968

Ա. Բ.

# Ռուսաստան-Թուրքիա-Իրան լիակատար համակարծություն Հարավային Կովկասի հարցում

**ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ**

**Եվրասիական փորձագիտական ակումբի համակարգող, Քաղաքական վերլուծաբան**

Հայությունը Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում ուշադրությամբ հետեւում է մեր տարածաշրջանում ծավալվող քաղաքական-դիվանագիտական անցուդարձին եւ փորձում հասկանալ, թե ի՞նչ հետեւանքներ այն կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության համար: Օրերս Հայաստանի վարչապետը հայտարարեց, որ ՀՀ-ն պատրաստ է երկխոսություն սկսել Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու եւ հաղորդակցության միջոցները վերագործարկելու նպատակով: Դրանից օրեր առաջ Ռուսաստանի ԱԳՆ-ի խոսնակ Մարիա Զախարովան հայտարարել էր, որ ՌԴ-ն պատրաստ է միջնորդել հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու հարցում: Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում արդի իրողություններին հետեւող, հայ-ադրբեջանական սահմանների լարվածությամբ անհանգիստ հայ ակտիվ հասարակությունը փորձում է հասկանալ, թե որքանո՞վ են հետեւողական տարածաշրջանի մայրաքաղաքներից հնչող հայտարարությունները եւ իրականում ի՞նչ կարելի է սպասել այդ զարգացումներից: Մեր այս վերլուծականը մի փորձ է գնահատելու առկա տեղեկատվությունը, համակարգելու այն եւ ընթերցողին հուշելու կոմպետենտ մոտեցումներ այս հարցերը քննարկելու ժամանակ:

## Ռուսաստան-Թուրքիա կոնսենսուսի հարցը

Պետք է հասկանալ, որ Ռուսաստանի Դաշնության նախագահ **Վլադիմիր Պուտինը** շատ հետեւողական է հայ-ադրբեջանական հարաբերությունների հետպատերազմյան կարգավորման եւ հաղորդակցության ուղիների վերագործարկման հարցում: Այդ համառությունն ու հետեւողականությունը պարզ երեւում է 44-օրյա պատերազմին նոյեմբերի 9 եւ հունվարի 11 հայտարարությունների իրագործման ընթացքում պաշտոնական Մոսկվայի արած բոլոր հրապարակային հայտարարություններից եւ այն ջանքերից, որ գործադրում է ՌԴ-ն երեք երկրների փոխվարչապետների գլխավորած խառը հանձնաժողովի աշխատանքը առաջ մղելու ընթացքում: Իր խաղաղարար բրիգադի ներկայությունը ԼՂ հակամարտության տարածաշրջանում ապահովելուց եւ Հայաստանի խնդրանքով իր զինված ուժերի ներկայությունը հայ-ադրբեջանական սահմանի վրա տեղակայելու արագ պատրաստակամությունից հետո Ռուսաստանն ուզում է, որ Հարավային Կովկասի առայժմ չաշխատող կոմունիկացիաները ծառայեն Թուրքիայի եւ Իրանի հետ առեւտրատնտեսական կապերը իրապես աշխուժացնելու գործին: Չգրգռելու համար Ադրբեջանին, Ռուսաստանը համաձայնվեց Աղդամում ռուս-թուրքական համատեղ դիտորդական ռազմակայան տեղակայելու հարցին, այսպիսով լռելյայն համաձայնելով Ադրբեջանում նաեւ թուրքական զինված ուժեր ունենալու ադրբեջանական երազանքին:

44-օրյա պատերազմից հետո մենք կարծես հանկարծակի հասկացանք, որ թուրք-ադրբեջանական տանդեմի ռազմական, քաղաքական, տնտեսական եւ բոլոր այլ ուղղություններով լիակատար փոխգործակցությունը մեր տարածաշրջանի ամենալուրջ ետխորհրդային իրողությունն է եւ միտում ունի միայն ընդլայնվելու եւ խորանալու: 1829թ. հաստատված գիծը Ռուսական կայսրության եւ Օսմանյան Թուրքիայի միջեւ (որով Հարավային Կովկասը դառնում էր ռուսական ազդեցության տարածք) այլեւս գոյություն չունի: Թուրքիան առաջ է եկել, ամուր հաստատվել է Վրաստանում, իսկ Ադրբեջանում ուղղակի խաղում է ավագ եղբոր եւ հեգեմոնի դեր: Ռուսաստանը, որը չկարգավորված հարաբերություններ եւ լարվածություն ունի Վրաստանի հետ, ուշադրությամբ հետեւում է այդ հարաճուն փոխգործակցությանը եւ ջանքեր չի խնայում Ադրբեջանի վրա ունեցած իր ազդեցությունը չկորցնելու համար:

Պետք է հասկանալ նաեւ, որ ստանալով ԱՄՆ-ի եւ գլոբալ Արեւմուտքի, ըստ ամենայնի աջակցությունը, հետխորհրդային 30-ամյակի ընթացքում Թուրքիան անընդհատ մեծացրել է իր ազդեցությունը Մեծ Թուրանի ինտեգրացիոն գործընթացում եւ մենք, չգիտես ինչու, մեր գործնական քաղաքականության մեջ միայն հիմա (հետին թվով) գլխի ընկանք, որ այդ



Մեծ Թուրանի նախագիծը, ինչպես նախորդ 100-ամյակում, չի խափանվելու եւ չի խանգարվելու Ռուսաստանի կողմից:

Մեր ժամանակի նոր իրողությունները կայանում են նրանում, որ զուգահեռաբար ծավալվում են երկու գործընթացներ: Մեկը՝ եվրասիական տնտեսական ինտեգրման գործընթացն է, որում ընդգրկված են հինգ պետություններ Ռուսաստանի Դաշնության գլխավորությամբ եւ որին կարող են անդամ դառնալ եւս երկու-երեք պետություններ: Այս գործընթացի լոկոմոտիվը Ռուսաստանն է եւ դրա աշխարհաքաղաքական նպատակը այդ երկրի բազմաբնույթ ազդեցության ապահովումն է Եվրասիական քաղաքակրթական տարածքի վրա: Այս գործընթացը հետաքրքրությամբ ուսումնասիրում են հայ, ռուս եւ բազմաթիվ այլ գիտնականներ ու փորձագետներ, հասկանալու համար, թե որքանո՞վ է իվճակի մերօրյա Ռուսաստանը, հաշվի առնելով համաշխարհային գլոբալ հակամարտությունները եւ լարվածությունը հիմնական բեւեռների միջեւ, առաջ մղելու սեփական տարածաշրջանային մեգանախագիծը եւ գրավիչ լինելու իր մոտիկ հարեւանների համար: Մյուս գլոբալ նախագծի հարցում, կարծես, արդեն նույնպես մեծ տարաձայնություններ չկան: Սկսվելով իբրեւ լեզվամշակութային միջազգային կազմակերպություն, համաթյուրքական ինտեգրացիոն նախագիծը այսօր արդեն ներառում է թե՛ քաղաքական հարցեր, թե՛ տնտեսական համագործակցություն եւ, նույնիսկ, քննարկում է ռազմական համագործակցության եւ համատեղ զինված ուժեր ունենալու խնդիրներ: Կարելի է միայն ենթադրել, որ թյուրքական աշխարհի առաջնորդները կարողացել են ռուսական վերնախավին համոզել, որ համաթյուրքական մերձեցումը Ռուսաստանի համար մահաբեր չէ, ինչպես դա կարծում էին Ռուսական կայսրության եւ նախկին ԽՍՀՄ-ի ժամանակներում, այլ միանգամայն՝ բնական ու տրամաբանական եւ տեղավորվում է եվրասիականության աշխարհաքաղաքականության եւ փիլիսոփայության մեջ: Այստեղից եզրակացություն. եվրասիական ինտեգրման գործընթացը առաջ մղելու ժամանակ Ռուսաստանը ե՛ւ համագործակցելու է, ե՛ւ միաժամանակ սերտորեն համագործակցելու Թուրքիայի հետ Հարավային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում իր ազդեցությունը պահպանելու եւ մեծացնելու գործնական նպատակով:

Պետք է հասկանալ նաեւ, որ մերօրյա գլոբալ լարվածության պայմաններում Ռուսաստանը չի ցանկանալու բախման գնալ Թուրքիայի հետ, փորձելու է զիջումներ անել իր համար ավելի նվազ կարեւոր հարցերում եւ ինքն է քայլեր ձեռնարկելու դիվանագիտական հարթակներ տեղափոխել բոլոր այն պոտենցիալ լարվածության հարցերը, որոնք ժառանգվել են անցյալից: Մենք պետք է հասկանանք նաեւ, որ Ռուսաստանի Դաշնությունը ոչ մի դեպքում չի զիջելու իր ռազմաքաղաքական դաշնակից Հայաստանի Հանրապետության քաղաքական ինքնիշխանության, տարածքային ամբողջականության հարցերում (քանի որ դրանց նկատմամբ աչք ունեն Թուրքիան ու Ադրբեջանը), եւ եթե Հայաստանի իշխանությունները իրենց ճիշտ դիրքավորեն, պատրաստ է մեծացնելու իր ռազմաքաղաքական ներկայությունը Հայաստանում այնքան, որ դա լիարժեքորեն բավարարի մեր պետական սահմանների անվտանգությանը: Կարո՞ղ է արդյոք Ադրբեջանը Թուրքիայի աջակցությամբ դրան խանգարել: Կարծում ենք՝ ո՛չ: Դրան Ադրբեջանը կարող է խանգարել միայն թուրքական զինված ներկայությունը իր երկրում մեծացնելու միջոցով: Բայց դա հակասում է ադրբեջանական այն հավաստիացումներին, որ «Լավրովի պլանի» կենսագործումից հետո ինքը պատրաստ է մտնելու ԵԱՏՄ եւ ՀԱՊԿ: Հիմա ուշադրությամբ պետք է հետեւել, թե ինչպե՞ս է Ռուսաստանը համակերպվելու ադրբեջանական հավաստիացումների չկատարմանը եւ թուրքական հարաճուն ներկայությանը: Արդեն հաստատ կարելի է պնդել, որ Հարավային Կովկասում իրավիճակը կայունացնելու եւ հաղորդակցության բոլոր ուղիները վերաբացելու հարցում Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ մի յուրատեսակ կոնսենսուս է ձեւավորվել: Իրանը, որն ավելի քիչ երեւացող դիվանագիտական աշխուժություն ունի, իրականում նույնպես շատ շահագրգռված է Ռուսաստանի, ԵԱՏՄ երկրների, ինչո՞ւ չէ՝ նաեւ Թուրքիայի հետ հարավ-կովկասյան տարածաշրջանում տնտեսական համագործակցությունը որակական նոր աստիճանի բարձրացնելու հարցում:

## Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցը

«**Ազգ**»-ի էջերում անցած տարիներին մենք բազմիցս գրել ենք, որ դեռեւս «ֆուտբոլային դիվանագիտության» ծավալման տարիներին պարզ դարձավ, որ երկկողմ հարաբերությունների նորմալացման գլխավոր խոչընդոտը Լեռնային Ղարաբաղի հակամարտության առաջացրած լարվածությունն էր: Մեր առաջատար արեւելագետները ժամանակին եւ ճշգրտորեն զգուշացրել են իշխանություններին, որ Ադրբեջանի ազդեցությունը թուրքական տեսակետների հղկման վրա վճռական է եւ այն տարիներին Թուրքիան չէր գնալու որեւէ զիջման ի հաշիվ ադրբեջանական շահերի: Ուզում ենք հիշեցնել, որ Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ Թուրքիան, ի թիվս այլ հետխորհրդային հանրապետությունների, ճանաչեց նաեւ Հայաստանի անկախությունը, մեզ հետ սակայն դիվանագիտական հարաբերություններ չհաստատեց: Մինչեւ 2009թ. Թուրքիան ուներ երկու նախապայման: Նա Հայաստանից պահանջում էր դադարեցնել միջազգային հարթակներում Հայոց Ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացը եւ ճանաչել Ադրբեջանի տարածքային ամբողջականությունն ու դուրս բերել հայկական զինված ուժերը փաստացի զբաղեցված տարածքներից: Հայ եւ թուրք դիվանագետների դժվարին բանակցությունների արդյունքում 2009-2010թթ. ընթացքում, ԱՄՆ ակտիվ միջնորդության եւ հորդորների արդյունքում ուրվագծվեց մի վիճակ, երբ հնարավոր էր թվում հայ-թուրքական հարաբերությունների նորմալացումը եւ հաղորդակցության ուղիների վերաբացումը առանց նախապայմանների:

Հիշեցնենք, թե ինչպես էր այն ժամանակվա ԱՄՆ պետական քարտուղարը համոզել Ֆրանսիայի եւ Ռուսաստանի իր գործընկերներին համահովանավորներ դառնալու Ցյուրիխյան երկու արձանագրությունների ստորագրմանը, որոնք նույն ամերիկյան հորդորների արդյունքում, կարծես, նպաստելու էին առանց նախապայմանների հարաբերությունների հաստատմանը: Արժե հիշեցնել նաեւ, որ Թուրքիան հրաժարվեց այդ փաստաթղթերի վավերացումից ադրբեջանական ճնշման արդյունքում:

Այժմ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում բոլորովին նոր վիճակ է ստեղծվել: Բայց արի ու տես, որ Թուրքիան էլ, դիվանագիտական հաջողություն արձանագրելով ԼՂ հիմնահարցում, հիմա էլ վերադարձել է նախկին նախապայմաններին: Թուրքիայի նախագահ **Ռ.Թ.Էրդողանը** վերջերս հայտարարեց, թե Թուրքիան պատրաստ է Հայաստանի հետ հարաբերություններ հաստատել, եթե Հայաստանը հրաժարվի Հայոց Ցեղասպանության ճանաչման ու դատապարտման պահանջները հետապնդելուց:

⇨8

# Նոր սառը պատերազմում իսկապե՞ս դեմոկրատիան եւ ավտոկրատիան են հակադրվում միմյանց

**ՊԱՏՐԻՔ Ջ. ԲՈՒՔԱՆԸՆ**

ԱՄՆ նշանավոր հրապարակագիր, վերլուծաբան եւ հասարակական-քաղաքական գործիչ

***Իսկապե՞ս մենք գաղափարաբանական պատերազմի մեջ ենք Վլադիմիր Պուտինի Ռուսաստանի հետ այսօր, ինչպես էինք Ստալինի ԽՍՀՄ-ի հետ՝ Սառը պատերազմի օրերին:***

«Նա կարող է մի շանորդի լինել, բայց մե՛ր շանորդին»:

Այսպես ասաց նախագահ Ֆրանքլին Ռուզվելտը Նիկարագուայի բռնապետ Անաստազիո Սոմոզայի մասին՝ տիպիկ ամերիկյան ձեւով: Քանի որ Ամերիկան իր ծննդյան օրվանից համագործակցել է ավտոկրատների հետ, երբ ազգային շահն այդպես է պահանջել:

Ջորջ Վաշինգտոնը 1778-ին ուրախությունից պար եկավ, երբ իմացավ, որ մեր դիվանագետներին հաջողվել է դաշն կնքել Ֆրանսիայի Լուդովիկոս 16-րդ թագավորի հետ: Այդ դաշինքը, վստահ էր նախագահը, անխուսափելիորեն հաղթանակ պիտի պարգեւեր Ամերիկային:

1917 թ. ապրիլին Մ. Նահանգները մտավ պատերազմի մեջ՝ «աշխարհը դեմոկրատիայի համար ապահով դարձնելու» առաջադրանքով՝ համագործակցելով աշխարհի մեծագույն 4 կայսրությունների հետ՝ անգլիական, ֆրանսիական, ռուսական ու ճապոնական: Նրանք չորսն էլ այնուհետեւ բռնակցեցին նորանոր գաղութային տարածքներ եւ ստրկացրեցին նրանց ժողովուրդներին՝ ժողովրդավարության վճռական հաղթանակի համար մեր մղած պայքարում:

Երկրորդ աշխարհամարտին մենք զանգվածային ռազմական օգնություն տվեցինք Ստալինի ԽՍՀՄ-ին, որը նա գործածեց ճզմելու, գրավելու եւ կոմունիստականացնելու համար Եվրոպայի կեսին:

Անտոնիո Սալազարը՝ Պորտուգալիայի բռնապետը, ՆԱՏՕ-ի հիմնադիր անդամ էր: Սառը պատերազմի ընթացքում մենք դաշնակցեցինք Հարավային Կորեայի Սինգման Ռիին, Ֆիլիպինների Ֆերդինանդ Մարկոսի, Իրանի շահի եւ Չիլիի Աուգուստո Պինոչետի հետ, բոլորն էլ հայտնի ավտոկրատներ: ՆԱՏՕ-ի մեծագույն 2-րդ բանակը Թուրքիայի ավտոկրատ նախագահ Ռեջեփ Էրդողանի ղեկավարության տակ է գտնվում:

Արաբական աշխարհում մեր գլխավոր դաշնակիցները Եգիպտոսի գեներալ Աբդել Ֆաթահ ալ-Սիսին է, որը տապալեց դեմոկրատականորեն ընտրված նախագահ Մոհամադ Մուրսիին, ինչպես նաեւ Պարսից ծոցի ամբողջ երկայնքով մեկ տարբեր թագավորները, իշխանները, սուլթաններն ու էմիրները:

Ու տակավին՝ նախագահ Ջո Բայդենը համաշխարհային պայքարը սահմանում է իբրեւ պայքար՝ դեմոկրատիայի եւ ավտոկրատիայի միջեւ եւ ասում՝ «Ժողովրդավարությունը պիտի եւ պետք է հաղթի եւ իշխի»:

«Մենք համաձայն ենք ռազմավարական այդ տեսլականին», իր հերթին արձագանքում է «Վաշինգտոն Փոստը»:

Սակայն մի՞թե սա է ճշգրիտ պատկերը մեծ ուժերի միջեւ այսօրվա մրցակցության:

Եթե ավտոկրատ-դեմոկրատ բաժանարար գիծ գոյություն ունի, ապա ո՞ր կողմում են Էրդողանը, Սիսին եւ Սաուդական Արաբիայի գահաժառանգ Մոհամադ բին Սալմանը:

Իսկապե՞ս մենք գաղափարաբանական պատերազմի մեջ ենք Վլադիմիր Պուտինի Ռուսաստանի հետ այսօր, ինչպես էինք Ստալինի ԽՍՀՄ-ի հետ Սառը պատերազմի օրերին:

Մենք վեճ ունենք Պուտինի հետ Ղրիմի եւ Դոնբասի խնդրով: Պուտինն ուզում է Ուկրաինան եւ Վրաստանը հեռու պահել ՆԱՏՕ-ից: Բայց այստեղ ո՞ւր է ապացույցը, թե Պուտինն ուզում է կառավարման մեր դեմոկրատական ձեւը փոխել ու վերածել ավտոկրատիզմի:

Պուտինի՝ մեզ ուղղած առարկությունները վերաբերում են մեր քաղաքականությանը, ո՛չ թե դեմոկրատիային:

Հետ գնալով մինչեւ 1950-ականներ՝ Նիկիտա Խրուշչեւը հոխորտում էր, որ ամերիկացիների թոռներն ապրելու են կոմունիզմի պայմաններում: Այդ ե՞րբ է Պուտինը հայտարարել Կրեմլի այդպիսի գաղափարախոսական նպատակների մասին:

Արդյո՞ք Չինաստանի հետ մեր վեճը գաղափարախոսական բնույթ է կրում:

Չինաստանը մեծ եւ մեծացող տնտեսական ու ռազմական ուժ է, իր հարեւանների հետ վեճերի մեջ գտնվող:

Մեր վեճը Չինաստանի հետ գաղափարախոսական բնույթ ունի՞:

Չինաստանը առեւտրային խնդիրներ ունի Ավստրալիայի հետ, սահմանային հակամարտություն Հնդկաստանի հետ՝ Հիմալայների հարցով, տարակարծություններ՝ Վիետնամի հետ, Ֆիլիպինների եւ ուրիշ չորս երկրների հետ՝ Հարավային Չինական ծովում գտնվող կղզիների շուրջ: Չինաստանը նաեւ պահանջում է Թայվանն ու Սենկակա կղզիները, որոնք գրավված են Ճապոնիայի կողմից:

Սակայն բացառությամբ Թայվանի եւ Հոնգ Կոնգի, որը նա պահանջում է որպես իր ինքնիշխան տարածքներ, Պեկինը չի ճնշել որեւէ երկրի որդեգրելու Չինաստանի կոմունիստական կուսակցության նման վարչակարգ: Այն գոյակցում է կոմունիստական Վիետնամի, ավտոկրատ Միանմարի, կրոնապետական Աֆղանստանի եւ դեմոկրատական Հնդկաստանի, Ավստրալիայի եւ Ճապոնիայի հետ:

Մեզ հետ Չինաստանի վեճը Ամերիկայի «դեմոկրատական» լինելը չէ: Չինաստանի քննադատությունների պատճառը մեր կողմից նրա հավակնությունները արգելափակելու, Հարավային եւ հարավարեւելյան Ասիայի երկրներին մեր թիկունք կանգնելը, որը խանգարում է նրա ռազմավարական նպատակները:

Պայքարը գաղափարաբանական չէ, այլ՝ քաղաքական ու ռազմավարական:

Ուրեմն ինչո՞ւ այն վերածել վարչաձեւերի միջեւ պատերազմի: Ո՞ւր է ապացույցը, որ Պեկինը ձգտում է կոմունիստական դարձնել իր հարեւաններին կամ փոխել նրանց վարչաձեւը՝ համապատասխանեցնելու իրեն:



ՊԱՏՐԻՔ ԲՈՒՔԱՆԸՆ

Այսուամենայնիվ, նկատառելի ապացույցներ կան, որ ԱՄՆ-ը ակտիվորեն հետամուտ է տապալելու Պուտինի վարչակարգը Ռուսաստանում:

Թեեւ Պուտինի Կրեմլը ամբաստանվում է 2016 թ.ին Դեմոկրատական կուսակցության եւ Հիլլարի Քլինթոնի ընտրապայքարը հաքերության ենթարկելու գործով, սակայն նույնիսկ եթե դա ճշմարտություն է, ապա ինչպես կարելի է այն համեմատել Ռուսաստանի ներքին գործերին միջամտելու ԱՄՆ ներկայի քաղաքականության հետ:

Արդյո՞ք Ազատություն/ Ազատ Եվրոպա ռադիոկայանները օբյեկտիվ ու չեզոք են Ռուսաստանի մասին իրենց հաղորդումներում: Արդյո՞ք մեր ոչ-կառավարական բազմաթիվ կազմակերպություններն ու Ժողովրդավարության ազգային հիմնադրամը ձեռնպահ են Ռուսաստանի ներքին հարցերի նկատմամբ:

Այդ ի՞նչ է արել Կրեմլը խթանելու Դոնալդ Թրամփի քաղաքական հավակնությունները համեմատած մեր դիվանագիտական ու կառավարական ինստիտուտների, ինչպես նաեւ կիսապետական ծառայությունների հետ՝ Պուտինին ստորադասելու եւ փոխարենը Ալեքսի Նավալնու թեկնածությունը առաջ տանելու գործում:

Եթե ամերիկյան ժողովրդավարությունը պատերազմի մեջ է Ռուսաստանի հետ, ապա ո՞վ է նախահարձակ կողմում: Ո՞վ ո՞ւմ վարչաձեւն է ցանկանում փոխել:

«ԱՄՆ-ի ազգային շահերն ու ժողովրդավարության պաշտպանությունը, կամ առնվազն՝ կայունության ամրապնդումը արտասահմանում հեշտությամբ չեն կարող տարանջատվել իրարից», գրում է «Վաշինգտոն Փոստը»:

Բայց այդ որտեղի՞ց է Ամերիկան ստացել իրավունքը միջամտելու այլ երկրների ներքին գործերին՝ մերինի նման վարչաձեւ ունենալու նպատակով:

Եթե մեր նպատակը Ռուսաստանին ու Չինաստանին ժողովրդավարացման ենթարկելն է, այսինքն նրանց մեր ժողովրդավարականության սերտորեն նմանեցնելը, արդյո՞ք դա նման չէ մեր կողմից գաղափարական պատերազմ հայտարարելուն: Սա գաղափարական պատերազմի էությունը չէ՞:

Հետեւաբար, ո՞վ է ագրեսորը այս նոր՝ գաղափարաբանական պատերազմում:

Թրգմ.՝ Հ.Ա.

---

⇨7 Կարծում ենք, մեր դիվանագիտության խնդիրն է պարզելը եւ հրապարակավ հայտարարելը, թե ռուսական դիվանագիտությունը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում միջնորդական դեր ստանձնելու իր պատրաստակամության մեջ գիտե՞ արդյոք թուրքական վերոհիշյալ պահանջների մասին եւ կարծո՞ւմ է, որ բանակցությունների արդյունքում այս խոչընդոտը հաղթահարելի է:

### Հայոց Ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հարցը եւ ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացը

ԵԱՀԿ Մինսկի խմբի բոլոր երեք համանախագահները ճանաչել եւ դատապարտել են Հայոց Ցեղասպանության իրողությունը: Հայությունը ուզում է հասկանալ, թե որքանո՞վ է այդ ճանաչումը գործնականում նպաստում Հայաստանի Հանրապետության ժողովրդի անվտանգությանն ու երկրի կայունությանը: Թուրք-ադրբեջանական տանդեմի ժխտողականությունը այս հարցում աննախադեպ եւ քաղաքակիրթ աշխարհի աչքում զարմանալի չափերի ու ձեւերի է հասել: Ըստ երեւույթին, երկրորդական համարելով Հայաստանի հետ հարաբերություններ հաստատելու հարցը, պաշտոնական Անկարան (ըստ երեւույթին պաշտոնական Բաքվի հուշարարների օգնությամբ) վերադարձել է ճնշման ու նախապայմանների առաջադրման լեզվին: Հարց է առաջանում, թե կարո՞ղ են արդյոք ռուս դիվանագետները արտգործնախարար Ս.Լավրովի գլխավորությամբ այս անգամ էլ իրենք հրավիրել ամերիկացիներին եւ ֆրանսիացիներին համահովանավոր դառնալու այս նոր կարգավորման գործընթացում:

## Ռուսաստան-Թուրքիա-Իրան լիակատար համակարծություն Հարավային Կովկասի հարցում

Ամեն դեպքում, մեր պարտքն ենք համարում նշել, որ Հայաստանի իշխանությունները կոպիտ սխալ կգործեն, եթե նույնիսկ մարտավարական նկատառումներով հրաժարվեն Հայոց Ցեղասպանության գործընթացը առաջ տանելու քաղաքական կուրսից: Այդ քաղաքական պահանջը միավորում է հայերին Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում: Պետք չէ փաստորեն արդեն առկա հակասություններին ավելացնել եւս մեկը, այն էլ այսքան կարեւոր հարցում: Պետք է հասկանալ եւ անկեղծորեն համաձայնել, որ Հայոց Ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման հարցը մեր ազգային անվտանգության եւ տարածքային ամբողջականության պահպանման կարեւորագույն երաշխիքներից մեկն է:

Ինչ վերաբերում է Մինսկի խմբի աշխատանքը վորսկսելուն, ապա պարզ է, որ Ադրբեջանը կցանկանար, որ իրեն մենակ կթողնեն Արցախի հայության հետ, որտեղ ինքը իր ջանքերը կկենտրոնացներ ռուս խաղաղապահներին դուրս մղելու գործընթացում: Հայաստանի քաղաքական իշխանությունը պետք է պնդի շարունակել Մինսկի խաղաղ գործընթացը եւ հավաստիացումներ ստանալ, որ բացի Ռուսաստանից, Ֆրանսիան եւ ԱՄՆ-ն նույնպես գործնականում եւ հետեւողականորեն կպահովեն Հայաստանի սահմանների անխախտելիությունը, Արցախի ժողովրդի ինքնիշխանության իրավունքը եւ,առանց չափազանցության, հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգությունը իր Հայրենիքի երկու հատվածներում:

ՎԼԱԴԻՄԻՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ
*Անվտանգության հարցերով փորձագետ*

# Ո՞վ է Լեոնիդ Սլուցկին



Լ. Սլուցկին, ծնված 1968թ. հունվարի 4-ին Մոսկվայում, բարձրագույն կրթությամբ, ավարտել է Մոսկվայի Տնտեսական-վիճակագրային ինստիտուտը, տնտեսական գիտությունների դոկտորի կոչում ունի:

Ռուսաստանի Դաշնության Պետդումայի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ եւ 7-րդ գումարման պատգամավոր, Միջազգային հարցերով Կոմիտեի նախագահ, «Ռուսաստանի խաղաղության հիմնադրամ» հասարակական ֆոնդի վարչության նախագահ: 2000-ական թվերից զբաղեցրել է Դաշնության Դաշնային ժողովի պատվիրակության ղեկավարի տեղակալի պաշտոնը Եվրոպայի Խորհրդի խորհրդարանական ասամբլեայում (PACE):

2016թ-ի հոկտեմբերի 5-ից զբաղեցնում է Պետդումայի Միջազգային հարցերով կոմիտեի նախագահի պաշտոնը: Ունի մի շարք պետական պարգեւատրումներ, այդ թվում՝ Ռամզան Կադիրովից, Ֆրանսիայից եւ այլն, եւ այլն:

2014թ-ից Սլուցկին հայտնվեց ԱՄՆ-ի եւ Եվրոխորհրդի պատժացուցակներում: 2018թ.ին Սլուցկին անսպասելիորեն վերածվում է սեռական սկանդալի «դիմանկարի», առաջին անգամ ռուսական Պետդումայի պատմության ընթացքում սեռական սկանդալ, որը լայնորեն լուսաբանվեց ե՛ւ ռուսական, ե՛ւ արտասահմանյան մամուլում: Մի շարք ԶԼՄ-ներ համերաշխ բոյկոտ հայտարարեցին պատգամավորի դեմ:

2018թ. ապրիլի 6-ին Սլուցկին նորից հայտնվեց Արեւմուտքի պատժացուցակներում, այս անգամ 23 այլ ռուսաստանցի գործարարների եւ չինովնիկների հետ միասին:

Չմոռանանք նշել, որ 2016թ. Լեոնիդ Սլուցկին Պետդումայի պատգամավոր էր ընտրվում Ռուսաստանի Լիբերալ Դեմոկրատական կուսակցությունից (ղեկավարը՝ Ժիրինովսկին) արդեն 5-րդ անգամ անընդմեջ:

Երբ Սլուցկին մեղադրվեց սեռական ոտնձգությունների մեջ, իսկ մեղադրեցին նրան Բի-Բի-Սի ռուսական ծառայությունից **Ֆարիդա Ռուստամովան**, «Անձրեւ» հեռուստաալիքի պրոդյուսեր **Դարիա Ժուկը** եւ RTV հեռուստաալիքի լրագրողուհի **Եկատերինա Կոտրիկաձեն**, Սլուցկու շուրջը հայտնվեցին մեծ թվով պաշտպաններ, որոնք անվանեցին այդ սկանդալը ցածրորակ սադրանք հարգարժան մարդու նկատմամբ: Ի զարմանս շատերի, Սլուցկուն պաշտպանում էին ոչ միայն քաղաքական լիդերները, այլեւ՝ Պետդումայի «Կանանց ակումբը», պաշտպանեց նրան նույնիսկ Ֆրանսիայի հանրահայտ երգչուհի Միրեյ Մաթյեն:

2019թ. վերջին սեռական ոտնձգությունների պատճառով Սլուցկին պարտություն կրեց ՊԱՍԵ-ի փոխնախագահի ընտրությունների ժամանակ (154 դեմ, 105 կողմ հարաբերակցությամբ):

Սլուցկին բավական հարուստ է՝ նրա «BENTLEY» մակնիշի 2 ավտոմեքենաները արժեն արդեն 30 մլն. ռուբլի, ունի վարձակալած տարածքներ, որոնք երբեք չի հայտարարագրում: Շրջանառվում են լուրեր Սլուցկու կաշառակերության մասին, նրա կնոջ փենթհաուսների մասին (թանկարժեք բնակարաններ բարձրահարկերի վերնամասում): Իսկ հիմա գրողի ծոցը ուղարկենք «Բենթլիները», վարձակալած տարածքները, փենթհաուսները, շքեղ վիլլաները, որ վարձակալում է Սլուցկու ընտանիքը Թուրքիայի Բոդրում քաղաքի առողջարաններում, հատկապես՝ «Six Senses Kaplankaya» թանկարժեք հյուրանոցում, 1101 վիլլայում: Այդ վիլլան ունի միայն 7 ննջասենյակ: Մեկ գիշերն այնտեղ արժե մոտ 3000 դոլար: Չհիշատակենք նաեւ Շվեյցարական դպրոցը, որտեղ տասնյակ հազարավոր դոլարներ վճարելով սովորում է Լիդիա Սլուցկին՝ պատգամավորի աղջիկը:

Այս բոլորը մեզ քիչ է հետաքրքրում: Հայաստանն ու հայ ժողովուրդը այնքան ծանր վիճակում են, վաղվա օրը այնքան անորոշ է, ինչպես պետք է պատրաստվենք նոր պատերազմի, այս անգամ ովքե՞ր են կռվելու մեր դեմ, ինչպե՞ս ենք դուրս գալու այս ներքաղաքական եւ արտաքին քաղաքական ճգնաժամից, ինչպե՞ս պետք է նոր ռազմաքաղաքական վստահելի գործընկերներ ձեռք բերենք: Հետեւաբար Սլուցկիների մասին խոսելը, նույնիսկ մտածելը ավելորդ շքեղություն է: Նրա մասին թող մտածեն ռուս հասարակության ներկայացուցիչները, որոնց շրջանում նույնպես պրոբլեմները շատ-շատ են: Մեզ, իսկ ավելի կոնկրետ՝ Հայաստանի հատուկ ծառայություններին պետք է հետաքրքրեն Լեոնիդ Սլուցկու եւ նրա ընտանիքի անդամների՝ Ռուսաստանում եւ Ադրբեջանում գործող (Կարմիր Սլոբոդա բնակավայրում) լեռնային հրեա-ադրբեջանցիների հետ կապերը:

Խոսքը վերաբերում է ազեր գործարար **Սերդուհայ Յուշվաեւին**, որը անտոկոս վարկեր է տրամադրում Լ. Սլուցկու կնոջը: Յուշվաեւը Մոսկվայում հայտնի դեմք է: Նա աշխատում էր որպես գլխավոր տնօրեն հանրահայտ միլիարդատեր **Գոդ Նիսանովի** «Կիեւյան հրապարակ» շինարարական ընկերությունում: Հայտնի է, որ Սլուցկին մտերիմ հարաբերություններ ունի նաեւ Գոդ Նիսանովի հետ, որի մասին ես գրել եմ դեռ 2020 թվականի դեկտեմբերի 25-ի «ԱԶԳ» շաբաթաթերթի 8-րդ համարում: Ցանկացողները կարող են վերանայել հոդվածս, որն այդ ժամանակ «Ադրբեջանցի գործարար Գոդ Նիսանովի ընկերները» վերնագրով կրող հոդվածս մեծ «ընթերցասրահ» գտավ:

Ինչո՞վ էր աչքի ընկնում Գոդ Նիսանովը այդ հոդվածում: Իր հաստատուն կապերով Մոսկվայի ներքին գործերի գլխավոր վարչության պետ **Վլադիմիր Պրոնինի**, նրա որդի՝ **Ալեքսանդր Պրոնինի**, ներքին գործերի նախարար **Վլադիմիր Կոլոկոլցեւի** հետ: Սակայն ուշիկանական ուժերի հետ կապերը Ռուսաստանի պայմաններում, ինքնըստինքյան պարզ է՝ ինչ նպատակներ է հետապնդում, եւ դա կարող է անհանգստացնել մեզ միայն որոշակի կոնտեքստում, կապված հայ համայնքի, հայ գործարարների հետ Ռուսաստանում: Իսկ այ, լուրջ անհանգստության պատճառ կարող էլինել Գոդ Նիսանովի չափից դուրս կայուն, բարեկամական կապերը Ռուսաստանի Դաշնության Արտաքին հետախուզության պետ **Սերգեյ Նարիշկինի** եւ նրա դուստր **Վիկտորիա Նարիշկինայի** հետ: Գոդ Նիսանովի միջոցով Վերոնիկան մտերիմ հարաբերություններ է հաստատել նաեւ Իլհամ Ալիեւի դուստր՝ **Լեյլայի** հետ, որի հետ հաճախ Վերոնիկան ճամփորդում է Նիսանովին պատկանող «Radisson» նավակազմի նավերից մեկով Միջերկրական ծովում: Հոդվածում ես չեմ պնդել, որ Գոդ Նիսանովը զբաղվել է հետախուզական-գործակալական աշխատանքով Ռուսաստանի կամ հատկապես Հայաստանի դեմ: Բայց երկար ժամանակ լինելով այդ ոլորտում, անհեթեթություն կհամարեի, եթե թուրք-ադրբեջանական հետախուզությունը աչքաթող աներ նման հնարավորություն եւ ինչ-որ չափով չօգտագործեր Նարիշկինի հնարավորությունները, այն էլ պատերազմից առաջ, կամ ընթացքում, կամ էլ հետո:

Վերադառնանք Լեոնիդ Սլուցկուն:

Թուրքիայում Ռուսաստանի դեսպան **Անդրեյ Կառլովի** սպանությունից հետո (դեկտեմբեր 2016թ., չարագործը նախկին թուրք ոստիկան Մեվլութ Ալթինթաշն էր) Լեոնիդ Սլուցկին շտապեց հաստատել, որ ռուս-թուրքական հարաբերություններում լարվածություն չի սպասվում, որ այդ ահաբեկչությունը սադրանք եւ դավ էր «Արեւմուտքի» կողմից:

Էրդողանի հաղթանակը ընտրությունների ժամանակ Սլուցկին այնպիսի ոգեւորությամբ ընդունեց, կարծես անձամբ ինքն էր հաղթել: Չնայած տարբեր իրադարձություններին, կապված նույնիսկ Ղրիմի եւ Սիրիայի հակասությունների հետ, Սլուցկին գտնում է, որ Թուրքիան եւ Ռուսաստանը ստրատեգիական գործընկերներ են (իմիջիայլոց, նա միակ քաղաքական գործիչը չէ Ռուսաստանում, որ այդպես է մտածում):

Թուրք-ադրբեջանական համատեղ զորավարժանքներում կամ միասնական զինված ուժեր ստեղծելու գործում Սլուցկին նույնպես որեւէ վտանգ չի տեսնում եւ առաջարկում է չփնտրել «սեւ կատու» մութ սենյակում, նամանավանդ եթե կատու չկա:

Եվ այսպես, Գոդ Նիսանովը ծառայում է Թուրքիային եւ Ադրբեջանին, դա հիմա գրեթե մեկ պետություն է, վստահորեն կարելի է նշել, որ նա ազդեցության գործակալ է:

Լեոնիդ Սլուցկին Գոդ Նիսանովի հերթական «թիրախներից է» եւ կօգտագործվի նրա կողմից հնարավորության սահմաններում, դրա փոխարեն Սլուցկու ընտանիքը կօգտվի Նիսանովի տրամադրած շատ արտոնություններից: Դե իհարկե, Սլուցկին, միգուցե այնքան էլ վտանգավոր չէ, ինչպես բարեկամությունը Նարիշկինի հետ, բայց ո՞վ գիտե, ինչ լծակներ ունի Սլուցկին հայ-ռուսական հարաբերությունների վրա ազդելու:

Դե ի՞նչ արած, նույնիսկ Լեոնիդ Սլուցկին ընդամենը մեկ կյանք ունի, որից շռայլորեն օգտվում է:

# Արչի Գալենցը 50 տարեկան է



Միջազգային ճանաչման արժանացած, Գերմանիայում ապրող հայազգի նկարիչը յուրովի է նշել իր ծննդյան 50-ամյակը, կազմակերպելով տարբեր ժամանակաշրջանների իր ստեղծագործությունների ցուցահանդեսը՝ 2019-ին բացված «Wolf and Galentz» պատկերասրահում: Ցուցահանդեսի նախնական խորագրերից են եղել «Առաջին 50-ը», «Արհեռգարդիստի կեսդարյա ճանապարհի ձեւավորման փուլերը» եւ «Երկունքը», սակայն ի վերջո նա հանգել է «Անձնական ակումբ» տարբերակին, որը կանխատեսում էր մտերմիկ հավաք (ոչ թե ցուցահանդես) ընկերների, բարեկամների եւ մասնագետների: «Անհարմար էր ներկա ժամանակներում, երբ Հայրենիքդ գտնվում է բազմաթիվ չլուծված հարցերի բեռի տակ, շքեղորեն նշել քո տարեդարձը», նշել է Արչին, միաժամանակ ավելացնելով, «բայց չէի ցանկանա այս գեղեցիկ պատկերասրահը վերածել «լաց ու կոծի պատի»: Այդ պատճառով էլ ստեղծագործական տարբեր շրջաններս 8 առանձին ծրագրերի եմ բաժանել՝ «Վերապրելու կաշվե պարկը», «Ինքնատեղակայում: Շփոթված, բայց կարեկցող», «Ոչ կարմիր դրոշներ» եւ այլ անվանումներով, որպեսզի այցելուներ, իմ գործընկերները նոր ժամանակների լույսի ներքո դիտարկեն եւ քննարկեն իմ անցյալի գործերը»: «Վերապրելու կաշվե պարկ» ծրագրի ներքո ցուցադրվել են նաեւ Աշոտ Աշոտի, Սիլվինա Տեր-Մկրտիչյանի եւ Նշան Գազազյանի կտավները:



*Արչի Գալենց. «Կարմիր պաստառներ»*

Գալենցը ծնվել է Մոսկվայում, որտեղ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի Գեղարվեստաթատերական համալսարանը: Երեք տարի անց, որպես այցելու ուսանող, կուրսերի է մասնակցել Բեռլինի Գեղարվեստի համալսարանը: Մագիստրոսի աստիճան է ստացել 1997-ին: Առաջին անգամ ցուցադրվել է Բեռլինում 2000 թվին: Դրանից հետո ավելի քան 80 խմբակային ցուցահանդեսների է մասնակցել: 2019-ին Անդրեաս Վուլֆի հետ հիմնել է իր պատկերասրահը: Սփյուռքի նախարարության կողմից 2012-ին պարգեւատրվել է Արշիլ Գորկի մեդալով:

Տեղեկությունը՝ Մուրիել Միրաքի հոդվածից «Միրոր-Սփեքթեյթրում»:

Հ. Ծ.

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

# Երբ ցանկալին իրականություն է ներկայացվում

ՀՀ բարձրագույն պաշտոնյաների կողմից տարբեր առիթներով արվող հայտարարությունների, հարցազրույցների ու ասուլիսների ընթացքում հնչեցրած հաղորդումներից մեր մարդկանց մոտ կարծիք է կազմավորվում, որ երկրում ամեն ինչ լավ է, կամ գրեթե լավ է, մտահոգվելու հարկ չկա: Այս առումով երբ հպարտ հռչակված քաղաքացին որեւէ ծառայությունից կամ առեւտրային հաստատությունից է փորձում օգտվել, պարզվում է, որ մեր կառավարիչների յուրօրինակ լավատեսությունը, մեղմ ասենք, այնքան էլ հիմնավոր չէ, քանզի թե՛ ծառայությունների որակը, թե՛ սահմանված գները մեր համեստ կենցաղով ապրող մարդկանց պարզապես չեն գոհացնում, նրանց սրտով չէ: Ասվածը վերաբերում է մեր առօրյայի բոլոր ոլորտներին՝ պետական ու համայնքային կառավարումից մինչեւ պարզ կենցաղային հարցեր: Փորձեմ ասելիքս հիմնավորել կոնկրետ օրինակներով, դրանց ընտրությունը կատարելով գրեթե պատահական սկզբունքով, առանց նախնական տրամադրվածության:

Նախորդ տարվա հունվարին Կապանում կազմակերպված ասուլիսի ընթացքում խոսելով ՀՀ-ում 100 հարցերի լուծումներից, երկրի գործադիր ղեկավար Նիկոլ Փաշինյանն անդրադարձավ նաեւ գյուղատնտեսությանը, մասնավորապես նշելով. մեկնարկել է 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիրը, որի շրջանակում ձեռք է բերվել 304 գլուխ կենդանի՝ 391 մլն դրամ արժեքով: Մեկնարկել է նաեւ 2019-2023 թվականների ոչխարաբուծության եւ այծաբուծության զարգացման պետական աջակցության ծրագիրը. ձեռք է բերվել 203 գլուխ կենդանի, տրամադրվել 79 մլն դրամ: Ընդամենը երկու, ոչ մեծ ճյուղերին օժանդակությունը, խոսքը պետության կողմից իրականացված ծախսերի մասին է, կազմել է 470 մլն դրամ, մոտ 1 մլն դոլար: Սրանք հրամցվել են ՀՀ թիվ 1 պաշտոնյային, որն էլ դրանք հանրայնացրել է, անշուշտ՝ աջակցության ակնկալիքով: Ավաղ, ՀՀ քաղաքացիս, որ նաեւ ակտիվ լրագրությամբ է զբաղվում, վերջիններիս թվում չէ, քանզի երկրի ոչ հարուստ բյուջեից իրականացված ֆինանսական միջոցների եւ ձեռքբերված գլխաքանակների արդյունքում պարզվում է, որ դրանց խոշորի 1 միավորի դիմաց վճարվել է 1.300.000 դրամ, մանրի դեպքում՝ 340.000 դրամ: Հայտնի է, որ վերջին գումարով մեր անասնաշուկաներում առնվազն 350 կգ կենդանի քաշով խոշոր եղջերավոր կարելի է գնել, իսկ 1.3 մլն-ով նվազագույնը 3 կով: Այն մոտեցումը, թե արտերկրներում գնված խոշոր եղջերավորները ՀՀ-ում հարցեր կլուծեն, երբեւէ չեն արդարացել, քանզի չի լուծվում դրանց կերակրմանն անհրաժեշտ լիարժեք կերերի խնդիրը: Որպես հիմնահարց այն մեզանում գոյություն չունի, բացարձակապես կապ չունի ոլորտի պատասխանատուի կուսակցական պատասխանատվությունը: Հետեւանքը մեկն է՝ անասնատեսակների ցածր կաթնատվությունն ու մսաճը, գյուղաբնակների էլ՝ դրանց իրացման գներից դժգոհությունը:



Այսօրինակ հարցերից խոսվեց ՀՀ կառավարության սեպտեմբերի 2-ի նիստում, երբ գյուղոլորտի պատասխանատու էկոնոմիկայի նախարար **Վ. Քերոբյանը** խաղողի 180 հազար տոննա արտադրության թիվ հնչեցրեց: Դե նախարար է, պարտավոր է ինքնավստահ լինել, միայն թե պարզ չէ, այգիների ի՞նչ տարածքներից է հավաքվելու բերքի այդ քանակը, 12 հազար հեկտարի՞ց, թե՞ 15 -16 հազարից: Այստեղից էլ մթերման գինը, որի հարցում խաղողագործները լուրջ դժգոհություն ունեն, կգ-ի դիմաց 130 դրամը հազիվ ինքնարժեքն է փակում հայտարարությամբ: Եվ հարցը, թե ինչո՞ւ է երկրում արտադրված գրեթե ողջ խաղողը ուղղվում խոշոր վերամշակողների մթերումների պահանջների բավարարմանը, հնչում է ինքնաբերաբար: Երկրում պարզապես գոյություն չունի փոքր ու միջին գործարարության օժանդակության միջոցով խաղողի հումքից գինիներ արտադրելու որեւէ ծրագիր, որպիսին իրականացվում է երկիր մոլորակի չորս կողմերում: Ֆրանսիայում բնակվող հարազատս դիտելով արդեն սկսված ճանապարհներ փակելու մերոնց փորձերը, վրդովված նշում էր, որ խաղողագործներին դեպի գինեգործություն ուղղորդելը շատ հարցեր է լուծում, սկսած նոր աշխատատեղերի բացումից մինչեւ գինու որակի ու այն սպառելու հարցերը: Նա հաստատեց, որ իր բնակության վայր Լիոնի սուպերմարկետներում սկսած մեկ եվրոյից 0.7 լիտր տարողության գինիներ են վաճառվում, որպիսի բան չի նկատում Հայաստան այցերի ընթացքում: Պետական կառույցներն այստեղ անելիքների մի ամբողջ շարք ունեն, որը ցավալիորեն քողարկում են գինու ինչ-ինչ ոչինչ չասող փառատոներ հռչակվող յուրօրինակ միջոցառումների կազմակերպումով: Այս առումով արդյո՞ք նպատակահարմար չէ պետության ֆինանսական աջակցությունն ուղղել գինու հումք արարող այգեգործին, այլ ոչ՝ բանկերին, սուբսիդավորման անվան տակ: Այսկերպ խաղողագործն իր աշխատանքի շարունակականություն կունենա, տարբերաբար ֆինանսական միջոցներ կգոյանան, որն այսօր փոխարինվում է խաղողը հանձնելուց հետո բանկի վարկերը փակելով: Եվ այսպես՝ տարին տարու վրա, այդկերպ էլ՝ հայաստանաբնակին հեռու վանելով գինու մեկ գավաթը վայելելու ամենօրյա հաճույքից:

Թե ինչու են այսօրինակ խնդիրները մեզանում անտեսվում, դրանք փոխարինվում, ասենք, գյուղական համայնքների խոշորացումով, պարզապես անհասկանալի է: Հանրային շրջանակներում կարծիք կա, որ այսօրինակ կառավարումը պայմանավորված է խոշոր վերամշակողների ու արտադրողների շահերի սպասարկումով, ովքեր իշխանությունների գործողություններն ուղղորդելու լծակներ ունեն: Բայց չէ՞ որ նրանց որեւէ մեկը չի հարցնում, թե ինչպես են կուտակել առաջին միլիոնն ու առկա ռեսուրսները, կարող են եւ իրենց անհրաժեշտ խաղողի այգիները հիմնելուն զուգահեռ ալկոհոլային խմիչքներն արտադրել, թե հյութեր ու դոշաբներ թողարկել: ՀՍՀ հանրագիտարանից տեղեկանում ենք, որ վերջին մուգ գույնի թանձր քաղցուն օգտագործվում է ամենատարբեր նպատակներով, սկսած թերմոն կոչվող եռացրած գինու ստացումից մինչեւ բուժիչ հատկություններով կիրառումը:

Անշուշտ լրագրային էջն այն տարածքը չէ, որտեղ հարկ է համանման մտահոգություններ հայտնել: Բայց ի՞նչ կարող ես անել, երբ այդ հարցերը լուծելու համար հանրության վարձած այրերն իրենց պարտականություններն ու պարտավորությունները ըստ արժանվույն չեն կատարում ու ցանկալին իրականություն են ներկայացնում,: Իսկ ահա գինու վայելքը էսթետիկականից զատ միլիարդավոր դրամների առեւտրաշրջանառություն կապահովի ՀՀ տնտեսության համար:

Այսպես էլ ապրում ենք:

06.09.2021թ.

ՆԱԻՐ ՅԱՆ

# Խաղողը չի մթերվում, եղածն էլ՝ 115 դրամով

Ճանապարհ փակելը թրենդային վարքագիծ է դարձել: Հիշենք, որ օգոստոսի 25-ին ադրբեջանական կողմն էլ էր այդ քայլին դիմել՝ փակելով Կապան-Գորիս միջպետական ճանապարհի Կարմրաքար-Շուռնուխ հատվածը:

Հայ գյուղացիները հաճախ են ճանապարհ փակելով հայտնում իրենց բողոքը՝ հատկապես ջուր չունենալու պարագաներում:

Ճանապարհափակման հերթական դրսեւորումը շաբաթվա սկզբին Արագածոտնի մարզի Ուջան գյուղում էր. խաղողագործները փակել էին Երեւան-Աշտարակ մայրուղին. նրանք բողոքում էին, որ իրենց խաղողը չեն մթերում:

«Մենք պահանջում ենք, որ մարզի ղեկավարը գա էստեղ, նախարարությունից էլ մարդ գա, մեր հարցի լուծումը տա:

Խաղողի գործարանների կեսը խաղող ընդունելուց հրաժարվում է, ասում են՝ անցած տարվանից մեր հորերը լիքն են, խաղող ընդունելու ձեւ չունենք: Ով էլ ընդունում է, ասում է՝ 115 դրամ: Պռոշյանի կեսը բացվել է, արդեն 100 մեքենա հերթի մեջ կա: Պայմանագրում էլ կետ ունեն, որ իրենց ուզած որակը չլինելու դեպքում գնիջեցում է լինելու: Այսինքն կարող են



ասել՝ 60 դրամ է, չես ուզում, դու գիտես, գնա: Գումարն էլ 270 օր հետո է լինելու»,- բոլորի անունից բողոք է հայտնել խաղողագործներից մեկը:

Արագածոտնի մարզի Արագածոտն գյուղի խաղողագործները եւս հետեւել են ուջանցիների օրինակին՝ փակելով Երեւան-Աշտարակ մայրուղին: Նրանք եւս դժգոհել են, որ խաղողը մթերվում է շատ ցածր գնով, բացի այդ, գործարանների կեսն առհասարակ հրաժարվում է խաղող մթերել: Գյուղացիներն օրվա ընթացքում ճանապարհը բացել են, սակայն նրանց խնդիրները չեն լուծվել: Նրանք գնացել են մարզպետարան, այնտեղ քննարկվել են դժգոհությունները, սակայն արդյունքում ոչինչ էլ չի փոխվել:

Խաղող մթերող գործարանները մասնավոր ձեռնարկություններ են եւ իրենք են որոշում, թե ինչ գնով մթերել խաղողը, առավել եւս, որ կան գյուղացիների հետ կնքված պայմանագրեր, ըստ որոնց՝ խաղողը կարող է մթերվել կիլոգրամը 115-135 դրամի սահմաններում:

«Պռոշյանի կոնյակի գործարանն այս պահին պատրաստ է միայն 115 դրամով ընդունել խաղողը, «Սասունիկ» գինու գործարանը մթերում է 135 դրամով, բայց սահմանափակ քանակությամբ՝ ընդամենը 10 գյուղացիական տնտեսությունից: «Հայասի» գործարանի հետ գյուղացիները պայմանագրեր ունեն, բայց հայտնել են, որ մթերման գինը պարզ կդառնա միայն սեպտեմբերի 10-ից հետո:

Նախորդ տարի, օրինակ, գյուղացիները նաեւ Քանաքեռավան համայնքի «Շամպայն» գինիների գործարանի խաղողի ընդունման կետում են հանձնել, բայց այս տարի, ասում են, պահանջարկ չունեն եւ չեն կարող մթերել»,- հայտնել է Արագածոտնի համայնքապետը:

Նման իրավիճակում, երբ խաղողը հասունացել է ու այլեւս սպասել չի կարող, գյուղացիները ստիպված են լավագույն դեպքում բերքը մթերել 115 դրամով:

**ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ**
պգդ, պրոֆեսոր

# Հաղթանակը վաղ թե ուշ լինելու է

***Այնպես է ստացվել, որ մինչեւ վերջերս հայ ժողովրդի պատմությունը մեզանում ուսումնասիրվել եւ ուսուցանվել է համաշխարհային պատմությունից կտրված, կղզիացած ու ինքն իր մեջ ներփակված: Միայն երբեմն-երբեմն շատ թռուցիկ անդրադարձներ են եղել աշխարհացունց իրադարձություններին եւ այն էլ այնքանով, որքանով դրանք ուղղակի ազդեցություն են ունեցել մեր ճակատագրի վրա: Այդ հարցն ավելի տխուր վիճակում է նաեւ Սփյուռքում: Այնտեղ նայած թե որ կուսակցության հովանավորությամբ է գործում այս կամ այն կրթօջախը, հայոց պատմությունը ուսուցանվում է ոչ միայն համաշխարհայինից կտրված, այլեւ տվյալ կուսակցությանը հարմար, իրեն ձեռնտու պարզաբանում-մեկնաբանություններով: Վերջին ժամանակներում թեեւ երկչոտ, սակայն փորձեր են արվում այդ սխալն ուղղելու ուղղությամբ, որն, անկասկած, դրական տեղաշարժ է: Ու որպեսզի կարողանանք դուրս գալ «Մենք ենք, մեր սարերը» հոգեվիճակից, անհրաժեշտ է մերօրյա կարեւոր իրադարձություններին անդրադառնալիս ցույց տալ հայ ժողովրդի կապն ու կրած ազդեցությունը դրանցից: Սույն հոդվածն էլ այդպիսի փորձ է:***

Ընդունենք կամ ոչ, աշխարհում լուրջ փոփոխություններ են կատարվում: Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Բայդենի համար եւս ձախողված համարվեց Քիսինջերի քաղաքական կուրսը, որով նախատեսվում էր միլիոններ զոհելով Կենտրոնական Ասիայում (եւ ոչ միայն) պահել ԱՄՆ-ի ազդեցությունը, եւ ճիշտ համարելով դեռեւս Թրամփի ընդունած «Ամերիկան ամերիկացիների համար» հայեցակարգը՝ դուրս բերեց իր զորքն Աֆղանստանից: Այնտեղ հերթական անգամ հաղթանակ տարավ եւ իր իշխանությունը հաստատեց «Թալիբան» շարժումը: Ընդհանուր առմամբ, ԱՄՆ-ն եւ Արեւմուտքը երբ ցանկանում են որեւէ երկրի հիմնավորապես ենթարկեցնել իրենց, դրանք հայտարարում են միջազգային ահաբեկչության օրրան եւ ամբողջ միջոցներով սկսում պայքարել դրա դեմ, հնարավորինս ավերում ու թուլացնում այն (վերջին շրջանում այդպես եղավ Իրաքում, Սիրիայում, Լիբիայում): Նույնը փորձեցին կատարել նաեւ Աֆղանստանում, բայց ինչ-ինչ պատճառներով կիսատ մնաց: Ինչո՞ւ:

Նախ՝ բռնապետերի կամ ահաբեկիչների, ժողովրդավարների կամ ազատարարների մասին տեսությունների ստեղծումն ուղիղ համամասնական է Արեւմուտքի ծավալապաշտական ձգտումներին: Աֆղանստանում տեղի ունեցող իրադարձությունները ցույց տվեցին, որ Թալիբների գործողությունները բոլորովին էլ չեն խոսում այն մասին, որ նրանք ահաբեկիչներ են, եւ որ ԱՄՆ-ը հաստատվելով այնտեղ՝ տեղի ժողովրդի համար ժողովրդավարություն եւ խաղաղություն էր ուզում հաստատել: Նախկինում էլ գրեթե նույն սցենարով էր գործում նաեւ ԽՍՀՄ-ը. Բրեժնեւի դրածո Բաբրակ Քարմալը ամենեւին էլ չէր արտահայտում աֆղան ժողովրդի շահերը: Այնպես որ, «Թալիբան» շարժման հաղթանակը ցույց տվեց, որ թեկուզ տրիլիոն դոլար էլ ծախսած լինես, արդյունք չի տա, եթե հաղթանակի հասնելու հարցում ժողովուրդը միակամ է եւ վճռական: Եվ որքան էլ այժմ փորձեն աֆղան ժողովրդի հաղթանակը համարել ահաբեկչական ուժի հաղթանակ, իրականում բոլորովին էլ այդպես չէ: Թալիբանների վարքագծից պարզ երեւում է, որ նրանք հանդուրժող են տարբեր ազգություններից բաղկացած ողջ բնակչության նկատմամբ: Այլ բան է, որ բոլոր նրանք, ովքեր դեմ գնալով սեփական ժողովրդի շահերին համագործակցել էին ամերիկացիների հետ, դիմեցին փախուստի: Ընդ որում, թալիբների այդ հանդուրժողականությունը դրսեւորվեց նաեւ իրավաբանորեն, որի առհասցյան եղավ նրանց հայտարարած ընդհանուր համաներումը: Իսկ նրանց կողմից ԶԼՄ-ներով շարունակաբար եւ հաճախակի հնչեցրած իրար հանդուրժելու կոչերը, մեղմ ասած, ամենեւին չեն վկայում ահաբեկչության եւ բռնության մասին:

Կարելի է ենթադրել նաեւ, որ ԱՄՆ-ը հերթական խարդավանքն է հյուսում Ռուսաստանի դեմ: Քանի որ ոչ ոք ոչ ոքի հենց այնպես ոչինչ չի նվիրում, հետեւապես բոլորովին չի կարելի բացառել այն, որ իրենց իսկ երկրում իշխանությունը Թալիբանին զիջելով եւ հսկայական քանակի նորագույն զինատեսակներ ու տեխնիկա թողնելով՝ ԱՄՆ-ը փոխարենը նրանցից կպահանջի անել ամեն ինչ միջինասիական պետությունները Ռուսաստանից «պոկելու» կամ ամենաքիչը համեմատաբար հանգիստ այդ տարածաշրջանում խժդժություններ կազմակերպելու համար:

Այս խորապատկերի վրա հետաքրքրականն այն է, որ մեր շատ քաղաքագետներ, իրենց երկրի ծանր ու անորոշ վիճակը թողած, արդեն «կարդում են» թալիբների մտքերն ու նպատակները եւ գնահատում են նրանց Հայաստանին պատճառվող վտանգներն ու դրանցից բխող վնասների չափը: Հատկապես շեշտվում է եւ հայերիս համար սարսափելի հնչող թալիբանների մահմեդական լինելու եւ ջիհադի օրենքներով առաջնորդվելու հանգամանքները: Բայց իզուր: Քանի որ նախ՝ «սատանան այնքան սարսափելի չէ, որքան իր անունը», հետո էլ նրանց պահվածքից եւ տարածած հայտարարություններից ակնհայտորեն պարզ երեւում է, որ թեեւ թալիբներն ստեղծելու են մի նոր իսլամական ֆունդամենտալիզմի տիպի պետություն, սակայն դրա գլխավոր նպատակը լինելու է ինքնուրույնությունն ու անկախությունը պահպանելը:

Նկատելի է նաեւ, որ Աֆղանստանի հարցում կրկին ակտիվացել է Ռուսաստանը եւ աննախադեպ՝ նաեւ Չինաստանը: Սակայն վերլուծությունները ցույց են տալիս, որ վերջիններս ավելի խելացի են այնքան, որ հազիվ թե կրկնեն ԽՍՀՄ եւ ԱՄՆ բռնությամբ այնտեղ կրկին վարչակարգ փոխելու դառը փորձերը: Իսկ Թուրքիայի Աֆղանստանին իր ազդեցության տակ գցելու ձգտումներն ավելի շատ թմբկահարվող քարոզչություն են, քան իրականությանը մոտ գործողություններ: Կարծում ենք նաեւ, որ գրեթե քայքայված տնտեսություն ժառանգած թալիբները դժվար թե ծավալապաշտական նպատակներ որդեգրեն: Իսկ Փուշթունների հետնորդները, որոնց ժամանակին չկարողացավ ծնկի բերել նույնիսկ ամենազորեղ Ալեքսանդր Մակեդոնացին, կամաց-կամաց ժողովուրդների մեջ կարմատավորվեն որպես ազատության եւ անկախության աննկուն մարտիկներ: Այնպես որ, պանթուրքիզմից վախեցած հայ քաղաքագետներն ամենեւին էլ թող նոր թշնամի չփնտրեն թալիբական նորաստեղծ պետության մեջ: Ավելի լավ կլինի, որ կատարված իրադարձությունները մանրամասն ուսումնասիրենք եւ դրանցից դասեր քաղենք: Հատկապես կարեւոր է հասկանալ վերջապես, որ մեր ազգային անվտանգության հայեցակարգը չպետք է կառուցենք Ռուսաստանի կամ Արեւմուտքի մեր տարածաշրջանում ներկայության վրա, քանի որ նրանք ամեն րոպե կարող են լքել մեզ եւ հեռանալ: Կարեւոր է նաեւ ըմբռնել, որ ներկա պահին Ռուսաստանին հակադրվելը մեր շահերից չի բխում: Հետո էլ նա եւս կարող է հեռանալ եւ մեզ մենակ թողնել մեր ոխերիմ թշնամու հետ: Անչափ կարեւոր է, որ մենք մենք ճիշտ դիվանագիտություն որդեգրենք նրա այս տարածաշրջանում ունեցած գործունեության բոլոր դրսեւորումների դեպքում եւ հանկարծակի չզգանք նրա քայլերից:



Անցյալում նույնպես մեզանում գրեթե նույնատեսակ իրավիճակ եղել է: Երբ 1917թհեղափոխությունների հետեւանքով մեր տարածաշրջանը լրիվ դուրս մնաց ռուսական ազդեցությունից եւ ծնվեց Հայաստանի առաջին Հանրապետությունը, հայտնվեցին Արեւմտյան տերությունները, բայց երբ սկսվեց ռուսական մակընթացությունը, նրանք լքեցին մեզ եւ հեռացան: Երբ քայքայվեց ԽՍՀՄ-ը, Ռուսաստանն ամբողջովին չլքեց տարածաշրջանը, սակայն ծնվեց Հայաստանի երրորդ հանրապետությունը: Ավելին, դրվեցին Արցախի անկախ պետականության ստեղծման հիմքերը: Ամեն ինչ բարեհաջող էր ընթանում, սակայն Արեւմուտքի լռելյայն համաձայնության պայմաններում տեղի ունեցավ Ադրբեջանի հաղթանակը: Չգիտեմ էլ ինչ կլիներ, եթե դարձյալ Ռուսաստանի միջամտությամբ չդադարեցվեին ռազմական գործողությունները: Իսկ արեւմուտքը դարձյալ լռում էր կամ նրա գործառույթները պաշտպանվող հայերի ու ագրեսոր ազերիների միջեւ հավասարության նշան դնելուց եւ հայանպաստ որոշ թռուցիկ հայտարարություններից այն կողմ չանցան:

Բոլորովին էլ բացառված չէ, որ վաղը նորից նույն սցենարը կրկնվի: Հետեւապես մեզանից այժմ պահանջվում է նոր իրողությունների սթափ վերլուծությամբ նուրբ դիվանագիտություն մշակել: Հարկավոր է ըմբռնել վերջապես, որ այլ տերությունների երաշխավորություններով անվտանգություն ստեղծելու փորձը հանգեցրեց մեր Արշակունյաց, Բագրատունյաց եւ Կիլիկիայի հզոր տերությունների անկմանը: Այսինքն՝ վերջապես ժամանակն է սերտել այս դասը: Կարծում եմ դրա կարիքն ունի նաեւ Ադրբեջանը, քանի որ որպես դաշնակից նրա կողքին կարող են չլինել ոչ Թուրքիան, ոչ Պակիստանը կամ մեկ ուրիշը եւ նա մենակ մնա մեզ հետ: Հարկավոր է հստակ գիտակցել, որ բոլորը գալու են եւ գնան եւ մենք մնալու ենք մեր հարեւանների հետ մենակ: Եթե հարեւաններով այս պարզ ճշմարտությունը հասկանանք, ապա դրանից միայն ու միայն երկուստեք կշահենք:

Աֆղանական իրադարձությունները մեզ հուշում են, սովորեցնում, որ նպատակասլաց ու միասնական գործելու դեպքում հաղթանակը վաղ թե ուշ լինելու է: Միայն թե հարկավոր է այժմ ձերբազատվել այն տխուր իրողությունից, որ մենք վախենում ենք մեր ուժից, որ մեզ վարժեցրել են ուրիշի ուժին, որ մենք ընտիր հպատակ ենք, խելոք կատարող եւ որ մենք հայտնագործություն ենք ուրիշի ձեռքի տակ: Հասկանանք վերջապես, որ ինչպես Սպարապետն էր ասում. «Հայ մարդ, հիմա ուրիշը Դո՞ւ ես: Քո ուրիշը Դո՛ւ ես... Մի հավատա, թե քո թշնամին քեզնից ուժեղ է: Թշնամուդ ուժեղացնողը քո վախն է, քո ցավն է, քո հիմարությունն է»:

**25.08-18.09.2021**

# Վախճանվել է Ռոլֆ Հոսֆելդը



Յոթանասուներեք տարեկանում վախճանվել է Յոհաննես Լեփսիուսի անվան տուն-թանգարանի՝ «Լեփսիուս Հաուսի» տնօրեն դոկտ. Ռոլֆ Հոսֆելդը, տեղեկացնում է Մուրիել Միրաք-Վայսբախը Գերմանիայից «Միրոր-Սփեքթեյթրում» հրատարակված իր հոդվածում:

Հոսֆելդն իր տասնամյա տնօրենության ընթացքում բազմաթիվ ակադեմիական ծրագրեր է իրականացրել, որոնք զգալիորեն բարձրացրել են գիտա-հետազոտական ինստիտուտի շրջանային եւ միջազգային հեղինակությունը: Աշխատանքները նպաստել են գլխավորապես հայ ժողովրդի, նրա պատմության եւ մշակույթի, ինչպես նաեւ ցեղասպանության վերաբերյալ գիտելիքների տարածմանը:

Հոսֆելդը ծնվել էր 1948-ին: Կրթությունը ստացել էր Ֆրանկֆուրտի եւ Բեռլինի համալսարաններում, որոնցում հատկապես քաղաքագիտության եւ փիլիսոփայության առարկաներում է խորացրել իր գիտելիքները: Դոկտորականի թեման եղել է գերմանացի բանաստեղծ եւ քննադատ Հայնրիխ Հայնեի աշխատությունները: Զբաղվել է լրագրությամբ, խմբագրական աշխատանքներով եւ կինոարվեստով: Պատրաստել է բազմաթիվ փաստագրական ֆիլմեր: 1982-ից եղել է գերմանացի Գրողների միության անդամ: Հրատարակել է 15 գիրք, որոնց մի մասը արժանացել է մրցանակների: Նրա «Կարլ Մարքսի կենսագրությունը» ճանաչվել է լավագույն քաղաքական գիրք (2010-ին): 2012-ին գիրք է գրել նաեւ գերմանացի սատիրիկ Կուրտ Տուչոլսկիի մասին: Նրա «Հայոց ցեղասպանության պատմությունը» լույս է տեսել 2005-ին եւ 2009-ին: 2018-ին դրա վերամշակված տարբերակը թարգմանվել է թուրքերենի, իսկ 2021-ին նաեւ հայերենի: 2005-ին նաեւ լույս է տեսել նրա «Նեմեսիս գործողությունը» հատորը: Համագործակցել է ՀԲԸՄ-ի, Պոտսդամի եւ Երեւանի պետհամալսարանների եւ Երեւանի ցեղասպանության թանգարանի հետ:

Հ.Ծ.

# Արզականի հերոսները

Սեպտեմբերի 4-ին, Չարենցավան համայնքի Արզական գյուղում տեղի ունեցավ Արցախյան երկրորդ պատերազմի հերոս **Աբրահամ Հովհաննիսյանի** հիշատակին նվիրված խաչքար-հուշաղբյուրի բացման արարողությունը:

Օրը պատահական չէր ընտրված. դա Աբրահամի ծննդյան օրն էր: Նա այդ օրը կդառնար 28 տարեկան:

Խաչքար-հուշաղբյուրը պատրաստվել եւ քանդակվել է Աբրահամի հորեղբոր որդու՝ Եփրեմ Հովհաննիսյանի կողմից:

Խաչքար-հուշաքարի ձախակողմյան հատվածում փորագրված են նաեւ Արզականի անմահ մյուս հերոսների անունները՝ փոխգնդապետ **Հայկազ Հովհաննիսյանի**, «Ես եմ» ծրագրով բանակ մեկնած **Նարեկ Մելքոնյանի**, կամավորական **Վաղինակ Հովհաննիսյանի**, ժամկետային զինծառայողներ **Սարո Եղիազարյանի** եւ **Էրիկ Գալստյանի** անունները, որոնք ոչ միայն հուշաքարին, այլ նաեւ համագյուղացիների սրտում են փորագրված:



Խաչքար-հուշաղբյուրի բացմանը ներկա էին Չարենցավան համայնքի ղեկավար՝ Հակոբ Շահգալդյանը, Արզականի վարչական տարածքի ղեկավար՝ Լիպարիտ Մարգարյանը, զինակից ընկերները, ծնողները, հարազատները եւ համագյուղացիները, որոնք մեծ ցավով եւ խորը կսկիծով էին հիշում արզականցի հերոս Աբրահամին:

Արզականի միջնակարգ դպրոցի աշակերտներն անտարբեր չէին մնացել եւ իրենց կարեկցանքի խոսքն ուղղեցին նրա ծնողներին՝ վերապրեցնելով նրա անքննելի սխրանքը:

Անչափ հուզիչ էր Աբրահամի մորաքրոջ, հորեղբոր եւ քեռու թոռների եւ երեխաների խոսքը, այն առավել ճանաչողական բնույթ էր կրում եւ բնութագրում էր հերոս Աբրահամի ամբողջական կերպարը, որը հավերժ կապրի բոլորի ներսում:

Եկե՛ք խորապես ճանաչենք մեր հերոսին:

Աբրահամը ծնվել էր 1993 թվականին, սեպտեմբերի 4-ին, Արզականում:

Բարի, անկեղծ, ընկերասեր, աշխատասեր, ընտանիքին եւ հայրենիքին նվիրված, խիզախ եւ անվեհեր երիտասարդը, բազում նպատակներն իր առջեւ դրած, առաջնային համարեց հայրենիքի պաշտպանությունը:

2020 թվականի սեպտեմբերի 11-ին նշանադրվել էր, իսկ սեպտեմբերի 27-ին մեկնել ռազմաճակատ...

Երկու օր անց՝ սեպտեմբերի 29-ին, ընտանիքը ստացել է ցավալի լուրը՝ Մարտակերտի դիրքերը պաշտպանելիս զոհվել է արկի պայթյունից...

«Հայրենիք» անունը իր սրտում դաջած՝ նա քայլեց մեր հերոսների ոտնահետքերով՝ առաջինն արձագանքելով հայրենիքի կանչին:

ԷԼԱԴԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Լուսանկարչական ցուցահանդես



2021 թ. սեպտեմբերի 13-ին, ժամը 18:30-ին Նարեկացի արվեստի միության սրահում տեղի կունենա «Գեղարվեստական լուսանկարչություն» խորագրով ցուցահանդեսի բացումը: Լուսանկարչական ցուցահանդեսում ներկայացված են Հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության եւ ՍՄԳ ամբիոնի ուսանողների եւ շրջանավարտների աշխատանքները: Ցուցահանդեսի կազմակերպիչ՝ Արմեն Ա. Խաչատրյան:

Ցուցահանդեսը նաեւ ներկայացվում է էլեկտրոնային եղանակով ՀՊՄՀ Google Sites հարթակում: Էլեկտրոնային ցուցահանդեսը դիտելու համար ներբեռնեք QR կոդը:

# Թեքեյան Մշակութային միությունը հայտարարում է մրցույթ

Հայաստանի Թեքեյան մշակութային միությունը հայտարարում է 2019-2020 թվականների ստեղծագործությունների մրցույթ: Այն կանցկացվի 6 անվանակարգում՝ գրականություն, կերպարվեստ, թատերական արվեստ, Հայագիտություն, Լրագրություն եւ Գեղարվեստական լուսանկարչություն:

Յուրաքանչյուր անվանակարգում հաղթողը կստանա դրամական պարգեւ՝ 1500 ԱՄՆ դոլար: Ստեղծագործությունները գնահատելու է մասնագիտական հեղինակավոր ժյուրին՝ նախապատվությունն առաջին հերթին տալով աշխատանքների որակին: Գեղարվեստական լուսանկարչություն եւ Կերպարվեստ անվանակարգերում ներկայացված ստեղծագործությունների համար կկազմակերպվի առանձին ցուցադրություն: Մրցույթին կարող են մասնակցել ինչպես Հայաստանից, այնպես էլ նրա սահմաններից դուրս՝ առանց տարիքային սահմանափակման:

Մրցույթին մասնակցել ցանկացողները 2019-2020 թվականներին իրենց հեղինակած աշխատանքները կարող են ներկայացնել օգոստոսի 20-ից մինչեւ սեպտեմբերի 20-ը Հայաստանի Թեքեյան մշակութային միության գրասենյակ ամեն օր՝ բացի շաբաթ եւ կիրակի օրերից՝ ժամը 11:00-16:00-ն (հասցե՝ Երեւան, Խանջյան 50, 2-րդ հարկ, հեռ.՝ 010 552 632, 010 520 783):

# Հայաստանում կյանքը թանկ է

Սպառողական ապրանքների գները աճել են 6,4, իսկ սննդամթերքը 9,3%-ով՝ ի տարբերություն միջին աշխատավարձի, որը ավելացել է 5,7%-ով:

Հայաստանում թանկացումների նոր ալիք է սկսվել, որն էլ վկայում են ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալները: Ընդ որում, թանկացել է ոչ միայն բանջարեղենը, կարագը, այլեւ՝ ալյուրը, մսամթերքը, ձուն եւ այլն: Թանկացել է նաեւ առաջին անհրաժեշտություն համարվող հացը: Հացի շուկայում գնաճը կազմել է 0,3%:

Ստացվում է, որ անցած տարի մարդիկ իրենց ցածր աշխատավարձով ավելի շատ ապրանք էին կարողանում գնել քան հիմա, երբ միջին աշխատավարձը 5,7%-ով աճել է: Իրավիճակը ավելի մտահոգիչ է թոշակառու եւ նպաստառու ընտանիքներում, որտեղ եկամտի աղբյուրը ոչ մի փոփոխություն չի կրել:

«Ստանում եմ թոշակ 65 հազար դրամ, եթե տղաս չօգնի՝ ապա չգիտեմ, թե ինչպես եմ ապրելու: Իմ ստացած թոշակով կարողանում եմ առաջին անհրաժեշտության սննդամթերքը գնել, իսկ կոմունալ վճարները տղաս է անում»,- ասում է 72-ամյա թոշակառուն:

Ինչպես նախկինում, այնպես էլ հիմա, տնտեսական աճից չի օգտվում հանրության մեծ մասը: Պետք է հիշենք, որ կառավարությունը խոստացել էր հինգ տարում վերացնել ծայրահեղ աղքատությունը, մինչդեռ ծայրահեղ աղքատների թիվը հետզհետե ավելանում է:

Այս օգոստոսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքների 15,1, իսկ այս տարվա հուլիս ամսվա համեմատ՝ 0,6% գնաճ, որոնց նպաստել են մսի, ձկան եւ ծովամթերքի, բանջարաեղենի շուկաներում գրանցված 0,7-5,1% գնաճները:



«Եթե անցած տարի կարողանում էի իմ աշխատավարձով տան համար անհրաժեշտ առեւտուրն անել, իսկ ամուսնուս աշխատավարձով կոմունալ վճարումներ անել ու մի քիչ էլ գումար խնայել, ապա այս տարի խնայողությունների մասին մոռացել ենք աշխատավարձը ինչպես «մտնում է» տուն, այդպես էլ դուրս է գալիս»,- ասում է 34-ամյա Մարինեն:

Վերջին ամիսներին գնաճը գրանցվել է դրամի արժեւորմանը զուգահեռ ապրանքների գները նվազելու փոխարեն ավելի են բարձրացել, որն էլ փաստում է Կենտրոնական բանկի գնաճը կառավարել չկարողանալը, իսկ Տնտեսական մրցակցության հանձնաժողովի գների իջեցման մասին հրապարակած տվյալները իրականությանը չեն համապատասխանում:

Ըստ Վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների, բանջարեղենի շուկայում մեկ տարվա ընթացքում արձանագրվել է 66,4%, իսկ մեկ ամսվա ընթացքում՝ 5,1% գնաճ: Ձկնամթերքի թանկացումը կազմել է 1,5%, իսկ մեկ տարվա ընթացքում այն թանկացել է 25,5%-ով: Կաթնամթերքի եւ ձվի շուկաներում գնաճը կազմել է 0,4%: Ձվի գինը մեկ տարվա ընթացքում աճել է 46,5%:

Բարձրացել են նաեւ սուրճի, թեյի եւ կակաոյի գները, իսկ շաքարավազի գնաճը մեկ տարվա ընթացքում կազմել է 36,2%:

Եթե այս ամենի ֆոնին հաշվի առնենք, որ նվազագույն աշխատավարձը 68 հազար դրամ է, իսկ միջին կենսաթոշակի չափը մոտ 43 հազար դրամ, ապա վստահ կարող ենք ասել, որ Հայաստանում կյանքը իսկապես թանկ է:

ՀԱՍՄԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան L տարի

Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան 0010, Եզնիկ Կողբացի 20/3

**e-mail:** azg@azg.am, azgdaily@gmail.com

**www.azg.am**

*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ

*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**

*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960
20/3 Yeznik Koghbatsi st.,
Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Եզնիկ Կողբացի 20/3: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 9.09.2021, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: